Ա. Ա. Մարտիրոսյան

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт литературы имени М. Абегяна

А. А. Мартиросян

МАРТИРОС КРЫМЕЦИ

Исследование и тексты

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

Ереван 1958

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

8(092)
Մ-39
15709
1494

Ա. Ա. Մարտիրոսյան

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ

Ուսումնասիրություն և բնագրեր

ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
Наук Арм. ССР

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 1958

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ։

15804

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ

ԺԷ դարի տաղասաց, երգիծաբան Մարտիրոս Ղրիմեցու ստեղծագործություններից հրատարակված են միայն մի քանիսը։ Առաջին անգամ Կ. Կոստանյանը 1892 թվականին իր «Նոր ժողովածուի» Ա պրակում տպագրում է նրա «Յաղագս քաղաքին Ամասիու» տաղը, իսկ 1903 թվականին Դ պրակում՝ «Գովեստ սուրբ Աստուածածնայ վանացն Անկիւրոյ» ոտանավորը։ Կոստանյանն իրեն մատչելի եղած նյութի սահմաններում ծանոթություն է տալիս Ղրիմեցու մասին՝ նրան տարբերակելով Մարտիրոս Խարբերդցուց և Մարտիրոս Խարասարցուց, բերում է իրեն հայտնի տաղերի ցանկը, իսկ երգիծական ստեղծագործություններին ծանոթ է միայն Տաշյանի Ցուցակից։

Կոստանյանի հրատարակած տաղերով չէր կարելի թեկուզ մոտավոր գաղափար կազմել Ղրիմեցու մասին, որովհետև դրանք չէին պարզում նրա ստեղծագործական ուրույն դեմքը։ Այսպիսով Մարտիրոս Ղրիմեցին մյուս Մարտիրոսների շարքի մեջ մնում է աննկատ։

1923 թվականին «Նաւասարդ» ամսագրում Մ. Պոտուրյանը հրատարակում է Ղրիմեցուց վեց երգիծական տաղեր «Հին անծանոթ երգիծաբան մը» ընդհանուր խորագրի տակ, փոքրիկ առաջաբանով։ «Իզուր,— գրում է Պոտուրյանը,— 60-է աւելի տաղարաններու մէջ տող մը կը փնտրէի, որ ժպիտ մը ծաթեցնէր դէմքիս վրայ, գրող մը վերջապէս, որ այսօրուան Օտեանին պէս բան մը ըլլար։ Ստեփաննոս Թոխաթեցին իր ճանճերու և լուերու վրայ գրած քերթուածներով կուգար իմ մեջ հարցում մը շինելու,— արդյոք ուրիշներ ալ այս սեռէն քանի մը քերթուած չեն թողած։ Ով կը գուշակէր, թէ քանի մը տարի ետք այդ Թոխաթեցիին աշակերտին պիտի հանդի-

ոլէ, բոլորովին նոր դէմքի մը և իսկատիպ գրողի մը, Մարտիրոս Ղրիմեցիին, վարդապետ՝ իր եկեղեցական կարգով, որուն ազգային ջոջերն էին իր ժամանակի տէրտէրները»[1]:

Պոտուրյանը ուշադրություն է դարձնում հատկապես Ղրիմեցու ստեղծագործությունների բնույթի և նոր բովանդակության վրա.

«Իմ ցանկած տաղարաններուս մէջ չէի հանդիպած այդ ոտանաւորներուն, որոնք իրենց բոլորովին նոր բովանդակութիւնով ուշադրութիւնս գրաւեցին: Ոչ տէր կերգէր ան, ոչ երկինքը, ոչ իր ժամանակի աղէտները կողբար և ոչ ալ խրատականներ կը հիւսէր: Իր նպատակն էր աս ու ան կծել, ի հարկին իր աստիճանին վայել ջիջոցներ (քիֆիրներ) յօրինել և այսպէս ընթերցողները ծիծաղեցնել»[2]:

Ահա Պոտուրյանի արտահայտած կարծիքը գրեթե ամբողջությամբ: Չնայած նա բարձր է գնահատում Ղրիմեցուն իբրև «բոլորովին նոր դէմք մը և իսկատիպ գրող մը», բայց նրա գրչի տակ Ղրիմեցին ներկայացվել է որպես սոսկ մի զավեշտագիր: Սակայն այդ ճիշտ չէ:

Հետագայում 1924—30 թվականներին Պոտուրյանը Ղրիմեցու նույն տաղերը, երկու տաղ ևս ավելացնելով՝ առանձին փոքրիկ գրքույկով հրատարակում է Բուխարեստում «Մարտիրոս Ղրիմեցին և իր քերթուածները» խորագրի տակ:

Այս հրատարակությամբ ևս չի կարող ամբողջական պատկերացում տալ Ղրիմեցու մասին:

1929—30 թվականներին «Բազմավէպ» ամսագրում Հ. Քյուրտյանը «Նիւթեր Պոլսահայոց պատմութեան համար» շարքի տակ հրատարակում է Ղրիմեցուց հինգ տաղ՝ փոքրիկ ծանոթությամբ: Նա տեղյակ չէ Պոտուրյանի հրատարակությանը և տալով միևնույն բնագրերը կարծում է, թե առաջին անգամն է հրապարակում:

Քյուրտյանը Մարտիրոս Ղրիմեցու՝ «Բազմարդիւն և բազմաշխատ նշանաւոր ԺԷ դարու հայ կրօնականին» տաղերը նկատում է իբրև պատմական աղբյուր, «որմէ պիտի կարենայ օգտուիլ Պոլսահայոց պատմագիրը»[3]:

Պետք է ասել, որ Քյուրտյանի մոտ եղած ձեռագիրն առավել ևս անհաջող է և պակասավոր:

---

[1] «Նաւասարդ», 1923, էջ 72:

[2] Նույն տեղում:

[3] «Բազմավէպ», 1929, էջ 263:

Ղրիմեցու ստեղծագործություններից ուրիշ հրատարակություն մեզ հայտնի չէ, եթե չհաշվենք «Արձագանքում» 1897 թվականին տպագրված մի տաղ և Դյուլորեի կողմից «Կարգ և թիւ թագաւորաց հայոց» ժամանակագրության վերջին մասի հրատարակությունը ֆրանսերեն թարգմանության հետ միասին:

Թվարկած բոլոր հրատարակությունները, որոնք ընդգրկում են ընդամենը ինը տաղ, շատ քիչ են, միասեռ, և չեն կարող ամբողջական պատկերացում տալ Մարտիրոս Ղրիմեցու մասին՝ իբրև միջնադարյան տաղասացի և երգիծաբանի:

Բացի այդ, հենց եղած հրատարակություններն էլ, թեկուզ ավելի նեղ շրջանի ընթերցող հասարակության համար, անմատչելի են և դժվարագյուտ:

Այնպես որ, չնայած որոշ քայլերի, Ղրիմեցին նորից մնաց ստվերի տակ և մոռացության տրվեց: Աբեղյանն իր «Հայ հին գրականության պատմության» 1-ին հատորում նրան մի անգամ է հիշել, այն էլ տողատակի ծանոթագրության մեջ:

Միջնադարյան տաղասացների հրատարակումը մեր հին շրջանի գրականության պատմության համար ինքնին կարևոր և առաջնահերթ խնդիր է:

Աբեղյանը խոսելով ԺԷ դարից սկսվող միջնադարյան հայ տաղերգության մասին, հայտնում է իր ցավը. «Դժբախտաբար, այդ բանաստեղծներից շատ բան չի մնացած, շատ բան էլ դեռ ձեռագրերի մեջ է և եթե տպագրված են՝ ցրիվ են, ուստի այժմ իսկապես չենք կարող մեր բանաստեղծության զարգացման ճիշտ պատկերը տալ»[1]:

Այո, բանաստեղծության զարգացման ճիշտ պատկերը տալու, այսինքն հայ հին գրականության, մատենագրության գիտական պատմություն ստեղծելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ներկայացնել գրական առանձին դեմքերը՝ ցրիվ և ձեռագրային նյութերն ի մի բերելով և հրատարակելով, մի բան, որ դեռ շատ քիչ է արված:

Ղրիմեցու ներկա հրատարակությունն այդ ուղղությամբ կատարված որոշ քայլ է:

---

[1] Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հ. Բ, Երևան, 1946, էջ 393:

Դա ավելի մեծ նշանակություն է ստանում մի այլ առումով: Հայ ժողովրդի պատմության մեջ ԺԶ դարի վերջը և ԺԷ դարը ամենից ավելի քիչ է ուսումնասիրված: Դա հիմք է ծառայել այդ շրջանը որակելու իբրև հայ գրականության և մշակույթի անկում: Այդ դարաշրջանի հասարակական, գրական և մշակութային շարժման պատկերը մեզ համար պարզ կդառնա, երբ այն բավականաչափ ուսումնասիրվի, երբ ձեռագրային փոշիներից մաքրվեն և հրապարակ գան ժամանակն արտացոլող պատմական և գրական հուշարձանները, որոնք հազվագյուտ չեն:

Այդ տեսակետից կարևոր արժեք է ներկայացնում Մարտիրոս Ղրիմեցին, ԺԷ դարի նշանավոր գործիչներից մեկը, որն իր ստեղծագործության մեջ ճշմարտացի արտացոլել է ժամանակի հասարակական կյանքն ու բարքերը:

Ա

Մարտիրոս Ղրիմեցին կամ Քեֆեցի Թաթար[1] Մարտիրոսը ծնվել է Կաֆայում (այժմ Թեոդոսիա): Նրա ծննդյան ստույգ թվականն հայտնի չէ: Պոտուրյանը ենթադրում է «1605 թվի առեններըը», բայց դա քիչ է հավանական:

Խաչատուր Կաֆայեցին իր տարեգրության մեջ հիշատակում է Մարտիրոս Ղրիմեցու այցելությունը Կաֆա՝ իբրև պատրիարք: Այդտեղ նա Ղրիմեցուն անվանելով բարետես, հեզահոգի, «թագն աշխարհի», ավելացնում է.

Սայ է Հոնաց յաշխարհի,
Ի դրանէ Սուրբ Նշանի,
Պարծանքն է Խրիմի
Եւ վարդապետն Կաֆացի:

[1] Ղրիմեցուն Թաթար Մարտիրոս են անվանել, որովհետև ծնվել է Կաֆայում, այսինքն՝ թաթարների միջավայրում, բայց, հավանական է, նաև փոթորկալից, բուռն ու անհանդուրժող բնավորության պատճառով: Այդ ենթադրության համար որոշ հիմք է տալիս իր մի նամակում գործածված հետևյալ արտահայտությունը. «Զինչ առնեմ, կարի և դիւր էր ինձ զթաթարութիւնն ի գործ ածել և զչափ անձինն գիտացուցանել» («Սիոն», 1932, էջ 252բ—254ա),—գրում է Եղիազարին, պատմելով թե ինչպես ինչ-որ մեկը իրեն վիրավորել է և ինքը չի պատասխանել, չնայած որ կարող էր իր թաթարությունը (բռնկվելը, չհանդուրժելը) գործ դնել և նրան ցույց տալ իր անձի չափը: Ղրիմեցին, իմիջիայլոց, իր նամակներում երբեմն իրեն անվանում է Մարտիրոս Կազարացի, հայտնի է նաև Մարտիրոս Կաֆայեցի ձևով:

Տղայ գոլով մանուկ բարի
Արժան լինի խորին ծերի[1]:

Տարեգրության մեջ այդ հիշատակությունն ընկնում է 1657 թվականին[2], ուրեմն այդ ժամանակ Մարտիրոսը դեռևս երիտասարդ էր («Տղայ գոլով մանուկ բարի»): Բայց եթե ընդունենք, որ նա ծնվել է 1605 թվականին, ապա 1657 թվականին կլիներ 52 տարեկան, իսկ 52 տարեկան մարդը չի կարող երիտասարդ համարվել[3]: Սակայն, մյուս կողմից, վարդապետական գավազան ստանալու համար անհրաժեշտ է ոչ միայն բավարար գիտելիքներ, այլև որոշ հասուն տարիք: 1652 թվականին Երուսաղեմի ժողովի ընդունած 13 կանոններից ութերորդը պարտավորեցնում է, որ մեծ վարդապետը որևէ մեկին վարդապետական իշխանություն չտա, եթե նա չլինի «կատարեալ ուսմամբ և առաքինութեամբ և հասակաւ և աստուածային երկիւղիւ և վկայեալ յամենեցունց»[4]: Եթե նկատի ունենանք, որ Մարտիրոսն այդ շրջանում արդեն բավականաչափ ճանաչված ու կշիռ ունեցող գործիչ էր և արժանացել էր վարդապետական կոչման, ապա 1657 թվականին՝ Խաչատուր Կաֆայեցու հիշատակության տարին, նա կլիներ առնվազն 30—35 տարեկան: Այսպիսով, նրա ծնունդն ընկնում է 1620-ական թվականներին:

Ղրիմեցու մի ինքնագիր ձեռագրի հիշատակարանից (1651 թ.) հայտնի է դառնում նրա ծնողների անունը՝ Գրիգոր և Խաթուն: Նա հենց այդտեղ իրեն համարում է Ստեփանոս քահանայի և Աստվածատուր Տարոնեցու աշակերտ:

[1] Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. Ա, Երևան, 1951, էջ 228:

[2] Այդ թիվը հավաստի է: Երեմիա Քյոմուրճյանը նշում է, որ նա Կաֆա է ճամփորդում 1657 թվականի օգոստոսի 21-ին: Տես Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի, Երուսաղեմ, 1939, էջ 263:

[3] Իմիջիայլոց երբ նա 1659 թվականին պաշտոնապես հռչակվեց Կ. Պոլսի պատրիարք, դեռևս եպիսկոպոս չէր, չնայած մինչ այդ բավական նշանավոր դեմք էր և վարել էր բարձր պաշտոններ, ուրեմն դա պիտի բացատրել միայն տարիքով, իսկ եպիսկոպոսական աստիճանի համար, եթե բացառիկ դեպքեր չկան, պահանջվում է 50 տարեկան հասակ: Այդ մասին տես Հ. Հ. Թոփճյան, Ցուցակ ձեռագրաց Թաշիկ վարդապետի Դադեան, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 45:

[4] Պատմութիւն Առաքել Դավրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 332:

Ստեփանոս քահանան նշանավոր տաղասաց Ստեփանոս երեց Թոխաթեցին է, որը 1604—5 թվականներին գաղթում է Ղրիմ և 1616—20 թվականներին Սուրբ Խաչի վանքում պարապում ուսուցչությամբ։ Պոտուրյանը կարծում է, որ Մարտիրոսն այդ շրջանում է աշակերտել Ստեփանոս Թոխաթեցուն։ Ճիշտ չէ, որովհետև այդ թվականներին Ղրիմեցին հազիվ մեկ-երկու տարեկան լիներ։ Բայց նրա առաջին ուսումնառությունը հավանաբար եղել է նույն Սուրբ Նշանի վանքում, եթե Խաչատուր Կաֆայեցու «ի դրանէ Սուրբ Նշանի» արտահայտությունից հասկանանք, որ նա Սուրբ Նշանի դռանն է մեծացել, աշակերտել և ոչ այն մտքով, որ այնտեղ է իջեւանել Ղրիմ գնալիս։

Սուրբ Նշանի կամ Սուրբ Խաչի վանքը, որը հիմնվել է ԺԴ դարի առաջին կեսին, ԺԷ դարում ծաղկյալ վիճակի մեջ էր և համարվում էր Ղրիմի հայության կրթական ու կրոնական կենտրոնը։ Հակոբ վարդապետ Կաֆայեցին վանքին նվիրված մի քերթվածի մեջ գրում է.

Արտաքոյ ներքոյ պատեալ ամրական
Սրբատաշ քարիւք են կամարական.
Մեծ կաթուղիկէ, տուն արքայական,
Ճեմեալ ճեմարան, ճարակ Սուրբ Նշան[1]։

Հենց այդ ճեմարանում պետք է իր նախնական կրթությունը ստացած լինի Մարտիրոս Ղրիմեցին։ Հետո նա տեղափոխվել է Թոխաթ և աշակերտել Ստեփանոս քահանային։

Ստեփանոս Թոխաթեցին երկար ժամանակ, մինչև խոր ծերություն, զբաղվել է ուսուցչությամբ։ Այդ եռանդուն քահանան իր աշակերտներին հաղորդել է բավական խոր գիտելիքներ։ Նա իր վաղամեռ կրտսեր եղբորը, որն աշակերտել է իրեն, համեմատում է Պորփյուրի, Արիստոտելի, Սահակի ու Մեսրոպի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթի հետ։ Դա ինքնին արտահայտում է Ստեփանոսի

¹ Ոտանավորն ունի հետևյալ սկզբնատառերով տողակապը. «Յակոբ վարդապետի է Կաֆայեցւոյ, որ պատմէ զշինութենէ և զծախութենէ վանացս», գրված է 1691 թվականին, ուրեմն գրեթե ժամանակակից է Մարտիրոս Ղրիմեցուն։ Տես Մինաս Բժշկյանց, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 326—327, որից արտատպել է Վ. Քուշներյանը, «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու հայոց», Վենետիկ, 1895, էջ 53։

նախասիրությունները։ Սակայն ընդհանուր առմամբ կրթությունը կրոնական բնույթի էր։ Եղբորը նվիրած ողբի մեջ գրում է.

Սա ժողովէր զմանկունս ի մի
Զուշիմ տղայք և աշակերտքնի.
Ուսուցանէր զվարս բարի,
Զգիրք և զՍաղմոս, զՅիսուս որդի[1]։

Աստվածաշունչը, Սաղմոսն ու Հիսուս որդին էին հիմնական դասագրքերը։

Ստեփանոս Թոխաթեցին ոչ միայն ընդհանուր և կրոնական գիտելիքներ է հաղորդել իր սանին, այլև առաջին անգամ նա է Ղրիմեցու մեջ արթնացրել երգիծանքի գրական ճաշակը։

Հավանաբար 1645 թվականից, երբ Աստվածատուր Տարոնեցին բարձրանում է Երուսաղեմի պատրիարքական աթոռ, Մարտիրոսը սկսում է աշակերտել նրան։ Համենայն դեպս, Ղրիմեցու նույն ինքնագիր հիշատակարանից հայտնի է, որ նա 1651 թվականին գտնվում էր Երուսաղեմում։ Նա այդտեղ էլ ավարտում է իր ուսումնառության շրջանը և Աստվածատուր պատրիարքից ստանում վարդապետի աստիճան։

Աստվածատուր Տարոնեցին ԺԷ դարի նշանավոր գործիչներից մեկն էր և 1645 թվականից որոշ ընդմիջումներով, մինչև իր մահը՝ 1671 թվականը, եղել է Երուսաղեմի պատրիարք։ Նրա մահվան առթիվ Մարտիրոս Ղրիմեցին՝ երախտագետ աշակերտը, գրում է մի երկարաշունչ գանձ և տաղ՝ «Մարտիրոս վարդապետի է բանս աշակերտի սրբոյս» տողակապերի վերտառությամբ, ուր ցավով ակա-

¹ Տես «Ոտանաւոր բանս ասացեալ ի Ստեփանոս Թոխաթեցի երիցուէ ի վերայ վաղամեռիկ եղբօր և հարազատին իւրոյ տէր Յակոբ արքայ-նումեց քաջասիրտ և բանիբուն քահանայի տարաժամ փոխմանելոյ ի տիս մանկութեան», Երևանի Պետական Մատենադարան, Ձեռ. № 2939, էջ 466ա—467բ։ Տաղասացի եղբայրը մեռել է 1601 թվականին 35 տարեկան հասակում, ինչպես տաղի մեջ է ասված, նա ուսուցիչ է եղել և սկզբում աշակերտած իր մեծ եղբորը՝ Ստեփանոսին։ Եթե նա 20—25 տարեկան աշակերտած լինի, նշանակում է Ստեփանոսը ուսուցչությամբ պարապել է 1580-ական թվականներից։ Այս տաղը Ակինյանին հայտնի է միայն Նորայրի ցուցակից, Տես Ն. Ակինյան, Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 133։

ղում է իր ուսուցչի անփոխարինելի կորուստը։ Նրան անվանում է ընտիր և անբաղդատ սոփեստ, ռաբուն և քարոզ ճարտար, իմաստության ծով, պայծառ ջահ, որը «չախեալ անկաւ յաշտանակէ» և իր աշակերտներին թողեց խավարի մեջ.

Շնորհիւ հոգւոյն իմաստիւք լի էր
Զբանս սուրբ գրոց աստուածաբանէր.
Նրբատեսակ ճառից մեկնող էր
Զխրթնածածուկս բացայայտէր[1]։

«Ուսմամբ բազմաւ յոյժ գերազանցեալ» Տարոնեցին բանաստեղծությամբ, կամ գրական և ստեղծագործական աշխատանքով զբաղվողներին, վիպողներին խրախուսում և հովանավորում էր։

Նրա մահով լռում է վերծանողների ուսմունքը և վիպողները վտարանդի են դառնում.

Վարժապետիս այս երջանկի
Վախճան հասեալ յաստեաց փոխի.
Վերծանողաց ուսմունք լռի
Վիպողքն եղեն վտարանդի[2]։

Տարոնեցին, ինչպես երևում է, իր աշակերտների հետ պարապում էր նաև երաժշտություն.

Ո՜հ թէ որքան էր նա զգոյշ
Ուսուցանող երգոց անուշ.
Ունայնացեալ մնացաք ապուշ,
Որպէս թմրեալ անկաք պեյուշ[3]։

Ունենալով այդպիսի լավագույն և փորձված ուսուցիչներ, Ղրիմեցին ստանում է լայն ու բազմակողմանի կրթություն, որն արտահայտվում է նրա ստեղծագործության մեջ։

[1] Երևանի Պետական Մատենադարան, ձեռագիր № 1495, էջ 126բ։

[2] Ձեռագիր № 1495, էջ 128ա, Թերևս դա պետք է հասկանալ ոչ ուղղակի մտքով, ուզում է ասել, որ նա մեծ նեցուկ էր վիպողներին և վերծանողներին։

[3] Նույն տեղում, էջ 128ա։

Աստվածատուր պատրիարքը մեծ համարում է ունեցել իր աշակերտի մասին։ Նրա պատրիարքական տարիները համընկնում են հունական համայնքի հետ տեղի ունեցած վեճերի, ինչպես նաև՝ ներքին խարդավանքների և Երուսաղեմում ու Կոստանդնուպոլսում պատրիարքական աթոռի համար մղվող անազնիվ, վնասակար պայքարի մի շրջանի հետ, որը բավական երկար տևեց՝ անտեղի խլելով հսկայական ջանք ու եռանդ։ Այդ պայքարում Աստվածատուր պատրիարքը հաշտարար դեր էր կատարում և աշխատում էր վերջ տալ հայ ժողովրդի քաղաքական և եկեղեցական միասնությունը ջլատող երկպառակությանը, որի ընթացքում Մարտիրոս Ղրիմեցին նրա հզոր և կարող գործակիցը դարձավ։

Դեռ Գրիգոր Պարոնտերի օրով Երուսաղեմի հունական համայնքը վեճեր էր սկսել Սուրբ Հակոբի հայկական միաբանության հետ։ Աստվածատուր Տարոնեցու պատրիարքական աթոռ բարձրանալուց հետո, օգտվելով նրա մեղմ և խաղաղասեր բնավորությունից, նրանք թշնամանքն ու հակառակությունը սաստկացրին և որոշակիորեն դիմեցին գործնական քայլերի՝ ձգտելով խլել Երուսաղեմի հայկական և հաբեշական վանքերը, որոնք, նույնպես, գտնվում էին հայոց իրավասության տակ։

Արդեն մի անգամ, 1655 թվականի երկրորդ կեսին, նրանք հաբեշական վիճակներին տիրանալու իրավունք էին ձեռք բերել։ Բայց Մարտիրոս Ղրիմեցու և Եղիազար Այնթափցու ջանքերով 1656 թվականի սեպտեմբերին ետ է վերցվում այդ իրավունքը։ Սակայն նորից, որոշ ժամանակ անց, կաշառելով մեծ վեզիրին, հույները ստանում են ուղղակի Ս. Հակոբը սեփականելու հրովարտակ և 1657 թվականի մայիսի 17-ին խլում վանքը։ Սկսվում է նրանց կողմից մի դաժան հալածանք Երուսաղեմի հայ բնակչության դեմ[1]։

[1] Չամչյանը գրում է. «Նա եղև տրտմութիւն և սուգ մեծ հայոց եղելոց անդ և ուխտաւորաց եկելոց: Եւ տեսեալ յունաց զնուաճիլն նոցուն յոխորտացին ի վերայ նոցա և իբր ընդ անարգս վարէին ընդ նոսա. և ծաղր առնէին զիշխանութիւն պատրիարգի նոցա», Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 670։

Վարդան Բաղիշեցին ևս իր ժամանակագրության մեջ ցավով է նշում Ս. Հակոբի հափշտակումը, որ բերում է անհնարին տրտմություն «բոլոր ազգիս և ամենայն հասակի. մինչ զի վիմեղէն սրտիցն անգամ շարժիլ յողբս և յարտասուս», որովհետև «բարձաւ թագաւորութիւն մեր հոգևոր», Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 397—398։

Երուսաղեմը ժէ դարում հայ գաղթականության կարևոր կենտրոններից մեկն էր, որը գտնվում էր բավական հարուստ և բարեկարգ վիճակում: Սուրբ Հակոբի նշանավոր վանքը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող արևմտյան հայության համար, կարելի է ասել, կատարում էր միևնույն դերը, ինչ Էջմիածինը՝ ամբողջ Հայաստանի և հայության համար: Նա ընդունում էր հայ ուխտավորների՝ երկրի զանազան վայրերից և դառնում այսպիսով մի օղակող, դեպի իրեն ձգող հանգույց: Սփյուռքի հայությունը նրա մեջ տեսնում էր երկրորդ կենտրոն, գլուխ, և կրոնական ու ազգային գիտակցությամբ համախմբվում նրա շուրջը: Դա, անշուշտ, մեծապես նպաստում էր ազգային ինքնապահպանության գործին, մանավանդ որ հայ ժողովուրդը չուներ պետականություն: Ս. Հակոբը գտնվում էր Երուսաղեմում, և նրա միջոցով թուրքական մոլեռանդ տիրապետության տակ ճնշվող հայ ժողովուրդն իրեն զգում էր կապված քրիստոնյա աշխարհի հետ և չէր ապրում բացարձակ լքումն: Ահա թե ինչու Սուրբ Հակոբի կորուստը չափազանց ծանր էր և ոչ թե սոսկ կրոնական, այլ ուղղակի համազգային շահերի տեսակետից՝ անհանդուրժելի:

Սակայն քչերն էին գիտակցում այդ և հոգ տանում համազգային աղետը կանխելու համար: Աստվածատուր Տարոնեցին ձեռներեց չէր, Եղիազար Այնթափցուն, որ այդ ժամանակ նշանակված էր Երուսաղեմի հայոց պատրիարք, հույները հաջողել էին ամբաստանել պետության առաջ և ճանաչել տալ հանցապարտ, իսկ Կ. Պոլսի պատրիարքարանը զբաղված էր ներքին աթոռակալական պայքարով: Երուսաղեմի խնդրով հետևողականորեն զբաղվում են միայն մի փոքր խումբ գործիչներ, Մարտիրոս Ղրիմեցու գլխավորությամբ:

Ղրիմեցին հսկայական ջանքեր է գործադրում, ենթարկվում է փորձությունների, կրում անձնական զրկանքներ, բայց, վերջիվերջո, հաջողում է նախ՝ հանցապարտությունից ազատել Եղիազար Այնթափցուն, ապա՝ միասնական ջանքերով 1659 թվականի վերջերին ձեռք բերել Ս. Հակոբը ետ ստանալու հրովարտակ:

1659 թվականի մայիսի 25-ին Մարտիրոս Ղրիմեցին նշանակվում է Կ. Պոլսի պատրիարք՝ տեղակալների իշխանության շրջանում կատարված բազմաթիվ ապօրինությունները և անկարգությունները վերացնելու համար:

Այստեղ ևս նա հանդես է գալիս իբրև ձեռներեց գործիչ: Անձանձիր գործունեությամբ ուղղում է «բազում վատթարութիւնս, որ ի խանգարմանէ աշխարհականաց եղեալ էր ի մեծահանդէս քաղաքն»: Երեմիան համառոտ թվում է այն, ինչ նա արել է պատրիարքական տարիներին. «Նախ որ զրկեալք էին զմիմեանս՝ իրաւունս արար նոցա, և որք արեամբ չափ ոխս պահէին՝ հաշտեցոյց, և որք ծառայք կալեալ շնային՝ թողուլ ետ և կարգել հրամայեաց»[1]:

Նա շրջում է Կ. Պոլսի վեց եկեղեցիները և ժողովրդի մեջ առաջացած վեճերը լուծում. «Զի և ոչ նստաւ ի մի եկեղեցի, այլ նախ ի Ս. Նիկողոս շաբաթ մի, և տեսանէր զամենայն, և ապա՝ Աստուածածին, նոյնպէս և յայլսն»[2]: Հայտնի է, որ հայ հոգևորականները հաճախ վարում էին իրենց ժողովրդի ոչ միայն հոգևոր, այլև քաղաքացիական գործերը: Դատին (դատավորը) իր իրավունքները վստահում է Մարտիրոսին. «Եւ որքան դատաստան լինէր՝ պատրիարքին հրամայէր և դատին, վասն որոյ և ոչ երթային առ նա. և գային յամենայն կողմանց ի դատ ի բազում ամաց. և տեսանէր զամենայն անինչ և անզրամ, և զօրինազանցսն բնաւ արգիլէր, որ իբր զխող ի տիղմն հալէին»[3]: Նա ստիպում է վեց եկեղեցիներին լսելու իրեն և կատարելու իր պատվերները. «Եւ այնքն հնազանդեալ կամաւ և յակամայ վասն յորդորանացն և անաչառութեանն»[4]:

Ապա Երեմիան պատմում է մի ապօրինի ամուսնության մասին, որը թույլ չի տալիս Մարտիրոս պատրիարքը, չնայած օդաբաշիների և ենիչերիների միջամտության: Երբ նրանք խնդրում են, որ Մարտիրոսը լուռ մնա, Ղրիմեցին պատասխանում է. «Բան և գործ մեր այդ է առաւել, չարեացն չար ասել և բարեացն՝ բարի»[5]:

«Չարեացն չար և բարեացն բարի» — այդ սկզբունքը արտահայտիչ կերպով դրսևորվել է ոչ միայն նրա անհանգիստ կյանքի, այլև գրական ստեղծագործության մեջ:

Մարտիրոս Ղրիմեցու ջանքերով պատրիարքարանի վրայից վերցվում են այն մեծ ու ծանր պարտքերը, որոնք կուտակվել էին Թովմաս Բերիացու գործի կապակցությամբ, իսկ պատրիարքարանի

[1] Օրագրութիւն, Երուսաղեմ, 1939, էջ 330:
[2] Նույն տեղում, էջ 331:
[3] Նույն տեղում, էջ 330:
[4] Նույն տեղում, էջ 331:
[5] Նույն տեղում, էջ 333:

տուրքը, որ Բերիացին իշխանության հասնելու համար ստորաբար պետության առաջ բարձրացրել էր 400 հազարի, իջեցվում է նախկին չափին։

Մարտիրոսի պատրիարքության շրջանում՝ 1660 թվականի ապրիլի 7-ին Ղալաթիայում, իսկ հուլիսին[1] Կ. Պոլսի այլ թաղամասերում բռնկվում է մի սոսկալի հրդեհ, որ ճարակում է 30 հազար տուն և երեք հազար մարդ։ Այրվում են և հայոց երկու եկեղեցիները[2]։ Ղրիմեցին կազմակերպում է աղետյալների օգնության գործը, փրկում և պատսպարում անօթևան ու անտերունչ մարդկանց։ Այդ բանի համար իբրև երախտագիտություն նրա անունը երկար հիշատակվել է պատարագի ժամանակ։ Երուսաղեմի № 438 ձեռագրում, որտեղ կա Կ. Պոլսի պատրիարքական դավաղանագիրը, Մարտիրոսի անվան տակ գրված է.

«Մարտիրոս վարդապետ Քէֆեցի, զոր յիշէին ի պատարագին ի Սուրբ Աստուածածին եկեղեցին մինչ յայրիլն, որոյ ի մեծ յան-դունին պատճառ եղեալ էր ազատմանն բազում փողս մախելով ողորմութեամբ աստուծոյ»[3]։

Բայց Մարտիրոսը երկար չի մնում պատրիարքական աթոռին։ 1660 թվականի նոյեմբերին Ղազար Սեբաստացին ներքին խարդավանքով և կաշառատվությամբ նրա ձեռքից խլում է պատրիարքությունը[4]։

Այնուհետև Մարտիրոսը նշանակվում է Անատոլիայի նվիրակ և ճանապարհվում 1661 թվականի հունվարին։ Այդտեղից նա անց-

[1] Հրդեհը, ըստ ականատես Մեղրեցու, եղել է 1660 թվականի հուլիսի 21-ին. «Յամսեանն Յուլիսի ի քսաներորդի և նախկնորդի ըստ յունական տումարի»: Տես Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ: 1660 թվականի հուլիսի 21-ը հիրավի ընկնում է շաբաթ օր, բայց Երեմիան հրդեհի օրը արձանագրում է հուլիսի 14-ը: Երեմիան նույնպես ականատես է, տես, Օրագրութիւն, էջ 356:

[2] Հրդեհի մասին Երեմիան մի Մաշտոցի հիշատակարանում գրում է. «Եւ ո՞վ կարիցէ ի գիր անել զաղէտն սարսափելի որ եղև յաւուրն այնմիկ կորուստ տանց եւ ապրանից և ամենայն շինուց. եւ չքաւորեցան համայն ազինք եւ միանգամայն բնակիչք բազում արանց համասեռից ի հուր կիզելոց», Երեմիա Քոմուրճյան, Ստամպօլոյ պատմութիւն, Վիեննա, 1913, էջ 158:

[3] Տես Մ. Աղավնունի. Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 269:

[4] Տես Օրագրութիւն, էջ 363—364:

նում է Էջմիածին և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից Ղրիմի վիճակի համար ձեռնադրվում եպիսկոպոս։

Նա հիշվում է իբրև Ղրիմի առաջնորդ մինչև 1664 թվականը, երբ մի նոր դայթակղություն, որ սպառնում էր հայ ժողովրդի համար աղետաբեր լինել, նորից նրան պայքարի է նետում։

Դա Եղիազար Այնթափցու հղացած հակաթոռ կաթողիկոսության խնդիրն էր։

Այնթափցին Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ամբողջ հայկական շրջանների համար ուզում է ստեղծել Էջմիածնից անջատ մի կաթողիկոսություն։ Դրա համար նա ուներ և՛ դրամ և՛ ձեռներեցություն, հանգամանքները էլ խիստ նպաստավոր էին։ Նա կամենում էր չարաշահել Էջմիածնի նկատմամբ ժողովրդի որոշ դժգոհությունը, որ հատկապես ուժեղացել էր նվիրակների անթույլատրելի վարքագծի հետևանքով։ Էջմիածինը ցանկանալով ազատվել պարտքերից՝ նվիրակներով ողողում էր Թուրքիայի հայ թեմերը։ Նրանք հաճախ շահատակում էին և միջամտում տեղի գործերին՝ առաջացնելով աղմուկ և խառնակություն։ Իսկ Այնթափցու համար կառավարության հետ լեզու գտնելը հեշտ էր. նախ՝ դրամ և հետո՝ ամեն դեպքում Բարձրագույն դռան համար օգտակար էր Թուրքիայի հայ եկեղեցին անջատել Էջմիածնից, որը գտնվում էր թշնամի պարսկական տիրապետության տակ։ Կարելի էր պատրվակել, թե այդպիսով երկիրը զերծ կպահվի օտարերկրյա միջամտությունից։

Եղիազարն այս ամենը հաշվի է առնում և երկար ժամանակ նախապատրաստվում այդ դավադիր գործին։ Կիլիկիայի Խաչատուր կաթողիկոսի հետ 1663 թվականին օծվելու համար նա՛ համաձայնություն է գալիս, իսկ 1664 թվականին արդեն Բերիայի (Հալեպի) Ս. Քառասունք եկեղեցու մեջ նույն Խաչատուրի կողմից օծվում է կաթողիկոս և օրհնության կոնդակ հղում ամբողջ արևմտահայ թեմերին։ Դա դառնում է դավադիրների ձեռքով համարձակորեն նետված մի տեսակ մարտահրավեր, որը դուռ է բաց անում անասելի հուզումների։ Ոմանք ողջունում են, ոմանք էլ չեն ուզում ընդունել ինքնակոչ կաթողիկոսի իշխանությունը։ Սկսվում է պայքար, առաջանում են Եղիազարյան և Հակոբյան[1] կուսակցությունները։ Դավը, խարդավանքը, կաշառատվությունը ծայրագույն աստիճանի են հասնում։

[1] Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի անունով է կոչվում Եղիազարին ընդդիմադիր կուսակցությունը:

1491
15709
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека

Մեզ չի հետաքրքրում, թե ի՛նչ նպատակ էր հետապնդում Եղիազար Այնթափցին։ Իհարկե դա պետք է բացատրել ոչ անձնական շարժառիթներով և փառասիրական նկրտումներով, ինչպես սովորաբար գրականության մեջ դիտվել է մինչև այժմ։ Սակայն ինչ էլ որ լինի, Եղիազարի արարքը մեծապես վնասակար և անբուժելի հետևանքներ կարող էր ունենալ հայ ժողովրդի համար։ Թուրքիայի տիրապետության տակ ապրող ամբողջ հայ ժողովրդին նա անջրպետում էր բուն Հայաստանից՝ մեծացնելով ձուլման ու կործանման վտանգը։ Առանց այն էլ ցրված ու տարաբաժանված ժողովուրդը վերջնականապես զրկվում էր մի ընդհանուր միավորող կենտրոնից, որը պետականություն չունենալու պատճառով ստանձնել էր իր ժողովրդի ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական ղեկավարության դերը։

Այդ բանը շատ լավ էին գիտակցում ժողովրդի սակավաթիվ, սրտացավ ու հեռատես գործիչները, որոնք ամեն կերպ ձգտում էին աղետի առաջն առնել. «Չէ ինձ փոյթ թէ բազմաց հովուեցից կամ սակաւուց,— ասում է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը դառնացած.— այլ զայս ինչ սաստիկ գիտեմ, որպէս և դու իսկ քաջ ճանաչես, զի այդ պառակտումն կաթողիկոսութեան հայի յանհնարին վնաս ազգիս Հայոց... թող զայլ աթոռս, յորոց թէ զինչ կրէ ազգ մեր՝ դու իսկ տեսանես»[1]։

Շարժման գլուխն է անցնում Մարտիրոս Ղրիմեցին իրեն հատուկ անտեղիտալի կրքոտությամբ։ Լսելով Եղիազարի հակաթոռ կաթողիկոսության մասին՝ Մարտիրոսն անմիջապես մեկնում է Կաֆայից և կազմակերպում ընդդիմադիր ուժերը։

Այնուհետև պայքարը կրում է սուր բնույթ և տևում չափազանց երկար՝ 1664-ից մինչև 1682 թվականը։ Այդ ընթացքում Երուսաղեմը մի քանի անգամ անցնում է մերթ Եղիազարի, մերթ Մարտիրոսի ձեռքը։ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը գալիս է Կ. Պոլիս և յոթը տարի մնում իր աթոռից հեռու, սպառնացող հակաթոռ կաթողիկոսության աղետը կանխելու և պայքարող կողմերը հաշտեցնելու համար։ Մարտիրոսն ինքը շատ անգամ փորձում է բարեկամաբար ետ պահել Եղիազարին այդ դիտավորությունից։ 1667 թվականին Մարտիրոսի առաջարկությամբ նույնիսկ հաշտություն է կայացվում երկու կողմերի միջև, բայց դա տևում է չափազանց կարճ և Եղիազարը

1 Չամչյան, Պատմութիւն հայոց, հ. Գ., էջ 714։

դրժում է այն։ Այնուհետև 1668 թվականի հունիսի 22-ին Մարտիրոսը մի նամակ է հղում Քիոս՝ Եղիազարին, նորից առաջարկելով հաշտվել Հակոբ կաթողիկոսի հետ. «Բանականությունով հաղթիր բարկությանդ — գրում է նա,— ու մեջտեղից վերցրու այդ խոչընդոտը, որ պատճառ է լինում մի բովանդակ ազգի ավերումին»[1]։ Բայց դարձյալ ապարդյուն։

Հակոբ Ջուղայեցին, երկրորդ անգամ գալով Արևմտյան Հայաստան, 1680 թվականի օգոստոսին մեռնում է Կ. Պոլսում։ Էջմիածնի կաթողիկոսական գահը երկու տարի մնում է թափուր։ Վերջապես հարմար են գտնում Եղիազար Այնթափցուն օծել ամենայն հայոց կաթողիկոս և այդպիսով առհասարակ վերացնել հակաթոռ կաթողիկոսության խնդիրը։ Եղիազարը կաթողիկոս է դառնում 1682 թվականին։

Եղիազարից հետո Երուսաղեմի պատրիարքությունը անցնում է Մարտիրոս Ղրիմեցուն։ Հույների հետ հարուցած ինչ-որ վեճի պատճառով Մարտիրոսը և հույների պատրիարքը գնում են Կ. Պոլիս։ Վեճը լուծվում է հաջողությամբ և Մարտիրոս Ղրիմեցին վերադառնալիս մահանում է ճանապարհին, Եգիպտոսում, 1683 թվականի օգոստոսի 25-ին[2]։

* * *

Ահա այսպիսի բուռն և փոթորկալից կյանքի ուղի է անցել Մարտիրոս Ղրիմեցին, երեսուն տարի անընդհատ պայքարելով մերթ Երուսաղեմի սեփականությունը պաշտպանելու համար, մերթ հակաթոռ կաթողիկոսության դեմ։

Այդ պայքարում նա հսկայական ուժ ու եռանդ է գործադրել, կրել անձնական զրկանքներ ու տառապանքներ, ընկել է պարտքերի

1 Սավալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղեմ, 1931, էջ 625։

2 Երուսաղեմի № 186 ձեռագրի 114բ էջում կա մի այսպիսի վկայութիւն. «Կաֆացի Մարտիրոս վարդապետն, որ երբեմն հակառակ Եղիազար կաթուղիկոսի և Պատրիարքի սրբոյ Երուսաղէմի, և ապա սիրելի, և յէջեալ Մարտիրոս վարդապետ պատրիարգ եւ նստի յԵրուսաղէմ. և յետոյ յԵգիպտոս վախճանի, զորս յԵգիպտոս վախճանելոյն զատուցութիւն գտար ի սեփ-ակէր նոմերայից ի ԺՁ թուղթն. և թիւ ի նմա ՌՂԵ»։

ՌՂԵ թվի տակ է հիշատակված նրա մասին եղած տեղեկությունը և դա չպետք է շփոթել նրա մահվան թվականի հետ։ Տե՛ս, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Բ, Երուսաղեմ, 1953, էջ 170։

մեջ, դատապարտվել է բանտարկության, մաղապուրծ խուսափել մահից, բայց երբեք չի ընկրկել և չի զիջել ոչ մի պայմանով։

Ժամանակակիցները և հաջորդ սերունդները բարձր են գնահատել Մարտիրոս Ղրիմեցուն և ակնածանքով են խոսել նրա մասին։ Մենք մի քանի անգամ առիթ ունեցանք դիմելու Ղրիմեցուն լավատեղյակ անաչառ ժամանակակցի՝ Երեմիա Չելեբիի «Օրագրութեանը», որտեղ բազմաթիվ դրվատալից տողեր կան։ Մի ողբի մեջ Չելեբին նրան անվանում է «Մարտիրոս քաջ սուրբ վարդապետ»[1], պատմում է, թե ինչպես նշանավոր ազգային Մահտեսի Ամբակումը մեռնելիս՝ ցանկանում է, որ իր մահճի մոտ լինի Մարտիրոս Ղրիմեցին. «Ո՞ւր է սիրելին իմ Մարտիրոս հռետորն, եղբայրն Եղիազարու»[2], որ մահվան կարգը կատարի[3]։ Վերևում տեսանք, թե ինչպես Խաչատուր Կաֆայեցին, որ հայտնի է Խաչգրուղ անունով, իր տաղերգության մեջ ջերմ դրվատանքով է ներկայացնում Մարտիրոս Ղրիմեցուն՝ անվանելով նրան «Թագն յաշխարհի» և «պարծանքն Ղրիմի»։ Խաչատուր Խասպեկ երեց նշանավոր տաղասացը 1661 թվականին ընդօրինակում է մի ձեռագիր, որի հիշատակարանի մեջ գրում է. «Ով ուսումնասէր (յիշեա) զտառապեալ մեղաւոր Խասպէկ խաչատուր երէցս, որ գրեցի զսա ի թվին ՌՃԺԲ յիշատակ Մարտիրոս քաջ հռետորի եւ Ղրիմեան տանս վերադիտողի ի վայելումն անձին իւրոյ»[4]։

Զաքարիա Սարկավագը և Սիմեոն Երևանցի կաթողիկոսը նրա մասին հարգանքով են խոսում՝ անվանելով բարեկամ Էջմիածնի։ Կարապետ կաթողիկոս Ուլնեցին նրան որակում է իբրև «մեծ և աստվածաբան վարդապետ», որը Իսկյուտարում մի հոգետուն է հիմնել[5] և այլն։ Ինքը՝ Մարտիրոս Ղրիմեցին իր մի բանաստեղծության մեջ գրում է.

[1] Օրագրութիւն, էջ 587։

[2] Նույն տեղում, էջ 311։

[3] Հիրավի նա միշտ էլ եղել է Եղիազարի մտերիմն ու անկաշառ գործակիցը, մինչև որ Եղիազարը հակաթոռ կաթողիկոսության գաղափարը հղացավ։ Նա Եղիազարին ուղղված մի նամակում իր մասին գրել է. «Վարդապետ, չեմք հոնդոյն այնց, որ զոյգն ինչ վարկպարազից թողուլ զբարեկամս և յարիլ յայլս» («Սիոն», 1932, էջ 121—122), բայց նա իր բարեկամին թողեց և ընդդիմացավ նրան, երբ նա համազգային տեսակետից վնասակար քայլերի դիմեց, իսկ դա ինչ-որ «վարկպարազի» պատճառ չէր։

[4] Թորգոմ Գուշակյան, Ցուցակ ձեռագրաց Ս. Նշանի վանուց Սեբաստիոյ, № 232։

[5] «Երևակ», 1839, էջ 330։

Ռաբբի կոչեցայ յարգող քանքարի,
Գտայ կորուսիչ գանձուց տէրունի,
Ջահ անուանեցայ տալ լոյս ի մթի
Խարխափումն շրջիմ ի գործ խաւարի[1]։

Չնայած ինքնաձաղկմանը, այդ տողերից նկատելի է, որ Ղրիմեցին ժամանակակիցներից ռաբբի (ուսուցիչ) է կոչվել և նրան անվանել են մթի մեջ լուսատու ջահ։

Բայց հետագայում Չամչյանը իր Հայոց պատմության մեջ Մարտիրոս Ղրիմեցու նկատմամբ ցուցաբերել է խիստ կողմնակալ և աչառու վերաբերմունք։ Դա, իհարկե, չէր կարող պատահական լինել։

Մարտիրոս Ղրիմեցին Կ. Պոլսում իր պատրիարքության օրով, և ընդհանրապես, անողոքաբար հալածում էր կաթոլիկացած տարրերին։ Երեմիան այդ մասին հատուկ վկայություն ունի. «Ի Սուրբ Աստուածածին գնացի, և Մարտիրոս վարդապետն քարոզ ասաց և դաս քաշեց ըզֆռանկսն և զհասանողսն նորին»։ Ղրիմեցու անունով մեզ մնացել է մի երկարաշունչ ու թունոտ անեծք ամբողջովին կաթոլիկների դեմ։ Այնպես որ նա հայտնի էր որպես կաթոլիկների թունդ հակառակորդ և ոչ միայն կաթոլիկների[2]. Ղրիմեցին իր ամբողջ գործունեության մեջ, առհասարակ, չի հանդուրժել և դատապարտել է ամեն մի շեղում հայ ուղղափառ եկեղեցու սկզբունքներից՝ դրա տակ անշուշտ տեսնելով օտար տարրի միջամտություն հայ համազգային կյանքին։

Իհարկե, կաթոլիկ պատմիչը չէր կարող այդ հաշվի չառնել և, ահա, սև տողերով նա վրեժխնդիր է լինում Մարտիրոս Ղրիմեցուց, որը հակազդել է նրա գաղափարակից հայերին[3]։

[1] Երևանի Պետական Մատենադարան, ձեռագիր № 1495, էջ 125ա։

[2] 1671 թվականին նա հատուկ ժողով է գումարում և հերքում է բողոքական վարդապետությունը, որ քարոզվում էր Եվրոպայից եկած լութերականների և կալվինականների կողմից։

[3] Դատելով որոշ աղբյուրներից, Եղիազարը հակումն է ունեցել դեպի կաթոլիկությունը՝ իր հոգում սնուցելով անշուշտ քաղաքական պատրանքներ, ինչպես իր ժամանակի ուրիշ հայ գործիչներ։ Նա նույնիսկ գործնական կապեր է հաստատում Հռոմի հետ՝ Պապի մոտ պատվիրակություն հղելով, որը նրան ուղարկում է մի ականակուռ և մարգարտազարդ թագ, գավազան և

Ինչպես հայտնի է, առհասարակ, մերկ և բացորոշ արտահայտված միտումը ավերիչ հետք է թողել Չամչյանի պատմության վրա՝ իբրև աղբյուր դարձնելով այն համեմատաբար նվազ արժեքավոր։ Նա շատ նշանավոր պատմական գործիչների քմահաճորեն վերամկրտել է իբրև կաթոլիկ, իսկ ում որ չի հաջողվել, նրա հետ էլ անողոքաբար դատաստան է տեսել[1]։

Հետագայում որոշ բանասերներ, այդ շրջանի համար միակ աղբյուր ունենալով Չամչյանը, անզգուշորեն Ղրիմեցու պատմական դեմքը ներկայացրել են աղարտված՝ իբրև «կովարույժ ձգտումներ ունեցող ի բնե ոչինչ մը»[2]։

Բայց նոր և հավաստի աղբյուրներն իրենց հետ բերում են նոր մեկնություն և նոր վերաբերմունք։ Մեսրոպ Նշանյանը հրատարակելով Երեմիա Չելեբիի Օրագրությունը, առաջաբանի մեջ գրում է. «Գալով Մարտիրոս Ղրիմեցիի, ան ալ Եղիազարի հաւասար, եթէ ոչ անկէ աւելի, կարողութեամբ օժտուած հոգևորական մըն էր, որ

խաչ։ Եղիազարը մտադիր էր 1682 թվականին յոթը եպիսկոպոսներով անձամբ գնալու Հռոմ, երբ նրան հրավիրեցին էջմիածին իբրև ամենայն հայոց կաթողիկոս։ Նա սովորություն է ունեցել գաղտնի, «զի մի խռովութիւն լիցի ի մէջ ժողովրդեան», բաժակի մեջ ջուր խառնելու և այլն, որոնք կաթոլիկական ծեսերին են հատուկ։ Տես Ավետիք պատրիարքի վկայությունը, «Մասիս», 1874, № 1490։ Ինչպես նաև՝ Գ. Գալեմքյարյան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու, եւ ժամանակին հայ կաթողիկեայք, Վիեննա, 1915, էջ 80—81։

[1] Չամչյանն ինքը նշում է, որ այդ շրջանի համար իբրև աղբյուր օգտագործել է Երեմիա Չելեբիի Տարեգրությունը, «Գրեալ զպատմութիւն անցից իւրոյ ժամանակի ստուգութեամբ և հաւաստարմութեամբ, յորմէ առեալ և մեր աւանդեցաք ինչ-ինչ ի ԼԲ գլխոյ մինչև ցայսր», Չամչյան, Գ, էջ 723։ Տարեգրությունը մեզ ծանոթ չէ, այն չի հրատարակված և ձեռագիր վիճակում գտնվում է Վենետիկի Մխիթարյանների մոտ, բայց նրա առնչությունը Օրագրության հետ մանրամասնորեն ցույց է տվել Մեսրոպ Նշանյանը, տես «Շողակաթ», 1913, էջ 49—52։ Օրագրությունը եղել է Տարեգրության հիմքը։ Իսկ Օրագրության մեջ մենք գիտենք, թե Երեմիա Չելեբին ինչպիսի դրական վերաբերմունք ունի Մարտիրոս Ղրիմեցու նկատմամբ։ Ուրեմն Չամչյանի բերած փաստերը կամ փոխված են յուրովի, կամ Երեմիա Չելեբին միևնույն մարդու մասին երկու աշխատություններում տարբեր կարծիք և վերաբերմունք է ունեցել, որը քիչ է հավանական։

[2] Տե՛ս. Երեմիա Քոմուրճյան, Ստամպոլոյ պատմութիւն, հրատարակեց և ծանոթագրեց Վ. Թորգոմյան, Վիեննա, 1913, էջ 171։

ունէր նաև քերթողական ձիրք, ու Երեմիա անկասկած այդ մարզին մէջ ալ ազդեցութիւն կրած էր անկէ»[1]։

Իհարկե, Մարտիրոս Ղրիմեցու և Եղիազար Այնթափցու պայքարը, որքան էլ դա մի կողմից արդարացի լիներ, ծանր նստեց, և չէր կարող չառաջացնել տեղին դժգոհություն։ Հսկայական միջոցներ, որոնք կարող էին ծառայել ավելի լավ նպատակի, երկուստեք՝ և՛ Մարտիրոսի, և՛ Եղիազարի կողմից օգտագործվում էին իբրև կաշառք՝ նետվելով թուրքական ավազակների գրպանը։ Այդպիսով, կուտակվեցին մեծ պարտքեր, որոնք, վերջիվերջո, ծանրանում էին ժողովրդի վրա։ Ժամանակակից Հակոբ Կարնեցին այսպես է նկարագրում պայքարի այդ շրջանը. «Ոմանք վարդապետք և ժողովուրդք ի կողմն Յակոբայ կաթողիկոսին եղեն և ոմանք Եղիազարու եղեն և անկան ի դրունս վէզիրին և Թագաւորին, և տային դրամ քէսայով, զի տարի մի տային զԵրուսաղէմ Եղիազարին և առնէին բազում քէսա, և միւս տարին տային Մարտիրոսին և առնէին բազում քէսա, մինչ որ Բ (երկու) կողմն ևս անկան ի ներքոյ բազում պարտուց»[2]։

Բայց վերջին հաշվով պետք էր դիմագրավել Եղիազարին իր հակաթոռ կաթողիկոսության նկրտումների մեջ, որը հաջողելու դեպքում վտանգավոր հետևանքներ կունենար ամբողջ հայ ժողովրդի համար։ Մարտիրոսը ժամանակի ու պայմանների բերումով ուրիշ կերպ չէր կարող պայքարել։ Նրա պայքարը մնում է ճիշտ և անհրաժեշտ, հատկապես հարցին եթե նայենք պատմական տեսակետից։ Թույլ չտալով քառատելու առանց այն էլ թույլ հայ վարչական-եկեղեցական իշխանությունը և գործակցելով Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսին՝ նա կարևոր դեր կատարեց մեր ժողովրդի պատմության մեջ ԺԷ դարի երկրորդ կեսին, երբ ազգային-ազատագրական միտքը ծայր էր առնում և կարող էր թուլանալ ու մարել երկրի մի նոր քառատման հետ։

* * *

Չնայած իր բազմազբաղ կյանքին և տենդոտ գործունեությանը, որը նրանից խլել է այնքան ժամանակ, Ղրիմեցին առիթ բաց չի թողել զբաղվելու գրական և մատենագրական աշխատանքով։ Նա բեղմնավոր է թե՛ իբրև գրիչ, թե՛ իբրև ստեղծագործող։

[1] Օրագրութիւն, առաջաբան, ԺԷ։

[2] Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 243։

1651 թվականին Ղրիմեցին ընդօրինակում է մի ձեռագիր և նվիրում Երուսաղեմի Սուրբ Հակոբի վանքին սեփական հիշատակարանով։ 1654 թվականին Կ. Պոլսի մեջ ընդօրինակում է մի Աստվածաշունչ։ 1665 թվականին դարձյալ ընդօրինակում է մի Աստվածաշունչ։ Աներկբայորեն ուրիշ ընդօրինակություններ էլ ունի, բայց մեզ հայտնի չեն։ Սակայն այսքանն էլ արդեն ինքնին ցույց է տալիս, թե նա ինչպիսի եռանդ, ինչպիսի սեր է տածել դեպի գիրքը, ձեռագիր մատյանը, որ իր փոթորկալից կյանքի մեջ ժամանակ է գտել իբրև գրիչ նոր ընդօրինակություններ անելու։

Ղրիմեցին ոչ միայն ձեռագրեր է ընդօրինակել, այլև իր պատրիարքության տարիներին զբաղվել է մատենադարանները հարստացնելով, հին ձեռագրեր հավաքելու և պահպանելու աշխատանքով։ 1677 թվականին նա հրամայում է գնել մի ձեռագիր, որի հիշատակարանի մեջ կարդում ենք. «Դարձեալ ի թուին ՌՃԻԵ (=1676) կրկին գերեցաւ գիրքս ի Կրետէս կղզին ի Ֆռանկաց և բերեալ ի Ստամպօլ գնեաց զսա Սուրբ Երուսաղէմայ վէքիլ Խաչատուր վարդապետն[1], հրամանաւ տեառն Մարտիրոսի վարդապետի, սուրբ Երուսաղէմի առաջնորդի, ի թուին ՌՃԻԶ (=1677)»[2]։

Ղրիմեցուն է պատկանում նաև մի հարուստ պատկերազարդ Աստվածաշունչ, որ ինքն է պատվիրել 1670 թվականին։ Աստվածաշունչն ունի չափածո հիշատակարան, որտեղ արտահայտված է նրա սերը ձեռագրերի նկատմամբ և այն զոհաբերությունը, որ արվում է ձեռագիր արտագրելու համար։ Նա լավ է համարում հանուն ձեռագրի միջոցներ ծախսել, քան թե հարստություն ունենալ.

Լաւ վարկայ ստանալ զմեծութիւն սորա,
Քան զանիրաւեալն ունել զմամոնա.
Իսկապես լքի ես ի սէր սորա
Զմթերս զանձից ծախելով ի սմա[3]։

[1] Այս Խաչատուրի մասին մի հիշատակություն կա Երուսաղեմի № 5 ձեռագրի հիշատակարանում, որտեղ ասված է, թե Աստվածատուրը մեռնելիս ձեռագրերի գործը հանձնում է նրան «թե հոգեւոր որդեակ իմ վերակացու եւ հոգաբարձու լինիս սուրբ գրոցս... և զկնի հանգստեան Աստուածատուր վարդապետին, եղեւ վերակացու եւ հոգաբարձու սուրբ գրոցս տէր Խաչատուրն» տես Երուսաղեմի Ձեռագրացուցակ, հ. Ա, էջ 65։

[2] Երուսաղեմի Ձեռագրացուցակ, հ. Դ, էջ 238։

[3] Ձեռագիր № 1495, էջ 125բ։

Հիրավի այդ ձեռագրի համար նա ծախսել է «զմթերս զանձից»։ Առավել հետաքրքիր է նույն Աստվածաշնչի արձակ հիշատակարանը, որը միաժամանակ գեղեցիկ և հազվագյուտ աղբյուր է հայ գրչության պատմության համար։ Այդ ընդարձակ հիշատակարանից բերում ենք մի հատված, որ վերաբերում է ձեռագիրը կազմելու հանգամանքներին. «Իսկ գրութիւն սորին եղեւ ի հոյակապ մայրաքաղաքս Կոստանդնուպօլիս. զառաջին Ե տետրն գրեաց Մելիտոն անուն ումն՝ երէց աշխարհիկ, և հասեալ ի ԹԻԼՔ-ն փոխեցաւ յաստեացս՝ յերիտասարդական հասակի բարի վարուք, որոյ տէրն ողորմեսցի և ջնջեսցէ զգիր պարտեաց նորին։ Եւ յետ նորա ծերունի մի գրիչ, Եղիա անուն սկսաւ յառաջին Եզրայն. գրեալ ԺԳ տետր՝ և նա փոխեցաւ աստի կենաց, և զմնացեալն գրիչ ումն, ճարտար յարուեստն և ոչ ի վարս, Ազարիա անուն, գրեալ աւարտեաց ի մի լրութիւն։ Իսկ նկարող սորին՝ զարմանալի և անհաս արուեստաւորն Մարկոս՝[1] որ էր ի նոյն քաղաքէն Կոստանդնուպօլսէ, բայց յոյժ ստասաց և խաբուսիկ, և իբրեւ անյագ տղրուկ եկեր զամենայն զկեանս իմ և ոչ ասաց շատ ըստ առակաւորն բանի իմաստնոյն։ Քանզի սկիզբն սորին գծագրութեան եղեւ ի ՌՃԳ (1654) թուականիս և մինչ ի ՃԺ (1661) թիւն հազիւ աւարտեալ կազմեցաւ. մի անգամ և յղեցաւ առ իս յերկիրն Ղրիմու՝ ի մայրաքաղաքն Կաֆայ, զի մեզ էր հաւատացեալ յայնժամ տեսչութիւն բոլոր նահանգին, և ի գնալն ի մերս կոյս պատահմամբ ձմրանն խստաշունչ սառնամանեաց հանդիպի նաւաբեկութեան, ուստի տաղաւարեալ քայքայեցաւ, և մասն ինչ ծաղկանց եղծեալ տեղացաւ։ Վասն որոյ հարկեալ միւս անգամ բերի ի Կոստանդնուպօլիս։ Բայց յաղագմանց չարին զբաղեալ իմ և աղմկեալ ի խռովութիւնս մեծի աթոռոյն Երուսաղէմի՝ յորոյ սակի մնաց անխնամ ամս ոչ սակաւ, և ապա ետու նորոգել վերստին զգլխաւորագոյնս խորանացն՝ և զերեւելիս յայլոց ծաղկանց. բայց մնաց ուրեք սակ ինչ մանրատիպ ծաղկանցն՝ զի կարի ձանձրացոյց զիս վերոյգրեալ ծաղկարարն Մարկոս՝ անցեալ զչափ և զհամար որքանութեանն ծախուց։ Թողում ասել զվշտակրութիւնս վեշտասան ամաց ժամանակի, որոց ամենեցուն

[1] Այս նույն Մարկոս ծաղկարարի գործն է Մարտիրոս Ղրիմեցու դիմանկարը, որը գտնվում է նրա ծաղկած ձեռագրի մեջ։ Արժեքավոր է իբրև գեղարվեստական գործ։

թողցէ տէր զախալանս զոր ինչ մեղան ի սմա յազահելով յինչս իմ, գրիչքն և ծաղկողն, և ողորմեսցի ըստ մեծի գթութեան իւրում, ամէն»[1]։

Այդ առումով ոչ պակաս հետաքրքիր է նաև 1658 թվականին Մարտիրոսի պատվիրած «Մեկնութիւն Եսայեայ» ձեռագրի գրիչ Վարդան Ղրիմեցու հիշատակարանը. «Արդ աստուծալայէս եռափափար և յողնատենչ սրտիւ ցանկացող եղև յայսմ հոգեպատարճ բուրաստան և աստուածաբան տառիս, զՂրիմեցի Մարտիրոս վարդապետս՝ յայսմ ամի կարողութեամբն քրիստոսի եղև դէտ և իշխող աշխարհին հոնաց. ի հեռուն հեռէ տիւ և գիշեր փափաքէր իբր գեղջէրուս ի ծարաւի գոլ։ Նա որ զկամս երկիւղածաց լնու՝ և ստուած ելից յիղձս փափաքանաց սորին՝ այսր և անդր որոնելով մինչ եգիտ զարինակն սրբոյ թշուառիս, և յիմարս ըստ տկար և անդէպ մտաց իմոյս դաղափարեալ յանդ ելեալ շնորհեցի պետիս և համշիրակ մեղապարտ անձին»[2]։

Մեր առաջ հառնում է հայ համեստ մշակը, գրական ու մշակութային անխոնջ գործիչը, որ ոչինչ չի խնայում և անսպառ եռանդ ու հավատ ունի իր գործի նկատմամբ։

Ղրիմեցու առանձին սերն ու հոգածությունը ձեռագրերի հանդեպ պատահական չէ։ ԺԷ դարում որպես վերածնվող հայ մշակույթի անմիջական հետևանք, ուժեղ հետաքրքրություն առաջացավ ձեռագրերի նկատմամբ։ Վարդան Բաղիշեցին, նույն ԺԷ դարի նշանավոր գործիչներից մեկը, իր մի հիշատակարանի մեջ գրում է. «...գրոցս նորոգելն և ի հնութենէ յառաջ ածելն և ի փթածութենէ ի կենդանութիւն ածելն մեծ է քան զնկեղեցիս շինելն»[3]։

Մարտիրոս Ղրիմեցին իր շուրջն է հավաքել ժամանակի գրագետ մարդկանց և ունեցել է գրական ստեղծագործական լայն կապեր։ Ինչպես տեսանք, նա աշակերտել է Ստեփանոս երեց Թոխաթեցի տաղասացին. ծանոթ էր Խաչատուր Խասպեկ երեց տաղասացի հետ, որին պատվիրել է մի ձեռագիր. նրան գիտեր Խաչատուր

---

[1] Տե՛ս, Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարմիր Վանուցն Անկուրիոյ, կազմեց Բ. Կյուլեսերյան, Անթիլիաս, 1956, էջ 439։

[2] Տե՛ս, Երուսաղեմի Ձեռագրացուցակ, հ. Դ, էջ 134։

[3] Մանր ժամանակագրություններ, հ., Բ, էջ 386։

Կաֆայեցին՝ Խաչգրուզը, որը նշանավոր տարեգիր էր և մեր առաջին բանահավաք-գրիչը. վերջապես նրան աշակերտել է Երեմիա Չելեբի Քոմուրճյանը, որը երկար ժամանակ աշխատել է նրա մոտ որպես քարտուղար։ Երեմիան իր մի նամակի մեջ գրում է. «Ի բազում սրտից խորհուրդ ակն յանդիման նրբանկատ յուսուցչացդ[1] *մանրամասնաբար ուսայ, վասն զի ի զրուցս սիրոյ ձեր տարաբերեալ զեզերէի զերեւեալս իմաստից եւ Ցէլէքզէտէ թշուառացեալս»*[2]։ *Մարտիրոս Ղրիմեցուն աշակերտել են նաև ուրիշներ, որոնցից անունով հայտնի են Աստվածատուր սարկավագ Ստամպոլցին*[3] *և Ադրիանուպոլսի առաջնորդ Եփրեմ Երաժիշտը*[4]։

Մեր Մատենադարանի մի ձեռագրում, որ Եփրեմն է պատվիրել, նրանից բազմաթիվ ոտանավորներ են զետեղված։ Մեկի մեջ՝ «Տաղաչափեալ շարագրի տեառն Եփրեմէ վարդապետի» նա գրում է իր մասին.

Եփրեմ ռաբբիդ ողկոյզաբեր,
Որ երաժիշտ ես անուաներ.
Քաղցրանուագ ալեօրդ ծեր,
Նրգեա անոյշ մեղեդիքներ։

Զմանկունս ուսո տաղ և գանձեր,
Նոքա երգեն, զուարթ զու լեր,

---

[1] Նկատի ունի Մարտիրոսին և Եզիազարին։

[2] Օրագրութիւն, էջ 441։

[3] Սա օգնել է Մարտիրոսին նրա նշանավոր ոսկեզարդ Աստվածաշունչը կազմելիս։ Մարտիրոսը այդ Աստվածաշնչի ինքնագիր հիշատակարանի մեջ գրում է. «Այլև յիշեսջիք ի տէր զձեռնասուն աշակերտն իմ, զԱստուածատուր սարկաւագն Ըստամպօլցի, զի նա եւս բազում աշխատեալ է ի սպաս զորին (ձեռագրին Ա. Մ.), զի այս երեքատասն ամ է յաշակերտութիւն զրոց սրբոց». տե՛ս Բաբկեն Կյուլեսերյան, Ցուցակ, էջ 441։

[4] Ղրիմեցին իր «Այս են կարգ վարդապետաց հայոց» աշխատության մեջ թվում է և իր անունը. «Եւ ե՛ս յետնեալս յամենայնի աշակերտ Նորին (Աստվածատուր պատրիարքի Ա. Մ.) Մարտիրոս Ղրիմեցի պիտակս, որ ոչ եմ արժան զուգաշարիլ ի յոճ և ի կարգ վերոյգրեալ սրբազանիցն», որի համառոտագրության մեջ ավելացնում է. «Նորին աշակերտ Եփրեմ Երաժիշտն՝ պետն Անդրիանուպոլսոյ» Երևանի Պետ. Մատենադարան, Ձեռ. № 1495, էջ 173 ա։

Ներհմտացեալքն մեղեդիքներ
Եւ այլ ասմունք ձայնաւորներ[1]։

Այսպես ուրեմն, նա եղել է երաժիշտ և տաղասաց։

Ահա գրական այսպիսի միջավայրում է ստեղծագործել Մարտիրոս Ղրիմեցին, որից մեզ հասել է բավական պատկառելի ժառանգություն։

Ղրիմեցուց մեզ հայտնի առաջին երկը մի չափածո պատմություն է՝ նվիրված 1652 թվականի Երուսաղեմի ժողովին, ուրեմն գրվել է դրանից ոչ շատ ուշ։ 1659 թվականին գրում է «Յաղագս քաղաքին Ամասիու», 1669 թվականին՝ «Գովեստ Սուրբ Աստուածածնայ վանուց յԱնկուրիոյ», 1672 թվականին գրում է ծավալով ամենից մեծ պատմական երկերը՝ «Պատմութիւն Ղրիմայ երկրին» և «Կարգ և թիւ թագաւորաց հայոց», ինչպես նաև՝ չորս հարյուր տուն «Յաղագս յայսմաւուրաց գրոց»։ Այդ մեծ բեղունությունը ցույց է տալիս, որ նա 1672 թվականին հասարակական գործերին քիչ է խառնվել և Ղրիմի առաջնորդությունը վարելիս՝ մխրճվել է գրական աշխատանքի մեջ։ 1673—74 թվականներին գրում է իր երգիծական բանաստեղծությունների շարքը՝ դեպի Բալկանները կատարած ճանապարհորդական տպավորությունների տակ։ Նա ստեղծագործել է մինչև իր կյանքի վերջը. 1681 թվականին գրում է «Աղերսանք առ սուրբ Աստուածածինն»։

Ղրիմեցու բոլոր երկերը չէ, որ թվագրված են, կամ բոլորը չէ, որ հասել են մեզ, որով հնարավոր լիներ բնորոշել նրա ստեղծագործությունը իր զարգացման մեջ։

Այժմ տեսնենք, թե Ղրիմեցին իբրև ԺԷ դարի գրող ու մատենագիր ինչ գրական ու հասարակական արժեք է ներկայացնում։

Բ

ԺԷ դարը հայ ժողովրդի համար բացվում է երկու չարագույժ աղետներով. Արևելքում՝ Կարմիր-Գլխի արշավանքով, իսկ Արևմուտքում՝ ջալալիների ապստամբությամբ։ Դժբախտությունը նորից նետեց հայ ժողովրդի այնքան տառապանք, արյուն ու ավեր տեսած

[1] Երևանի Պետ. Մատենադարան, ձեռ. № 7717, էջ 258։

չեմքին։ Խաղաղ ու ստեղծագործ ժողովուրդն իր երկրում, իր տան մեջ միանգամից բնավեր է դառնում։ Շահ Աբասի հղացած ահավոր գաղափարը արյունոտ և անջնջելի հետք թողեց մեր պատմության մեջ։ Մի կողմից ջալալիների ավերածությունը, մյուս կողմից շահաբասյան բռնագաղթը երկիրը դարձրին ամայի, ժողովուրդը նորից դիմեց տարագրության, օտար երկնքի տակ հանգրվան որոնելու։ Ժողովրդի բեկորները տարածվում են ամբողջ աշխարհով մեկ։ ԺԷ դարի հայ նշանավոր ճանապարհորդ Սիմեոն Լեհացին գրում է. «Եւ թէ հաշուեմ ի Պուղտանայ մինչև Ստամպօլ, պուլթուն Ուռումէլին մինչեւ մեծն Վանատիկ, ոչ կայ քաղաք, գեղ կամ չիֆթլիկ, որ հայ չկենայ, որ վասն ծովացեալ մեղաց մերոց ցիրուցան եղեալ եմք ի վերայ երկրի որպէս գփոշի[1]»։

1608 թվականի մի հիշատակարանում այդ մասին է խոսում թախծալից տողերի մեջ և Հակոբ երեց Բաթուկենցը. «Գերի և եղկելի եղեն ամենայն ազգն հայոց, զի ցրուեցան ամենեքեան ընդ երեսս երկրի, որպէս փոշի հոսեալ ի հողմոյ՝ ծագաց ի ծագս. բաժանեալք ի սիրելեաց, հեռացեալք ի հայրենեաց, որոշեալք ի յընտանեաց, անջատեալք յամենայն բարութեանց, շրջէին, պանդըխտէին նշդեհացեալք ի մէջ այլասեռն ազգաց այլախօս լեզուաց և անընդել աշխարհաց, որպէս զոչխար՝ որոց ոչ իցէ հովիւ, անտերունչ մնացեալք»[2]։

Հայ գաղթականությունը Եվրոպայում և Արևելքի մեծ քաղաքներում հսկայական չափերի է հասնում։ ԺԶ դարում մեծ ծաղկման հասած Թոխաթը, Ջուղան և ուրիշ հայաբնակ խոշոր քաղաքներ կորցնում են իրենց շուքը։ Բայց ԺԷ դարի երկրորդ կեսին տեղահան արված ժողովուրդը կամաց-կամաց ծվարվում է նոր գաղթավայրերում, իսկ ոմանց էլ հաջողվում է վերադառնալ հայրենիք։ Ժողովուրդն անիվների տակ ճմլված բաղեղի պես նորից է սկսում ծլարձակել և առաջ տանել իր դարերով ավանդված մշակույթը։

Մշակույթի առավել բարձր զարգացման կենտրոններ են դառնում գաղութները՝ Կ. Պոլիսը, Երուսաղեմը, Լեմբերգը (Լվովը), Ղրիմը, Նոր Ջուղան և այլն, քան թե բուն Հայաստանը, որը տեղահանության ու գաղթի շնորհիվ դարձել էր սակավաբնակ, և որտեղ

[1] Սիմէոն դպրի Լեհացւոյ Ուղեգրութիւն, հրատարակեց Ն. Ակինյան, Վիեննա, 1936, էջ 8։

[2] Ղ. Ալիշան. Կամենից, Վենետիկ, 1896, էջ 169։

կային կյանքի անապահով պայմաններ։ Թուրքական կույր ու պարզունակ պետականությունը չէր կարող միասնական կարգ սահմանել իր ընդարձակ երկրի բոլոր անկյուններում, և ահա, կենտրոնից հեռու, ականջին անհաս և աչքից անտես ծայրամասերում թույլ են տրվում ամեն տեսակի վայրագություններ։ Նույն ճանապարհորդը գրում է. «Ու Թուրքաց աշխարհն ամենայն այդպէս են, ապա Խարբերթ առաւել քան զամենայն։ Ի Ստամպօլ սակաւ մի ունին մխիթարութիւն քրիստոնեայք և վայելչութիւն, զի ունին եկեղեցիք պայծառ, տօնախմբութիւն ձայնիւ, հեծնուն ձի և ջորի, ագանեն ճուղչայ, եմմիշչայ չուխայ, ուտեն, ըմպեն, ուրախ լինին. ունին մեծամեծ տունս, էգիս և դրախտս և այլն. զոր յԱնատօլին բնաւ գայս ոչ երևի. այլ տներն ախոռի նման, և չալուով, ցած, իսկ ի քաղաքսն քարբիչով գովին փոքր և խորափոսի, խաւարչտին»[1]։

Ահա այսպիսի մեծ տարբերություն կար կենտրոնի և ծայրամասերի մեջ, ուր ժողովուրդը ծայրահեղ ընչազուրկ էր և չուներ ոչ մի իրավունք։ Պատկերը կարող է ամբողջական լինել, եթե դրան ավելացնենք ազատորեն մոլեգնող կողոպուտն ու ոհիրը. «Ես այսպէս ահիւ եւ գողութեամբ շրջէի տարակուսանօք, թէպէտ մեծ քարվանով շրջէի, զի ամէն տեղ հարամիք էին, սօխթանի, ամէն տեղ թալան եւ էաղմայ և զուլում»[2]։ Այս բոլորից հետո ճանապարհորդը եզրակացնում է. «Վասն որոյ Հայք սակաւ մնացեալ են»։

Իհարկե, այսպիսի դրության մեջ, երբ չկան ամենափոքր տանելի պայմաններ, ստեղծագործական աշխատանքի մասին խոսք չի կարող լինել, չնայած անձնվեր և անձնազոհ հայ մշակույթի գործիչները դարձյալ հերոսական ջանքեր են թափում։ ԺԷ դարի կեսերին Էջմիածինը, Բաղեշը և այլ կենտրոններ նույնիսկ ծաղկման են հասնում։

Այլ էին գաղութները։ Կյանքի որոշ ապահովության հետ միասին հայերի ձեռքն էր անցել առևտուրը, որ հայ գաղթականների տնտեսությունը բավական բարգավաճ դրության էր հասցրել։ Իրենց զբաղմունքի բերումով հայ առևտրականները ճանապարհորդում էին աշխարհի տարբեր կողմերը, լինում Եվրոպայում, հաղորդակից դառնում Վերածնության գաղափարների հետ և ձեռք բերում ավելի

[1] Սիմեոն Լեհացի, *Ուղեգրութիւն*, էջ 190։

[2] Նույն տեղում, էջ 194։

լայն մտահորիզոն[1]։ Եվ ահա ջուղայեցի խոջաները և Պոլսի չելեբիները, դառնալով մեծ դրամատերեր, իրենց ուժով ազդում են հայ հասարակական կյանքի վրա։

Դարասկզբի ավերածությունները, որոնք խիստ ծանր նստեցին մեր ժողովրդին, տխուր արձագանք գտան գրականության մեջ։ Նորից հնչեցին լալահառաչ ողբը և պանդխտի թախծալիր ու հայրենաբաղձ երգերը։ Նշանավոր «Կռունկ ուստի կուգաս» երգը, որ մի ամբողջ ժողովրդի տառապանքն ու ճակատագիրն է խորհրդանշում, հավանականորեն ԺԷ դարում է գրված։

Ողբը, որ ժամանակակից պոեմի նախորդող ձևն է, սկիզբ դըրվեց Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյից» հետո և լայն տարածում գտավ։ Ողբի սեռը մեծ հնարավորություն էր տալիս արտահայտելու դարաշրջանի ոգին, ավերածություն ու կոտորած ապրած մարդկանց վիշտը և ընդվզումը, որն այս կամ այն չափով հայրենասիրական բնույթ ուներ։ Նկատելի է, որ ողբը միշտ համընկել է քաղաքական որոշ վերելքի շրջանի հետ, արտահայտում է մի տեսակ լալահառաչ բողոք, ոգորումն և, վերջապես, խտացնում է ժամանակի տրամադրությունները։ Ստեփանոս Օրբելյանը և Խաչատուր Կեչառեցին ԺԷ դարում գրեթե միաժամանակ ողբեր են գրում, որոնք համընկնում են հասարակական մի նոր շարժման հետ և ինքնին արտահայտում

[1] Հետաքրքիր են այդ տեսակետից Սիմեոն Լեհացու, Խաչատուր Եվդոկիացու և Հովհաննես Թութունջու ուղեգրությունները։ Առիթից օգտվելով ասենք, որ Խաչատուր Եվդոկիացու դեպի Վենետիկ կատարած ուղևորության տպավորությունները «Յարևմտից կողմ աշխարհին» վերնագրով առաջին անգամ տպագրել է Ալիշանը 1847 թվականին «Բազմավէպում», Խաչատուր Եթովպացի անվան տակ։ Նրան հայտնի չի եղել նաև ուղևորության ճիշտ թվականը, ենթադրում է 1500—1600 մեջ ընկած ժամանակաշրջանը։ Այդ նույնը առանց նոր բանասիրական ճշտումների, հետագայում երկրորդ անգամ տպագրված է «Բազմավէպում» և ապա «Անահիտ» ամսագրում ավելի լրիվ։ Մեր Մատենադարանի № 1636 ձեռագրի 169ա—187ա էջերում զետեղված է այդ գեղեցիկ չափածո ուղեգրությունը հետևյալ ընդարձակ խորագրով. «Յարմարեալ պատմութիւն Վենետիկ քաղաքի Խաչատուր իրիցուէ Եվդոկիացոյ որ ասի Թօղաթ ըստ կարի մտաց իմոց թվին ՌԿԳ յունիսի ԺԵ ի վերայ ծովու և ի մէջ նաւի գրեցի որում տէր ունիմք ի Աֆրէզ քաղաք երանեմք որում մարմինն Արիստաքէսի որդոյ մեր լուսաւորչին կայ ի նմայ հանգուցեալ»։ Այսպիսով պարզվում է ուղևորության ճիշտ թվականը՝ 1614 թվականի հունիսի 15, իսկ անունն էլ ոչ թե Խաչատուր Եթովպացի այլ Խաչատուր Եվդոկիացի, որ ասի Թօղաթ։

այդ շարժման ոգին: Այդպես և ԺԶ դարի վերջը և ԺԷ դարի սկիզբը: Գրվում են բազմաթիվ ողբեր. Մինաս Թոխաթեցու «Ողբ ի վերայ Օլախաց երկրին հայերուն», Ստեփանոս երեց Թոխաթցի «Ողբ եւ ոտանաւոր տաղ ի վերայ Եւդոկիա մեծի քաղաքին», Հակոբ երեց Բաթուկենցի «Ողբ ի վերայ Եւդոկիա քաղաքին», Ազարիա Սասնեցու «Ողբ ի վերայ հարուածոց արեւելեան գաւառացն եւ աշխարհին հայոց ի ձեռաց ճելալեանց» և այլն: Այդ բոլոր ողբերում էլ, որոնց մեջ առանց բացառության նկարագրվում է իբր թե մեղքի պատճառով հայ ժողովրդին հասած չարիքը, կա թույլ ձևով և հայեցողաբար արտահայտված վաղվա մասին մի ինչ-որ հավատ ու ակնկալություն: Հակոբ Բաթուկենցի վերջին տներից մեկն այսպես է.

Քրիստոս որդին Հօր միածին
Նորոգեսցէ դարձեալ կրկին
Ըզշինութիւն քոյոյ յարկին
Եօթնապատիկ քան զառաջին[1]:

Մինաս Թոխաթեցու ողբի մեջ կարծես թե արտահայտված է բողոքի մի փոքր քաղաքական շեշտ.

Լալով ասեմ թէ տէր մեղայ,
Դու արարիչ մեզ ողորմեայ,
Ի այլազգեաց զմեզ ազատեայ
Ի այս ցաւէս դու կազդուրեայ[2]:

Իսկ Ազարիա Սասնեցին նույնիսկ փորձում է փնտրել մեղքից դուրս ուրիշ պատճառներ, նկատի ունենալով հայ պետականության անկումը.

Այս ամենայն մեղքն է արել,
Որ անօրէնքն են մեզ տիրել,
Մեր թագաւորքն են խափանել
Զմեզ ի յաշխարհս անտէր թողել[3]:

---

1 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 610:

2 Ն. Ակինյան. Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 94:

3 «Հանդէս Ամսօրեայ», 1936, էջ 336:

Հակոբ Բաթուկենցը նույնպես, բայց ոչ ողբի մեջ, այլ մի ձեռագրի հիշատակարանում գտնում է, որ հայոց դժբախտությունը պետականությու-

Դարի երկրորդ կեսին ողբը չի դադարում, բայց ստանում է նոր շեշտ, նոր որակ: Ազարիա Սասնեցու, Ստեփանոս, Հակոբ և Ղազար Թոխաթեցիների ողբերը, ինչպես նաև ավելի վաղ գրված Մինաս Թոխաթեցու ողբը թարմ, անմիջական տպավորության արդյունք են, շատ ավելի կրում են փաստագրական բնույթ և ունեն չափազանց նեղ ընդգրկում՝ ստանալով չափածո հիշատակարանի ձև: Դա մի քաղաքի, հատկապես Թոխաթի ավերն է պատկերում, որտեղ ծնվել ու ապրել են իրենք՝ ողբի հեղինակները, կամ ամենաշատը՝ ընդհանուր ավերածության պատմական նկարագրությունն է, ինչպես, օրինակ, Ազարիա Սասնեցու մոտ, և չկա լայն, ընդհանրացնող շեշտ: Դրանով, իհարկե, ոչ միայն դրանով, այլև գեղարվեստականությամբ նրանք շատ են անջրպետվում իրենց մայր նախատիպից՝ «Ողբ Եդեսիոյից»:

Բայց դարի երկրորդ կեսին արդեն տրամադրությունները դառնում են ավելի որոշակի: Տառապանքը դարձել էր հուշ և նստվածք էր տվել: Նոր գաղթավայրերում, հատկապես Կ. Պոլսում և Նոր Ջուղայում, նույնիսկ որոշ արտոնություններ են շնորհվում գաղթած ժողովրդի վերքերը բուժելու համար: Բայց կյանքը մնում էր նույնքան երերուն և նույնքան անապահով: Հայ նոր դրամատերերը, որոնք ունեին լայն կապեր և մեծ ազդեցություն, իրենց զգում են բավականաչափ ուժեղ, որից առաջ է գալիս սեփական բախտը տնօրինելու ձգտումն: Երկիրն ապրում է ազգային զգացումների վերածնունդ: Դարավոր տառապանքն արթնացրել էր ժողովրդին, արթնացրել և թևավորել ազգային ազատագրական գաղափարներով[1]: Ողբն էլ հենց այդպիսի բովանդակություն է ստանում, դուրս գալով իր փաստագրական-հիշատակարանային կեղևից և ձգտելով

նը կորցնելն է և հայտնում է այն վերականգնելու իղձ. «Այժմ զի՞նչ առնելոց եմ. զի որք մնացիք ի հօրէ և ի մօրէ, այսինքն ի թագաւորէ և ի հայրապետէ: Այլ յուսամ առ աստուած, խոստովանեա նմա, զի փրկիչ քո նա է. Թէպէտ և եհար վասն մեղաց դարձեալ նոյն ինքն ողորմեսցի ըստ մեծի ողորմութեան իւրում. և ժողովեսցէ որպէս հաւ զձագս իւր ընդ թեւօք, և սեպհականեսցէ ի հայրենի աշխարհն, և հաստատեսցէ թագաւորաւ և հայրապետիւ բարեխօսութեամբ Սրբուհւոյ Ամենօրհնեալ Աստուածածնին», տե՛ս Կամենից. էջ 169:

1 Այդ շրջանն առհասարակ համընկնում է Օսմանյան կայսրության մեջ ապրող ժողովուրդների ընդհանուր շարժմանը և հուզումին, որ ծայր էր առել թուրքական դաժան տիրապետության դեմ:

305—3

արտահայտել մի ընդհանուր համազգային վիշտ և խոկումն։ Այս տեսակետից չափազանց ուշագրավ է Մարտիրոս Ղրիմեցու «Ողբ Երեմիա մարգարէին, որ է երրայեցերէն Թրէնի» չափածո երկը։

Ողբի թեման վերցված է Աստվածաշնչից։ Դա Երեմիա մարգարեի նշանավոր ողբն է իր ժողովրդի գերության և Երուսաղեմի ավերման մասին։ Բայց դա ոչնչով չի խանգարել Ղրիմեցուն սեփական ժողովրդի վիշտն արտահայտելու, ընդհանրացնելու, լայն հնարավորություններ է ընձեռել։ Այնպես ինչպես Ներսես Շնորհալին Եդեսիայի մեջ Անին էր տեսնում, Մարտիրոս Ղրիմեցին էլ Երուսաղեմի մեջ՝ Հայաստանը։ Օտար թեման նրան չի խանգարել ծավալվելու, իսկ միջնադարում ընդունված ձև էր թեմաներ քաղել Աստվածաշնչից, ինչպես եվրոպական Վերածննդի ժամանակ՝ անտիկ աշխարհից։

Ողբը գրված է ԺԷ դարի 70-ական թվականներին։ Դա, ի հակադրություն իր նախորդների, ոչ թե անմիջական տպավորությունների, այլ դարաշրջանի տրամադրության արդյունք է։ Թերևս այդ տեսակետից նրա ողբը կարելի է համեմատել Ստեփանոս Օրբելյանի ողբի հետ, որը նույնպես արտահայտում է դարաշրջանի տրամադրությունները և նպատակ ուներ բարձրացնելով էջմիածնի վարկը՝ այնտեղ տեղափոխել ամենայն հայոց կաթողիկոսությունը, մի բան, որ կենտրոնաձիգ ուժերի հաղթանակն էր լինելու։

Ղրիմեցու ողբի մեջ պատկերված է ոչ թե մի քաղաքի, մի շրջանի ավերումը, այլ ամբողջ ժողովրդի ճակատագիրը, նրա վիշտն ու ողբումները, նրա կորցրած փառքը և այդ փառքի արցունքոտ վերապրումները, նրա ընդվզումն ու բողոքը դաժան ու անողոք ճակատագրի դեմ։

Այստեղ էլ, ինչպես Շնորհալու մոտ, Երուսաղեմն իբրև «այրի ի տրտմութեան», անբուժելի ցավով լցված, անմխիթար, իր վիշտն է կոծում.

Ի գիշերի ելաց լալով
Ջերմ յորդարուղխ արտասուելով.
Եմաց զծնոտս իւր ողբալով.
Անմխիթար ուստեք գոլով։
Որ աշխարհի էր նա պարծան,
Հեթանոսաց եղև կոխան։

Բնաւից ազատն եւ հարկահան
Լեալ հարկատու ծառայական[1]։

Հետո թախծալից շեշտով պատմում է գերության վարված իր ժողովրդի տառապանքները։ Սիոնի լայն ճանապարհներն «անտանելի սուգ զգեցան», երթևեկությունը խափանվեց, «լռեցին տօնք և տարեկանք», ժողովուրդը գնաց գերության.

Բարձաւ դստերցն Սիոնի
Վայելչութիւն անպատմելի.
Իշխանք նոցա խոյոց նմանի,
Սովին չգտյէ բոյս դալարի։
Զինչս իւրեանց որք ցանկալի,
Առեալ ետուն ի գին հացի,
Ցուեալ գնայինն ոչ ըստ մտի
Յակամայ զերչացն առաջի[2]։

Այդ ուղղակի հիշեցնում է Ջուղայի գաղթը, սովն ու սրածությունը, բայց դա ոչ թե մի առանձին դեպք է, այլ միահյուսվում է ամբողջ ժողովրդի ճակատագրի հետ[3]։

Այս ողբի մեջ կա ոչ միայն վիշտ ու հեծեծանք, այլև բողոք ճակատագրի դեմ, մի տեսակ ընդվզումն, մեղադրանք, որ ուղղված է ամենակալին։ Կարծես նա էլ Ֆրիկի նման ինչ-որ վեճ է ուզում բաց անել աստծո դեմ, բայց սկզբից առնում է նրա սիրտը.

---

[1] Ձեռագիր № 1495, էջ 113բ։

[2] Նույն տեղում, էջ 114ա։

[3] Պատահական չէ, որ մեր պատմիչները հաճախ դիմում էին Երեմիային: ԺԷ դարի սկզբի ավերածությունների և Ջուղայի գաղթի կապակցությամբ մի անանուն ժամանակագիր գրում է.

«Ո տայր գլխոյ իմոյ ջուր և աչաց իմոց աղբերս արտասուաց, զի լայի և ողայի զբեկումն ժողովրդեան իմոյ, որք ի մեղս մեռան և որք գերի վարեցան և ի հաւատոցն ուրացան. և եղեն յարկ բնակութեան նոցա աւերակ, ըստ մարգարէին թէ «եղիցի բնակութիւն նոցա աւերակ» և այլն, որպէս ի ժամանակս Երեմիայ մարգարէին եկիրն Հրէաստանի խոպանացաւ», տե՛ս. Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 186. կամ «Զարթիր, զարթիր Երեմիայ յուղինեալ կազմեայ ողբախառն լալոյն, կրկնեայ զվողընջուց ողբն. թէ «տղայքն հաց խնդրէին և ոչ ոք էր, որ բրդէր նոցա» և այլն: Տես Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 184։

Աստուած իմ քաղցր է և բարի
Արդար ի բանս յամենայնի.
Լուարուք ազինք զբանս յայտնի
Զի ես զնա բարկացուցի[1]։

Սակայն նա չի շարունակում ինքնաձաղկումը, այլ դիմում է «Արդար ի բանս յամենայնի» աստծուն, արտահայտիչ բողոքի շեշտով.

Դո՛ւ արարեր զայս ով տէր իմ,
Որ թշնամեացս յոտնահարիմ.
Զժամանակս ի վերայ իմ,
Դո՛ւ կոչեցեր զի վայ իցեմ[2]։

Կարծես դառնությամբ ուզում է գթած տիրոջ աչքը բաց անել, զգաստացնել, որ ուշ դարձնի իր դաժան ու անողոք արարքի վրա.

Հայեաց և տես, տէր իմ գթած,
Ում արարեր զայս ճռաքաղս.
Թէ կերիցեն մարք զողայս,
Զորս կրէին ի յորովայնս[3]։

Բայց ազավոր այրու աղոթքն ու աղերսը հիշաչար ու ոխակալ տերը չի ուզում լսել, նա նույնիսկ ամպերով ծածկել է երկինքը, որ ոչ մի ձայն իրեն չհասնի.

Սրտմտութեամբ և բարկութեամբ մեզ այց ելեր,
Զմեզ հալածեալ ոչ անխայեալ կոտորեցեր։
Զերկինս ամպօք շրջապատեալ ամրացուցեր,
Զի մի հասցեն ի լսելիսդ աղօթքք մեր։
Արհամարհեալ մերժեալ զմեզ յետս ընկեցեր,
Ի մէջ զօրաց հեթանոսաց անարգեցեր[4]։

Իհարկե, Ղրիմեցին, որպես դարի ծնունդ, հավատացյալ և կրոնավոր, չէր կարող մերժել աստծուն։ Այստեղ էլ մեղքը պատժի

1 Ձեռագիր № 1495, էջ 114ա։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում, էջ 115ա։
4 Նույն տեղում, էջ 115բ։

աղբյուրն է, ապաշխարանքը՝ փրկության։ Բայց տեսնում ենք, թե որքան է նվազել քրիստոնեական խոնարհությունը։ Ճիշտ է, մեղքն է պատժի աղբյուրը, բայց դա արդեն կարծես ասված է սոսկ ավանդույթով և պատշաճության համար։

Լացող մայրը դառնությամբ, թշնամանքով ու վրեժով է լցված իր ճնշիչների, հեթանոսների, ջարդիչների նկատմամբ։ Նա նորից է ապավինում աստծո հույսին, Աստված, որ այդպես անողոքաբար պատժեց իր որդիներին, թող պատժի և թշնամուն, եթե նա իրավամբ արդարադատ է.

Հայեաց տէր իմ ի հպարտութիւն անձանց նոցա,
Եւ հատուցես զհատուցումն ի գլուխս նոցա,
Արդարադատ իսկ իրաւամբդ հատոյ նոցա,
Ըստ պնդութեան կարծրացելոյ սրտից նոցա։
Հալածեսցես սրտմտութեամբ քով զնոսա,
Ներքոյ երկնից քով բարկութեամբ իսպառ ջնջեա[1]։

Կամ՝

Արա ճռաքաղ դու զնոսա
Զոր օրինակ արար ինձ նա։

Նա աստծո շնորհը չի հայցում երկնքում, հոգու համար, ինչպես մյուս ողբերգուները.

Զի թէ Քրիստոս կամի փրկել
Յանօրինաց մեզ ազատել
Թէպէտ մարմնովս աստէն տանջել
Անդէն հոգւով մխիթարել[2]։

Գրում է Ազարիա Սասնեցին։ Ոչ։ Ղրիմեցու մոտ «յանօրինաց ազատվելը» ոչ թե անդեն հոգով մխիթարվելու մեջ է, այլ հենց անօրենների ոչնչացման։ Այդպիսով ողբը իմաստավորվում է, փրկության գաղափարն ազատագրվում է հայեցողական, թույլ շեշտերից և ստանում համեմատաբար ավելի մարտնչող բնույթ։ Այստեղ, իհարկե, արտացոլված է դարաշրջանի ոգին։

1 Ձեռագիր № 1495, էջ 115բ։
2 «Հանդէս Ամսօրեայ», 1936, էջ 336։

Ինչպես տեսնում ենք, համակերպության տեղ վրեժխնդրության զգացումն է դրված, և մեղքը կորցրել է իր քրիստոնեական խորհուրդը։ Այստեղից էլ ժողովրդի անկման, գերևարության ու թշվառության պատճառը, իր անմիջական նախորդների պես, բայց որոշակիորեն ավելի ակնառու և շեշտված՝ Ղրիմեցին փորձում է գտնել ավանդական մեղքից դուրս քաղաքական դրության մեջ։ Այդ ամբողջ դժբախտությունը չէր լինի, եթե երկիրը չզրկվեր ռազմական ուժից և պետական իշխանությունից։ Ազգի բեկման ժամանակը հենց այդտեղից է գալիս.

Զնչեաց զիմոյս ազգի իշխան.
Զզօրս ընտիր և զօրական,
Ի վերայ իմ զազգն անարժան.
Կոչեաց խեթիւ դահճանման[1],

Նա իր երկրի իշխանների ու թագավորների «ի հեթանոսս» գերի գնալը և անարգվելը նշում է մեկից ավելի տողերում, մի քանի անգամ, դրա մեջ անշուշտ դնելով հատուկ բովանդակություն։

Ողբացող այրին ունի ազգային արժանապատվության խոր գիտակցություն։ Նա մի ժամանակ եղել է մեծ և հզոր «ընաւից ազատ և հարկահան», «մայր սրբութեանց», «փառաւոր», «աշխարհի պարծան», ունեցել է իր փառահեղ արքաներն ու իշխանները, նա իր անկման մեջ չի համակերպվում իր նվաստացման հետ։ Դա անհրաժեշտ էր՝ ժողովրդի մեջ ազգային հպարտության գիտակցություն արթնացնելու համար, որը ոգի և շունչ է տալիս։ Մեծափառ ու հերոսական անցյալի վերհուշը մարդու ազգային զգացումները շոյում է և ստրկական վիճակը անհարիր ու անտանելի դարձնում։ Այդպիսով սույն ողբն ունի վարակիչ, ոգեշնչող և հայրենասիրական բնույթ։

Մարտիրոս Ղրիմեցու «Ողբ Երեմիա մարգարէին» մի հետաքրքիր օրինակ է, թե ինչպես Աստվածաշունչը միջնադարում եղել է ստեղծագործական անսպառ աղբյուր, որտեղից թեմաներ են քաղել և արտահայտել հակընդդեմ գաղափարներ։

Ղրիմեցու ողբի լրիվ վերնագիրը ձեռագրում այսպես է. «Ողբ Երեմիայ Մարգարէին, որ է երրայեցերէն Թրէնի, պարզեալ ոտանաւոր չափով ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ»։ Վերնագիրը

[1] Ձեռագիր № 1495, էջ 114ա։

ճիշտ է արտահայտում նրա ստեղծագործական աշխատանքի բնույթը։ Նա «ոտանաւոր չափով պարզել» է, այսինքն չափածոյի է վերածել Երեմիայի ամբողջ ողբը, բաց չթողնելով ոչինչ, բացի վերջին 5 գլխից։ Բայց դա սոսկ ձևով արված արհեստական գործ չէ, ինչպես, ասենք, Մագիստրոսի «Հաղարտողեան»-ը։ Ակնբախ երևում է Ղրիմեցու վարպետությունը։ Համեմատելու համար բերենք մի երկու օրինակ.

Երեմիա Մարգարե

Պակասեցին աչք իմ յարտասուաց. խռովեցաւ որովայն իմ. յերկիր լուծան փառք իմ ի վերայ բեկման դստեր ժողովրդեան իմոյ. ի սատակել տղայոց ստնդիեցաց ընդ ամենայն փողոցս քաղաքին[1]։

Մարտիրոս Ղրիմեցի

Արտօսր աչացս պակասեցան,
Խռովեցաւ իմ լորովայն,
Փառք իմ անկեալ յերկիր լուծան
Ի վերայ իմ ազգիս բեկման։
Դստեր իմոյ ժողովրդեան
Տղայքն սպառ սատակեցան,
Ստնդիայքն ցիր և ցան
Եղեն փողոցս ընդ ամենայն[3]։

Երեմիա մարգարե

Տես, Տէր եւ հայեաց. ո՞ւմ արարեր այսպէս ճռաքաղ. եթէ կերիցեն կանայք զպտուղ որովայնի իւրեանց, արարեր ճռաքաղ. արկեր ի ներքս զխոհակերս, զենուլ ի ներքս ի սրբութեան տեառն զտղայս ստնդիայս, զքահանայն եւ զմարգարէն[2]։

Մարտիրոս Ղրիմեցի

Հայեաց և տես, տէր իմ գթած,
Ո՞ւմ արարեր զայս ճռաքաղս.
Թէ կերիցեն մարք զտղայս,
Զորս կրէին ի լորովայնս։
Քանզի նման խոհակերաց
Ի տունն տեառն արկին զտղայս
Եւ անդ զենին զստնդիայս,
Զմարգարէն և զքահանայս[4]։

Այսպես շարունակվում է մինչև վերջ միևնույն հարազատությամբ։

Երբեմն Ղրիմեցին որևէ միտք ավելի շեշտված ասելու համար շեղվում է բնագրից, օրինակ. Երեմիայի «Զնչեաց ի միջոյ իմ-

[1] Երեմիա Բ. 11։
[2] Նույն տեղում, Բ. 20։
[3] Ձեռագիր № 1495, էջ 114բ։
[4] Նույն տեղում, էջ 115ա։

մէ ընտիր ընտիր զօրաց խմոց» արտահայտության դիմաց դնում է.

Զնջեաց զիմոյս ազգի իշխան
Զզօրս ընտիր և զօրական։

Ղրիմեցու մոտ ողբը դարձել է ավելի պարզ։ Նյութին հարազատ մնալու պայմանականությունը ոչ մի բռնազբոսիկ բան չի մտցրել նրա ողբի մեջ, ընդհակառակը, չշեղվելով բնագրից՝ նա միաժամանակ տվել է մի ինքնարուխ, ազատ երկ, որը նույնիսկ որոշ տեղերում գերազանցում է բնագրին։ Օրինակ.

Երեմիա մարգարե

Զի՞նչ վկայութիւն վկայեցից քեզ. կամ զի՞նչ նմանութիւն նմանեցուցից զքեզ, դուստր Երուսաղէմի. ո՞վ մխիթարեսցէ զքեզ, օրիորդ դուստր Սիոնի, զի ծանրացաւ բաժակ բեկման քո, իսկ ո՞վ բժշկեսցէ զքեզ[1]։

Մարտիրոս Ղրիմեցի

Վկայութիւն զի՞նչ տաց ես քեզ
Կամ յինչ նման, եղից զքեզ,
Կամ քեզ նման զո՞ բերից քեզ։
Սաղիմայ դուստր, ասա զքեզ,
Արդ ո՞վ լիցի մխիթար քեզ,
Սիոնի դուստր, որ հեծեծես,
Բաժակ բեկման քոյ լցաւն է մեզ,[2]
Իսկ ո՞ կարէ բուժել զքեզ։

Ասվեց, որ նա գրեթե ոչ մի հավելում չի արել Երեմիայի ողբի մեջ և աշխատել է ամեն կերպ հարազատ մնալ, բայց ոգու տեսակետից ինչ-որ մի նկատելի փոփոխություն կա։ Երեմիայի ողբը ավելի է լալահառաչ և հուսակտուր. ուժեղ է լացի շեշտը, որն արտահայտվում է կրկնվող բառերի մեջ. «Լուարուք, լուարուք զայս», «Զեզ ասեմ, ձեզ ասեմ», «Եւ եղեւ ինձ վայ, վայ» և այլն։ Ղրիմեցին մի կողմ է թողել այս պաղատագին, լալահառաչ կանչերը և դրա փոխարեն բողոքն ու ընդվզումն ավելի շեշտել։ Հատկանշական է, որ Ղրիմեցին կանգ է առել Դ գլխի վրա և չի չափաբերել վերջին Ե գլուխը, որտեղ Երեմիան նորից ողբում է իր երկրի վիճակը և ուր հուսահատ դանդատ կա առ աստված։ Այդ գլուխը վերջանում է աղերսով. «Դարձո զմեզ, Տէր, եւ դարձցուք. նորոգեա զմեզ, Տէր,

[1] Երեմիա Բ. 13։
[2] Ձեռագիր № 1495, էջ 114բ։

իբրեւ զաւուրսն զառաջինս։ Զի մերժելով մերժեցեր զմեզ, բարկացաւ սրտմտութիւն բարկութեան քոյ ի վերայ մեր մինչեւ ի սպառ»[1]։ Մարտիրոս Ղրիմեցին հարմար է գտել կանգնել Դ գլխի վրա, որը վերջանում է հաղթական փառերգությամբ, հուսալիր, պայծառ շեշտերով։ «Ցնծա դու և ուրախ լեր դուստր Եդովմայեցւոց, որ բնակեալդ ես յերկրիդ Աւստացւոց. եկեսցէ բաժակս այս ի վերայ քո. յարբիցես եւ արբցես, արբեսցիս եւ անդրէն դարձուցես»[2]. և այդ պես նույն շնչով մի պարբերություն ևս։

Ղրիմեցին հենց այդ տողերով էլ վերջացնում է իր երկը.

Ցնծա և ուրախ լեր դուստր Եդոմացւոց,
Որ ես դու բնակեալ յերկրիդ յՈւտրացւոց,
Եկեսցէ բաժակս այս ի վերայ քոյոց
Արբցես և արբեսցիս ժայթքեսցես խորոց[3]։

Դա լավատեսության մի ցնծալից պոռթկումն է, որը դառնում է հույս և հավատի հիմն։

Ղրիմեցին ողբը չափածոյի է վերածել ոչ միատարր ձևով, սակայն այն իր բազմերանգության մեջ կանոնավոր է։ Ինչպես ասվեց, չափաբերված են չորս գլուխներ։ Նա առաջին երկու գլուխները, նկատի ունենալով նրանց բովանդակությունը, միացրել է և գրել 8 վանկանի ությակներով, իսկ վերջին երկու գլուխները տարբերակված են։ Գ գլուխը գրված է 12 վանկանի վեցյակներով, իսկ մի գլուխը՝ 11 վանկանի քառյակներով։ Յուրաքանչյուր գլուխ բաղկացած է 22 տնից եբրայական այբուբենի թվին համասար, և հենց այդ այբուբենով էլ թվագրված՝ Ալեֆից մինչև Թավ։ Առաջին գլուխն ունի 44 տուն, որովհետև միացվել են երկու գլուխները, և այբուբենը կրկնված է։ Հանգավորումը նույնպես միօրինակ չէ։ Ամեն մի տան հանգը փոխվում է հաջորդաբար. այսպես՝ լալով—գոլով, նեղութիւն—գերութիւն, անվախ—ձախ, տարեկան—ամենայն և այլն, բայց տները նույնահանգ են։ Այս ամենը հնարավորություն է տալիս, որ երկը կարդացվի առանց ձանձրույթի և հոգնության։

[1] Երեմիա Ե. 21, 22։
[2] Նույն տեղում, Հ. Դ 21։
[3] Ձեռագիր № 1495 ք 116ա։

Ողբը, շատ հավանական է, գրվել է երգվելու նպատակով, կամ հետագայում մեծ ընդունելություն գտնելով՝ երգվել է։ Ձեռագրի մեջ երկրորդ գլխի սկզբում այսպիսի ցուցմունք կա. «Փոխէ, ի Մեղականի գոյնն ասա, ով եղբայր», իսկ երրորդ գլուխը սկսվում է այսպես՝ «փոխէ Յովասափի գոյնն է, ով եղբայր բարի»։ Այդ նշանակում է, որ ցուցմունքներ են տրված, թե ինչ եղանակով պիտի երգել, նշելով տիպայինը։

Ղրիմեցու «Ողբ Երեմիա մարգարէին»-ը ուրույն ստեղծագործություն է։ Եթե Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ»-ն վիպերգական երկ էր քնարական շնչով, իսկ Թոխաթեցիների ողբերը պատմական բնույթ ունեին, ապա այս ուղղակի քնարական գործ է և որպես այդպիսին հետաքրքիր օրինակ՝ մեր միջնադարյան գրականության մեջ։

Ղրիմեցին գրել է «Կարգ և թիւ թագաւորաց ազգիս հայոց» չափածո ժամանակագրությունը։ Նա այդ աշխատանքի համար օգտվել է Խորենացուց և այլ պատմիչներից, որոնցից հիշում է Պոլիկրատին։ Ժամանակագրությունը գրված է ՌՃԻԱ (1672) թվականին։ Գուցե ժամանակագրությունը իբրև պատմական երկ որևէ արժեք չի ներկայացնում մեզ համար, բայց նրա նշանակությունը բարձրանում է մեկ այլ առումով։

ԺԶ—ԺԷ դարերում Ղրիմեցու ժամանակագրությունը, ուր հայ թագավորների ազգաբանությունն է տրված, որպես այդպիսին եթե ոչ միակը, ապա շատ հազվագյուտ օրինակ է[1]։ Մինչ այդ հայ ժողովրդի պատմագրության ավանդույթը խզվել էր։ Եթե առաջ մեր գրեթե բոլոր պատմիչները իրենց բուն պատմությունը շարադրելիս նախ, որպեսզի ընդհանուր կապ ստեղծվի, համառոտ պետք է անցնեին հայ ժողովրդի բիբլիական ծագումից՝ տալով հայազն թագավորների մի միասնական շղթա, որով կարծես նպատակ էր դրվում հիշեցնել մեր անցյալը, պետական ու քաղաքական հզորությունը և ցույց էր տրվում, որ եղել ենք առանձին ինքնուրույն և ինքնակա ժողովուրդ, ապա վերջին դարերում այդ մոռացության տրվեց։ ԺԶ դարից սկսած մեր պատմիչները հայ թագավորների փոխարեն, որպես կանոն, դնում են հույն, պարսիկ կամ թուրք իշխող հարստությունների ազգաբանությունը, իսկ հայ անցյալի մասին հիշատակություններ եթե կան, ապա չափազանց հպանցիկ, անորոշ և անկարևոր։ ԺԷ դարի ամենամեծ պատմիչը՝ Առաքել Դավրիժեցին էլ չի հիշում հայ քաղաքական անցյալը։ Դա բացատրվում է ազգային ոգու և ազգային գիտակցության անկումով։

[1] Հայտնի է Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը, որն ընդգրկում է Հաբեթից մինչև հեղինակի ապրած ժամանակը (ԺԷ դար)։

Մարտիրոս Ղրիմեցու չափածո ժամանակագրությունն առաջիններից է, ուր, իբրև քաղաքական վերհուշ, շարադրված է մեր պատմությունն սկզբից մինչև Կիլիկյան թագավորության անկումը։ Սա էլ, ինչպես ողբը, նոր արթնացող ազգային գիտակցության ծնունդն ու արտահայտությունն է։

Ղրիմեցին իր այս չափածո ժամանակագրությունը գրել է հենց այդ գիտումով։ Գրելով հայոց ազգաբանությունը, նա նպատակ է դրել ժողովրդի մեջ արթնացնել ազգային զգացումներ և վերականգնել մեռած ու խզված ավանդույթը։ Հավանական է, իր նպատակը նա հուշել է վերջաբանում, որը չկա մեր ձեռքի տակ եղած ձեռագրի մեջ։ Վերջաբանի մասին գիտենք Հ. Տաշյանի «Ցուցակ»-ից որտեղ բերված է այս երկու տողը ՌՃԻԱ թվականից հետո.

Ուղղաշափիղ նախնեաց մեր վէպ
Եւ օրինակ մեզ անվրէպ[1].

Ուրեմն մեր «նախնեաց վէպը» նա շարադրել է «անվրէպ օրինակի» համար և ոչ թե այնպես, ինքնանպատակ։ Այդպես է հասկացվել և մեկնաբանվել նաև ժամանակակիցների կողմից։ Վիեննայում գտնվող միևնույն ձեռագրի նախագաղափար օրինակի գրիչը տալիս է այսպիսի հիշատակարան.

Արդ Մարտիրոս պեան երջանիկ
Գրեաց զայս ճառս գեղեցիկ։
Տեսիլ հիքոյս որ թըշուառիկ,
Գաղափարեալ տենչիւ սաստիկ։

[1] Այս այնուհետև 10 տող, որը դժբախտաբար չի բերել Տաշյանը։ Բնագիրը գտնվում է Վիեննայում։

Ստանալ յանձին զայս գանձս առատ
Եփրեմ շնչինս որ ապիրատ
Աբեղայէս կալուք խըրատ
Ճառիցս եւ զայս մի թողուք զատ։
Գաղափարել որք կամիցին,
Սակաւիկ բանս կից ունիցին,
Բայց որք ըղսա փնեկտեցեն,
Կրկին կենաց զուրկ եղիցին։
Ի ժամանակս որ վըշտապատ,
Ազգին վարեալ ի խորխորատ,
Նուաճեալ յազգացն որ անհաւատ.
Վասն այն գրեալ աստ զայս դրւատ[1]։

Ահա թե ինչու է հայ անցյալի մասին այդ դրվատը գրվել։ Որքան էլ այժմ Ղրիմեցու ժամանակագրությունը մեզ համար քիչ նշանակություն ունենա, ժամանակակիցների կողմից դիտվել է իբրև մի գեղեցիկ ստեղծագործություն, «գեղեցիկ ճառ», որը գաղափարել են «անենչիւ սաստիկ» և մեծ դեր է խաղացել ազգային գիտակցության զարթոնքի համար։

Ինչպես ողբի մեջ, այստեղ էլ Ղրիմեցին երկրի անկման ու դժբախտության պատճառները փնտրում է, բայց ավելի հետևողականորեն, ոչ թե մեղքի, այլ պետականության վերացման մեջ։ Մեղքի մասին կա միայն սոսկ հեռավոր հիշատակություն։ Ինչպես ողբի մեջ, այնպես էլ այստեղ, վեր հանելով մեր ժողովրդի հերոսական անցյալը, նա դրանով արթնացնում է հպարտության և հայրենասիրության զգացում։ Ժամանակագրությունը վերջանում է, ինչպես ասվեց, Կիլիկյան թագավորության անկումով, որից հետո երեք տան մեջ նշել է հայ ժողովրդի ամբողջ հետագա բախտը.

[1] Տաշյան. Ցուցակ, էջ 940։

Այս ձեռագիրը ընդօրինակություն է մի սկզբնագաղափար օրինակի, որի գրիչն է եղել Եփրեմը։ Այդպիսով նա ժամանակակից է դառնում Մարտիրոս Ղրիմեցուն։ Վիեննայի Ձեռագիրը ԺԸ դարի է, իսկ նախագաղափարը կարող է ԺԵ-ի լինել։ Այդ Եփրեմը ամենայն հավանականությամբ Մարտիրոսի աշակերտն է։ Ժամանակակից լինելը նկատվում է նրա խոսքերից՝ «Մարտիրոս պետն երջանիկ»։ Եփրեմը (Եփրեմ Երաժիշտը) ընդօրինակել է նաև մեր Մատենադարանի № 1495 և պատմիրել № 7717 ձեռագրերը, որոնց մեջ նույնպես զետեղված են Մարտիրոսից մեծ թվով գործեր։

Եւ աստանօր բանքս վերջին,
Պատմաբանեալքըս զրուցին,
Արքայք եւ պետք մեր սպառին,
Իշխանաղունք միջոյ բառնին։

Յեղք հայկազնիցս վրդովին
Եւ աստ եւ անդ վտարանդին,
Ոմանք պարսից մասին դիպին,
Ծառայօրէն յայնց նուաճին։

Եւ կէսք թուրքաց գոռոզ ազգին,
Լեալ հարկատու հալեալ մաշին,
Յօտարացեղ ազանց նեղին
Ըստ Ներսէսի սրբոյ բանին[1]։

Ղրիմեցին այլևս չի շարունակել, որովհետև համոզված է, որ եթե չկա սեփական իշխանություն, պետականություն, չկա և երկրի պատմություն։

Այնուհետև ավանդույթը նորից կենդանանում է, հանդես են գալիս պատմական անցյալը արտացոլող երկեր։ Ընդհուպ ԺԸ դարի շեմքին, 1698 թվականին Մինաս Համդեցին գրում է մի ժամանակագրություն «Ազգաբանութիւն հայոց» վերնագրով, «համառօտ ծաղկաքաղ արարեալ և ի բուն պատմութեանցն հանեալ», որը պատմական արժեք չունի, բայց հետաքրքիր է որպես երևույթ։ Լեոն այդ տեսակետից արժեքավորում է նրա դիրքը. «Կարո՞ղ ենք արհամարհել նրան, կարո՞ղ ենք մոռանալ այն թշուառ փաստը, որ ժամանակակից հայի համար այդ աղքատութիւնն էլ հարստութիւն էր։ Գոնէ նա անուններ էր սովորեցնում և այդ անունների հետ կապում էր մի՛ քանի ածականներ։ Առանց Համդեցու օգնութեան հայը չէր կարող նոյնիսկ այդքան խղճուկ տեղեկութիւններ ստանալ իր անցեալի մասին, քանի որ նրանք ցրուած էին բազմաթիւ պատմագրութիւնների մէջ, որոնց գտնելը միայն ահագին դժուարութիւն էր»[2]։

[1] Ձեռագիր № 1495, էջ 142 բ.

[2] Լեո, Հայկական տպագրութիւն, հ. Ա, Թիֆլիս, 1904, էջ 385։

Համդեցու ժամանակագրությունը արձակ է. սխալաշատ և չփաթ. օրինակ, նա Կիլիկյան թագավորության անկումը դնում է 1458 թվականին։ Երկու ժամանակագրությունները միմյանց հետ ոչ մի առնչություն չունեն, բայց այն, որ երկուսն էլ հայ ժողովրդի պատմության վաղ շրջանը քաղել են

Ղրիմեցին ունի և մի ուրիշ պատմական երկ, դարձյալ չափածո, «Պատմութիւն Ղրիմայ յերկրին»:

Չգտնելով պատմական աղբյուրներ, երկի նյութը նա քաղել է անգիր զրույցներից.

Քանզի պատմագրոց չունիմք նախնական
Գրեալ վասն նորին պարզ և յայտնի բան,
Այլ անգիր զրուցաց յարմար և պատկան
Առեալ կամիմ լինել նորա պատմաբան:

Նա համառոտ շարադրում է Ղրիմի պատմությունը՝ հույների նախնական բնակությունից մինչև ջալալիների խռովությունը[1], Ղրիմեցին հիշում է հայերի երկու մեծ արտագաղթ դեպի Ղրիմ, 1331 թվականին՝ Անիի կործանումից հետո և 1601 թվականին՝ ջալալիների արշավանքների ժամանակ:

Խորենացու: Ղրիմեցին իր ժամանակագրության սկզբում մինչև Բագրատունիների թագավորությունը չի նշում իշխողների ժամանակը երբեմն համառոտ չհամարելով և հավաստ չընծայելով, իսկ Համդեցին նշում է: Ղրիմեցին Արշակունիների թագավորության անկումից մինչև Բագրատունիների հարստության սկիզբը թվում է իշխողներին, իսկ Համդեցին այդ շրջանը բաց է թողել: Այս համեմատությունները, ինարկե, հպանցիկ են և մակերեսային: Հավանական է, որ Համդեցին իր երկը գրել է Ղրիմեցու ժամանակագրության գոյության փաստի ազդեցության տակ: Նա միևնույն միջավայրի մարդ էր, եկեղեցական գործիչ և մոտիկից ճանաչել է Ղրիմեցուն:

[1] Ղրիմեցու պատմածը սկզբից մինչև Կաֆայի առումը և հայերին կոտորելը զարմանալիորեն համընկնում է մի հիշատակարանի, որ հրատարակել է Ալիշանը իր «Հայապատում» մեջ (էջ 580—582): Միևնույն ձևով են ներկայացված ոչ միայն պատմական դեպքերն ու շարժառիթները, այլև կան ոճական ու արտահայտչական շատ նմանություններ: Միայն որոշ թվականներ չեն բռնում: Ըստ Մարտիրոսի թիփչախների գալը Ղրիմ ընկնում է հայոց 500 թվականին, իսկ ըստ հիշատակարանի՝ 491, հայերի՝ Ախտարայից Թեոդոսիա և շրջակա վայրեր գաղթելը Ղրիմեցին դնում է 780 թվականին, իսկ հիշատակագիրը՝ 779, Շիրինի իշխանի և թաթար խանի գժտությունը՝ 924 թվականին, հիշատակագիրը՝ 917 և այլն:

Դժվար է պարզել, թե որտեղից է գալիս նմանությունը, մանավանդ հիշատակարանի աղբյուրն ու ժամանակը, համաձայն իր սովորության, Ալիշանը չի նշել, սակայն կարծում ենք նրանից՝ որ և՛ Ղրիմեցին, և՛ հիշատակագիրը հենվել են ժողովրդական զրույցների վրա, որոնք միևնույն հենքն են ունեցել:

Ղրիմի մասին պատմական աղբյուրները շատ են կցկտուր: Մարտիրոս Ղրիմեցու այս չափածո պատմությունը, այլ սակավ նյութերի հետ միասին, անշուշտ, ներկայացնում է որոշ պատմական արժեք: Հետաքրքիր, նույնիսկ գեղարվեստորեն է տրված երկրի բնանկարը, տեղագրությունը և այլն:

Այս երկում որոշ նմանության եզրեր կան «Ողբ»-ի հետ: Ղրիմեցին նորից առիթ է գտնում հիշելու հայոց պետականությունը, «քաղաքն մեծ Անին», որը տունն է «հայկածին զաւակաց» և «գահոյք թագաւորաց Բագրատեան ցեղի»: Բայց հայոց իշխանության անկումը, այստեղ ևս, մի քիչ ավելի շեշտված, նա բացատրում է մեղքով:

Հայ ժողովրդի անցած արյունոտ ուղին և ճակատագիրը, ինչպես տեսնում ենք Ղրիմեցու «Ողբ»-ից և պատմական երկերից, շատ է հետաքրքրել և զբաղեցրել նրան:

Ղրիմեցուն է պատկանում և մի վարդապետական գավազանագիրք, Մխիթար Գոշից սկսած և վերջացրած իրենով, որն ունի սոսկ պատմական արժեք[1]:

Գ.

Մարտիրոս Ղրիմեցու ժառանգության մեջ հիմնական տեղ են գրավում երգիծական ստեղծագործությունները, որոնք ամբողջացնում են նրա գրական նկարագիրը:

Հայ միջնադարյան երգիծաբանության մեջ Ղրիմեցու տեղը որոշելու համար անհրաժեշտ է մի փոքր կանգ առնել այն հարցի վրա, թե ինչ աստիճանի էր երգիծանքը մինչև Ղրիմեցին:

Վաղ միջնադարում մեր գեղարվեստական գրականության մեջ երգիծանքը որպէ զարգացման չհասավ: Ճիշտ է, պատահում են երգիծական սրամիտ արտահայտություններ՝ ցրված առանձին նախադասությունների մեջ մեր պատմիչների երկերում, ճառերում, դավանաբանական վիճաբանություններում և այլուր, բայց դեռ երգիծանք չկար: Չի կարելի նշել մի երկ, որը գրված լինի երգիծական շնչով: Բայց Ժ դարից սկսած արդեն ավելի է ակնառու դառնում

[1] Հար և նման գավազանագիրք կա նաև Առաքել Դավրիժեցու մոտ, չնչին տարբերություններով: Տե՛ս «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ». Վաղարշապատ, 1896, էջ 440—442:

երգիծական տարր։ Առակները, որոնցով մեր միջնադարն այնքան հարուստ է, ինքնին երգիծական սքանչելի ստեղծագործություններ են։ Առանձին հեղինակների մոտ առաջ է գալիս երգիծելու լուրջ տրամադրություն։ Այդ շնչով են գրված Գրիգոր Մագիստրոսի որոշ թղթեր. Ներսես Շնորհալին իր «Ողբ Եդեսիոյ»-ի մեջ և հանելուկներում երգիծելու փայլուն, բայց սակավ օրինակներ է տվել. Ֆրիկի մոտ դժգոհությունը և բողոքը ձգտում էր հասնել երգիծանքի աստիճանի, բայց կանգ առավ կես ճանապարհի վրա։ Հետագա հեղինակները ևս գրել են երգիծաշունչ ստեղծագործություններ։ Օրինակ. Հովհաննես Թլկուրանցուն վերագրված մի բանաստեղծություն, որն ուղղված է արբեցության դեմ, համեմված գռեհիկ երգիծանքով.

Փախէ զերեսն ի վերայ դնէ,
Շունն գայ զբերանն լիզէ,
Նա հանց գիտէ թէ իւր կինն է,
Նկեալ զբերանն կու սրբէ[1]։

Այսպես, կարելի է ուրիշ օրինակներ էլ բերել, բայց դրանք չեն տանում որևէ ընդհանրացման և մնում են մեր ծավալուն գրականության մեջ պատահական ու համր։

Որևէ բանի նկատմամբ բացասական վերաբերմունքը, որևէ բանի ժխտումը, քննադատությունը դեռևս երգիծանք չէ։ Վաղ միջնադարում մենք ունենք շատ մարտաշունչ երկեր, որոնք արտահայտում են ժխտական տրամադրություն, բայց հեռու են երգիծական լինելուց։ Դրա համար կյանքի և կենսահայեցողության մեջ անհրաժեշտ էր ինչ-որ մի փոփոխություն, որը ստվերագծվում է արդեն ԺԶ դարի վերջին և ԺԷ դարի սկզբին։

Վաղ միջնադարում մեր գրականության մեջ հող չկար երգիծելու համար։ Կրոնական ոգին, քրիստոնեական համակերպումը, մեղքի ծանր գիտակցությունը տանում էին ինքնաձաղկման, ողբի։ Արտաքին թշնամին այնքան էր սարսափելի, որ չէր կարող ծաղրելի լինել, իսկ ներքին կյանքը միջնադարյան հայ գրականության մեջ անուղղակիորեն էր արտացոլվում։ Այդ, անշուշտ, վերաբերում է գրականությանը, բայց ոչ ժողովրդի բանավոր ստեղծագործությա-

[1] Կ. Կոստանեանց. Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892, էջ 41։

նը, ժողովուրդ, որը միշտ, ամեն պարագաներում պահում է իր հիանալի աննկուն ոգին և թշնամուն, որի հանդեպ նա իրեն զգում է անպարտ և ուժեղ, երգիծելու անզուսպ մղումը։ Ահա այդպիսի ժողովրդական երգիծանքի հիանալի առկայծումներ կան Հովհան Մամիկոնյանի և Փավստոս Բուզանդի մոտ և դրա բարձր արտահայտությունն է Սասունցի Դավիթ անմահ ու անզուգական վեպը։

Երգիծանքը կապված է հասարակական կենսունակության բարձր վերելքի, կյանքի մեջ ներքին սուր բախումների հետ, և նրա կրողն այն խավն է, որն ամբարում է այդ կենսունակությամբ, որը բախումների մեջ ուժեղ է։

Միջնադարում հայ հասարակական կյանքում այդպիսի վերելք նշմարվեց Ժ—ԺԳ դարերին, և ապա՝ երկրորդ անգամ՝ ԺԷ դարից սկսած, որը ծայր տվեց ազգային ազատագրական գաղափարների զարգացմանը։ Երկու շրջաններն էլ նշանավորվեցին երգիծանքի համապատասխան զարգացմամբ՝ Ժ—ԺԳ դարերին առակագրության, իսկ ԺԷ-ից սկսած՝ գրական մյուս սեռերում, հատկապես չափածո ստեղծագործության մեջ։

Ինչպես որ, առհասարակ, ամեն բանի սկիզբը չի կարող կատարյալ և անթերի լինել, այնպես էլ այստեղ։ Առաջին երգիծական ստեղծագործությունները կրում էին ավելի շուտ զավեշտական բնույթ։ Այդ սեռի լավագույն օրինակներ են «Ի վերայ ճանճի», «Վասն թիւթիւնի», Մինաս Թոխաթեցու «Վասն հէրիսի», Ստեփանոս Թոխաթեցու «Գանգատ ի ձեռաց լուոց եւ ճանճից», Պարսամ տաղասացի «Ի վերայ ակռայի», Մարտիրոս Խարբերդցու «Վասն չախուփին», և այլն։ Թեթև թեմաներ, թեթև նյութ և թեթև ոճ։ Բայց այնուամենայնիվ նրանք առաջին սաղմերն էին, որոնք ծլարձակեցին այնպես վտիտ, բայց հետո տվեցին լիքը, հարուստ, կենսահյութերով ալեցուն հասկեր։ Չի կարելի համաձայնել այն տարածված կարծիքի հետ, ըստ որի իբր զավեշտական ստեղծագործությունները գրականության անկումն էին ստվերագծում, իբր թեմաները նեղանում էին և այլն։ Ընդհակառակը, դա ոչ թե միջնադարյան դասական բանաստեղծության վերջն էր, այլ նորի սկիզբը։

Երգիծանքը կապվում է հեգնանքի և ծիծաղի հետ, կենսախինդ տրամադրության հետ, առողջ ոգու հետ։ Լացող սիրտը չի կարող հանդուրժել լույսի ոչ մի շող, ոչ մի ժպիտ ու քրքիջ։ Եթե երգիծաբանը նույնիսկ ծաղրում է այնպիսի արատներ, որոնց նկատմամբ

305—4

նա դառնությամբ է լցված, ապա այդ դեպքում էլ նա բարձր է կանգնած և ունի ծաղրելիի նկատմամբ հեգնող, նույնիսկ ուրախ վերաբերմունք, որը ծնունդ է կյանքի հաստատման ու լավատեսության, կենսախինդ ոգու։ Առանց դրան երգիծանքը անմտածելի է։

Առաջին երգիծաբանական-զավեշտական գործերի մեջ արդեն կա այդ տրամադրությունը, պարզունակ ձևով, բայց արտահայտված է ուրախ, թեթև, ազատ ոգի, կատակելու և զվարճաբանելու միտում, մի բան, որը նոր տրամադրությունների արդյունք է և լուսանշում է երգիծանքի զարգացման ճանապարհը։

Ուրեմն որոշ նախադրյալներ արդեն կային, և մի քայլ էր մնում իսկական երգիծական ստեղծագործություններ տալու։ Այդ քայլը փորձում էին կատարել հենց իրենք՝ զավեշտագիրները, որոնք երբեմն հաջողում էին բարձրանալ զավեշտի աստիճանից։ Բայց դա ուղղակի վիճակվեց նրանցից մեկի՝ Ստեփանոս Թոխաթեցու աշակերտ Մարտիրոս Ղրիմեցուն։

Ղրիմեցին շատ բան է սովորել իր ուսուցչից և հենց Ստեփանոսից է գալիս երգիծելու մղումը։ Նրանց մեջ կա նույնիսկ թեմատիկ առնչություն։ Թոխաթեցին գրել է «Գովասանութիւն Կաֆայի քահանայից վերայ» նուրբ հումորով հագեցված ստեղծագործություն, ուր բնութագրում է Թոխաթի 26 քահանաներին և շատերին ներկայացնում ծաղրալի ձևով.

Ով տէր Սարգիս դու գրագիր
Կարճ ու բոլոր, լաւ եւ ընտիր.
Ըռախին, գինին ի կուլ տայիր,
Հանգչի հոգիդ, փառաւորիր։

—

Աստուածատուր սուրբ քահանայ
Խիստ պանպառակ, ծեր մասխարայ.
Եսել անունդ է հակակայ,
Հիւան ես նըման հայր Յովսեփայ։

—

Իսկ տէր Յակոբն բարձրակայ
Որ մանկանուամբն է Ալաճայ.
Յորժամ գոռայ, զբերանն բանայ
Շատ ոք վաղեն թէ կուլ կուտայ[1]։

[1] «Ազգագրական հանդէս», գիրք Թ, էջ 71։

Իսկ Մարտիրոս Ղրիմեցու ամբողջ երգիծական ստեղծագործության հիմնական հերոսը հայ հոգևորականն է, քահանան։ Այդ, իհարկե, չի բացատրվում սոսկ իր ուսուցչի հետ ունեցած թեմատիկ ազգակցությամբ։ Ընդհակառակը, հենց դա ունի մի ընդհանուր աղբյուր, ընդհանուր պատճառ։ Ազգային իշխանության բացակայության պատճառով հայ հոգևորականի դերը մեծ էր։ Նա էր համարվում միակ պաշտոնյան, միակ հասարակական գործիչը, որը պետք է ծառայեր ժողովրդին։ Բայց նա չէր կանգնած իր բարձրության վրա։ Այդպիսով հոգևորականները ժամանակի «ազգային ջոջերն» էին և նրանց ծաղրելը ուներ հասարակական-քաղաքական նշանակություն։

Ղրիմեցին իր կյանքի և ստեղծագործության բնաբան է դարձրել՝ վեր հանել բարին ու լավը և պայքարել չարի դեմ։ Այդ սկզբունքը լավ է ձևակերպված իր երգիծական ստեղծագործություններից մեկի առաջաբանում.

Նախնի հարանց մեր ընտրելոց
Պատուէր ունիմք հաստատական.
Վատարախաց գրել պարսաւ
Ու գեղեցկաց տալ գովասան։

Եւ ոչ ասել զչարն բարի,
Զխաւարն լոյս որ չէ աժան.
Այլ զբարուոյն-լաւ վկայել,
Զվատթարն չար ասել գրեցան։

Կենսագրության մեջ մենք հիշեցինք, թե ինչպես մի ապօրինի ամուսնության կապակցությամբ դիմում են նրան թույլտվություն ստանալու, նա մերժում է, չնայած օղաբաշիների և ենիչերիների միջամտության։ Նրանք խնդրում են գոնե լուռ մնալ, բայց Ղրիմեցին պատասխանում է. «Բան եւ գործ մեր այդ է ասաել. չարեացն չար ասել եւ բարեացն բարի»։

Ելնելով այդ սկզբունքից, նա սուր ծաղրի է ենթարկել հոգևորականության, և ոչ միայն հոգևորականության, արատները, բացահայտել և նշավակել նրանց կեղծավորությունը, չարությունը, ագահությունը և այլն։

Ղրիմեցու՝ հայ կրոնավորներին ուղղած երգիծական ստեղծագործություններից մեզ հայտնի են վեցը, որոնք իրենց թեմատիկայով և արծարծած խնդիրներով սերտ կապված են իրար հետ և միմյանց լրացնում են՝ կազմելով ստեղծագործական ամբողջություն։

Այդ շարքի մեջ երկուսը սյուժետային են, իսկ մյուս չորսը՝ բնութագրական։

«Միլիտարեցի Յակոբ երիցուն պարսաւանքն է» երկի սյուժեն համառոտաբար այս է։ Միլիտարեում սովորություն կար, որ Հարության երեկոյին ուտելիքը պատրաստում էին եկեղեցու մեջ և ժողովրդին բաժանում։ 1673 թվականին այնտեղ հյուր է լինում մի վարդապետ[1]։ Նրա համար էլ են բաժին հանում և պատվիրում Հակոբ երեցին, որ տանի, բայց սա թաքցնում և ինքն է ուտում։ Այս իրական փոքրիկ դեպքը Ղրիմեցին պատմում է այնպես կենդանի, գեղեցիկ ու սուր ոճով, ժողովրդական արտահայտություններով, որ դարձել է չափազանց հյութեղ ու ծիծաղաշարժ։ Ահա ինչպես գողացավ.

Բերին զարախն ու զփախլավան,
Մեծ երիցուն թէպլիմ արին.
Եւ նա առեալ եդիր տօլապն
Մինչև անցցէ զգեստ անձինն։

Հետո ձեռքերն ու ոտքերը դող են ընկնում («Դող էր ելեր ոտվին ձեռվինս»), մտածում է, թե ինչպե՛ս կարողանա գաղտնի տուն տանել.

Թէ երբ կարեմ տանել ի տուն
Մարդ չի տեսնէ մութն ի մթին,
Մէկ մի չի կայր, որ ղայն գողնայր,
Հրեշտակք ի վեր զարմանային։

Հաճույքով ուտում է իր մեջ ուրախանալով, որ ոչ ոք չտեսավ, բայց առավոտյան գաղտնիքը բացվում է և գող տերտերը խայտառակվում։

Նույնքան հետաքրքրական է և «Զիլայեցի երիցուն հավի գովասանքն է» չափածո երգիծանքը։

[1] Այդ վարդապետն ինքը Մարտիրոս Ղրիմեցին է։ 1673 թվականի Հարության (զատկի) երեկոն ընկնում է մարտի 29-ին, ուրեմն այդ ժամանակ նա գտնվել է Միլիտարեում։

Տեր Սիմեոնը իր հյուրերին պատվելու համար մի պառավից հավ է գնում և ուզում է եփել, բայց ինչ ճիգ որ գործադրում է, ոչինչ դուրս չի գալիս և հավը չի եփվում։ Շվարած տերտերը չգիտե ինչ անի։ Հետո ինչ-որ երկու հարբած այլազգիներ գալիս են և գիշերով ուտում հավը։ Այդպես քահանան հազիվ է պրծնում նրա ձեռքից։ _

Պատմությունն ընթանում է սկզբից մինչև վերջ ծիծաղելի դրություններով։ Խեղճ քահանան իրարանցման մեջ է։ Մարդկանց մոտ մի պառավի 12 դրամ է տվել ու գնել հավը, հետո էլ հյուրերին խնդրել, որ ոչինչ չուտեն, հիմա հավը կեփի։ Բայց հավը մի քանի ժամ կրակի վրա է ու դեռ «եփելու էլ նիշեթ չունի»։ Տերտերը չի վհատվում։ Սպասարկելու համար նշանակում է երեք մարդ. մեկը փայտ բերի, մյուսը ջուր կրի, իսկ երրորդը՝ եփի։ Ու նրանք եռանդով սկսում են գործել.

Տայիճ ի կեր զփայտն ի հրի,
Մշտածաւալ բոցն փայլի
Որպէս զհնոց Բաբելոնի
Եւ առաւել նա բորբոքի։

Բայց դարձյալ ոչինչ դուրս չի գալիս.

Յեռացմանէն, որ ուժգնակի,
Ցամաքեցաւ ջուրն ի սանի.
Եօթն ութ անգամ դարձեալ կրկնի
Չեղեւ հնար թէ հաւն եփի։

Մարդիկ խորհուրդ են տալիս, որ եթե մոմ գցեն ջրի մեջ կարող է եփվել։ Եվ տերտերը՝

Յեկեղեցւոյ պուճախն ընկնի
Մոմ մի գտնու չափ խիյարի
Զղե յեռման ջուրն հաւի,
Միթէ այնու հաւուկն եփի։

Գցված մոմը հալվում է և կանգնում ջրի երեսին։ Տերտերն ուրախանում է իր մտքի մեջ, թե հավը եփվեց ու յուղը փայլում է, բայց՝

Երբ զճաշակն եռես խաշուի
Ի մէջ բերնին մոմն սառի.

Նա նորից է սաստիկ սրտմտում և դառնորեն ողբում իր չարչարանքն ու արած ծախսերը.

Աւէ ուր կայր զայս բանս արի,
Որ խաբուեցայ ծեր պառւոյ մի.
Եօթն իշոյ բեռ փայտ վառեցի,
Մեկ երկու տիկ ջուր զայ արի։

Շատ սրամիտ է ծաղրված, թե ինչպես հեշտ էր ուզում պրծնել հյուրասիրությունից և ինչպես ընկավ անհարմար ու տխմար դրության մեջ։

Այս երկու գործերում էլ գրության կոմիզմն է իշխողը։

Ոչ պակաս սրամիտ են նաև նրա մյուս՝ բնութագրական ստեղծագործությունները, որոնց մեջ որևէ սյուժե չկա. բայց վեր են հանվել հերոսի բնավորության մի կամ մի քանի կողմեր՝ շատ հաճախ որոշակի օրինակներով ու ակնարկներով։

Իր այդ չափածո պարսավագրերում (պամֆլետներում) Ղրիմեցին ամբողջ ուժով ու խորությամբ մերկացրել, նշավակել է հայ եկեղեցականների ապականված, փչացած բարքերը, ցույց տվել նրանց անգաղափար, ամբողջովին կենցաղում թաղված սնամեջ կյանքը, դատարկ առօրյան։ Դա այն հոգևորականը չէ, որ մագաղաթների վրա կքած մեր ժողովրդի իմաստությունն էր առարկայացնում։ Հոգևոր խավի ամբողջ բարոյալքումը ոչ մի տեղ այնքան արտահայտիչ ու խորը չի ցուցադրվել, չի մերկացվել, բացի առակներից, որքան Ղրիմեցու չափածո երգիծական դիմանկարներում։ Տեր Սիմեոնը, Հակոբ երեցը, Տեր Հուսանը, Դավիթ երեցը, Տեր Հակոբը շնչող կերպարներ են, որոնք ուղղակի մարմնավորում են ժամանակի հոգևոր գործիչներին։

Այդպիսով, Ղրիմեցու կողմից ստեղծվել են ժամանակի մի խումբ հոգևորականների երգիծական չափածո դիմանկարները։ Բոլորն էլ պատմական անձնավորություններ։ Սակայն դրանով չի նեղանում Ղրիմեցու երգիծանքի բնույթը և չի թուլանում ընդհանրացման շեշտը։ Դիմագծելով իր հերոսներին, նա ժամանակի հոգևոր գոր-

ծիչների բարքերն է գեղարվեստորեն վերարտադրել, առանց ճնշվելու փաստագրական սահմանների մեջ։

Ղրիմեցին լավ է ըմբռնել երգիծանքի բնույթը։ Նա չի խուսափում չափազանցումներից. եթե դա օգնում է կերպարի բացահայտմանը և աշխատել է ստեղծել ծաղրելի վիճակներ։ Տալով Սիմեոն երեցի բնութագիրը՝ վերջացնում է այսպես.

Անմեղագիր թող մեզ լինայ
Տէր Սիմէօն որ ի Վառնա,
Կէսն է յըղորդ, կէսն շախայ
Աստուած իւրեանն նիաթ տայ։

Այսպիսով, բոլորը չէ, որ կարող է ճշմարիտ լինել, բայց պետք է մնալ ճշմարտացիության սահմաններում, որն անշուշտ հաջողվել է նրան։

Չնայած այդ վեց երկերի մեջ շոշափվում է միևնույն թեման և ծաղրվում է նույն հասարակական դիրքի ու վիճակի տեր մարդը, հոգևոր գործիչը՝ երեցը, բայց դրանք այս կամ այն չափով տարբերվում են միմյանցից։ Մի տեղ առավել շեշտված է գործչի ագահությունը, մի այլ տեղ՝ անհյուրընկալությունը, տխմարությունը, տգիտությունը և այլն, իհարկե նմանության շատ եզրերով։ Դրանք բոլորն էլ բացասական տիպեր են, բայց ունեն և որոշ չափով արտահայտված անհատականություն։

Ղրիմեցին մերկացումը տանում է մինչև վերջ։ Նա չի քաշվում հիշելու նույնիսկ իր անունը, որ Կ. Պոլսի պատրիարք եղած ժամանակ հանձնարարական թուղթ է տալիս Ադրիանուպոլսի առաջնորդ տեր Յոհանի վրա, միամտաբար հարթելով անարժան Հակոբ երեցի ճանապարհը։ Հակոբ երեցը վտարական գալիս է Կ. Պոլիս.

Անդ ժամանակ մի շրջմրջի
Մինչ ի եանդուն Իստամպօլայն
Պատրիարքէն գիր մի առնու,
Որ Մարտիրոսն է Ղրիմայն։

Այնու գրով գայ յէտիրնէ
Առ պարոնտէրն տէր Յոհան.
Նա ընդունի զնա սիրով
Պատրիարքին գրոյն փոխան։

Ղրիմեցին իր ծաղրած տիպերին չի դիտում իբրև պատահական մարդկանց, որոնք բարձրացել են քահանայության, այլ ժամանակի ծնունդն ու արդյունքը։ Ահա մեկի երեց ձեռնադրվելը ինչպես է բացատրում.

Ու անդ երէց նա ձեռնադրի,
Ոչ ըստ իւրոյն արժանութեան.
Այլ ըստ բերման ժամանակի
Թէպէտ երբեմն ոչ է զարման։

Բու է համարում նրանց, որոնք ավերակների մեջ արծվացել են, որոնք խոտորվել են ճիշտ ուղուց և չեն ծառայում իրենց կոչմանը։

Երգիծական ստեղծագործությունների այս շարքը ոչ միայն սոցիալական ծաղրի գեղեցիկ նմուշ է, այլև ունի պատմական ու կենցաղագրական արժեք։

Ուշագրավ են նաև նրա մյուս երգիծաշունչ գործերը՝ «Վասն Ահեռլի տիրացուին», «Ի վերայ Պուրղաղու», «Բանք ծաղրածուք» և վերջապես մի չափածո անեծք, որն ունի դավանաբանական պայքարի բնույթ և անցել է ստեղծագործական ու գրչագրական հետաքրքիր ուղի։

Անեծքը պահպանվել է Երևանի Պետական Մատենադարանի №№ 3860 (Ա) և 8908 (Բ) ձեռագրերում։ Ա ձեռագրում անեծքն ունի հետևյալ խորագիրը՝ «Ղրիմեցի Թաթար Մարտիրոս վարդապետին շինած ոտանաւորն է», իսկ Բ ձեռագրում արտագրված է առանց խորագրի ու հեղինակի հիշատակության։ Երկու ձեռագրերում էլ այդ բնագիրն ընդօրինակված է Մարտիրոս Ղրիմեցուն պատկանող ստեղծագործությունների շարքում։ Մատենադարանի աշխատակիցների կողմից կազմված տաղերգուների ձեռագիր ցուցակի մեջ ևս այն գրված է Մարտիրոս Ղրիմեցու անվան տակ։

Անեծքը, որպես հայ միջնադարյան երգիծանքի սեռային (ժանրային) տեսակ, ուշադրության գրեթե չի արժանացել, այնինչ նա ունի որոշ ճանաչողական նշանակություն և բավական լայն կիրառում է ստացել ժողովրդական ստեղծագործության ու գրավոր բանաստեղծության մեջ։ Հիշենք Արտաշեսի և Դավթի անեծքները, անեծք-հայրենները, Ներսես Շնորհալու անեծքը «Ողբ Եդեսիոյ»-ի մեջ և այլն։

Ժողովուրդը միջնադարում հավատ է ունեցել անեծքի հրաշագործ ուժի նկատմամբ։ Այդ հավատը խիստ նախնական բնույթ ունի և ծնունդ է առել խոսքի կախարդական ուժի նկատմամբ ունեցած նրա հնագույն ըմբռնումից,

Բնության և մարդկային կյանքի մեջ արտահայտվող չար կամ բարի երևույթները հասկանալու, դրանք կանխելու կամ օգտագործելու համար անհրաժեշտ է եղել գտնել նրանց «լեզուն», այն խորհրդավոր բանաձևը, որով հնարավոր լիներ զսպել այդ ուժերը և տիրապետել նրանց։ Ժողովրդական բազմաթիվ հեքիաթներում հերոսները շշնջում են այդպիսի կախարդական խոսքեր, որով չարը հաղթահարվում է, հրեշը տապալվում, բացվում է գանձարանի դուռը և այլն։ Ստեղծվում է հատուկ աղթարական գրականություն, որն իր մեջ պարունակում է զանազան հրաշագործ բանաձևեր, խորհրդավոր, տարօրինակ, դևերին հալածելու կամ ոգեկոչելու, չարը խափանելու կամ արձակելու համար։ Բանաձևեր, որոնք շշնջում են հիվանդի սնարի վրա, կամ առանձնության մեջ, խոսում են չար ոգիների հետ։ Վերջապես ի՞նչ է աղոթքը՝ անըմբռնելիին, ամենազոր ուժին դիմելու ձև՝ նրանից որևէ բան հայցելու համար, իսկ անեծքը չար ուժերը արձակելու միջոց է, նրանց ավերիչ բնույթը խոսքի ուժով վերարծարծելու եղանակ։ Անեծքով ևս մարդը դիմում է անըմբռնելիին, նույնպես հայցում է։

Դրանք հավատալիքներ են, որոնցից սնվել են և պաշտոնական կրոնները իրենց արարողությունների մեջ։ Կրոնը հենվում է նաև այս երկու զենքերի վրա՝ աղոթքի և անեծքի, օրհնության և բանադրանքի։ Այդպես է նա աստծո ուժը գործադրում մարդկանց նկատմամբ, այդպես է նա խոսում աստծո, այսինքն՝ անճանաչելիի ու խորհրդավորի անունից։

Անեծքը մեծ դեր է կատարել ժողովրդի կյանքում։ Այդ ցույց են տալիս ժողովրդի տարբեր հատվածների կենցաղում կիրառվող այս կարգի բազմաթիվ արտահայտություններ՝ մեղքի և անեծքի տակ մի ընկնիր, չար անեծքը չար օձի թույն է, անիծյալ լինիս, մոր անեծքը չի բռնի, անիծից արմատ, չար անեծքի հանդիպես, անեծքի բուն դառանք և այլն։ Անեծքն իր կնիքն է դրել նաև մեր միջնադարյան պատմագրության վրա։ Հիշենք, օրինակ Ներսես Մեծի անեծքը։

Այն հավատը, թե անեծքը կբռնի, ստիպել է մարդկանց դիմելու նրան՝ իբրև ազդու զենք թշնամու դեմ, երբ պայքարի ուրիշ մի-

ջոց չկա և մարդ չի կարողանում պահել իր անզուսպ ատելությունը։ Նույն հավատով ժողովրդի գլխին եկած դժբախտությունները, որոնք հազվադեպ չեն, վերագրվել են որևէ չար անեծքի անագորույն ուժին։

Ղրիմեցու այս անեծքը մի հետաքրքրական գրական նմուշ է, գրված տների այբբենական հաջորդականությամբ՝ Ա-ից մինչև Օ։ Յուրաքանչյուր տառով սկսվող տունը վեց կարճ, հնգավանկ տողից է բաղկացած։ Այսպես օրինակ.

Արբանեակ չարին,
Անիծեալ Կուրին,
Այս անուն պղծին,
Աչքդ կուրասին,
Ականջդ խլցին,
Ազգդ ջնջեցին։

Կամ՝

Եղիր հոմանին,
Եւ նմա գործին,
Եւտիքէս չարին,
Երեսդ սեաւի,
Եղիցիս գերի,
Եւ ճար մի գտցի։

Դա հեղինակի համար առեղծել է ակնհայտ դժվարություն։ Որոշ տառերով սկսվող համապատասխան քանակությամբ բառեր, որոնք բացասական իմաստ արտահայտեին (օր. Ո, Ղ, Ր, Փ, Օ) հայերենում հազվագյուտ են։ Դրա համար հեղինակը ստիպված է եղել գործածելու օտարազգի կամ դժվարամատչելի բառեր, որոնք բոլորն էլ, գրեթե առանց բացառության, կան Երեմիա վարդապետի բառարանում, որը կազմվել է ԺԷ դարում և իր մեջ հազվագյուտ բառեր է պարունակում։ Մարտիրոս Ղրիմեցին ուղղակի ձեռքի տակ է ունեցել բառարանը և շատ հաճախ դիմել նրան։ Մեր միջնադարյան բանաստեղծության մեջ այդպիսի մի ուրիշ օրինակ ևս կա։ ԺԸ դարի սկզբի պատրիարք, բանաստեղծ Գրիգոր Շղթայակիրն

ունի երեք ոտանավոր (այդքանն է հայտնի)[1], գրված Երեմիայի բառերով, որը դժվարըմբռնելի և հանելուկային է դարձնում բնագիրը։ Շղթայակիրը հենց այդպիսի նպատակ էլ հետապնդել է։ Բայց Մարտիրոս Ղրիմեցին Երեմիային դիմում է ոչ թե ինքնանպատակ կերպով, կամ խրթնաբանության համար, այլ սոսկ անհրաժեշտությունից։ Օրինակ, փյուր-կապ շարքը լրացնում է այսպես.

Փարաք կատաղի,
Փաղաղ յօժարի,
Փիծ ապաւառի,
Փաթուր փանաքի,
Փառքդ կորնչի,
Փաղփինդ խաւարի։

Այնտեղ, ուր Ղրիմեցին չի դիմում բառարանի օգնության, ժողովրդական շունչն ավելի է զգալի։

Չնայած դրան, անեծքն ունի գեղարվեստական արժանիք։ Յուրաքանչյուր տուն իր նույնահունչ բառերի կարճ, հատու և զորեղ հատվածներով նպատակ ունի ազդու դարձնել անեծքի ուժը և երբ տները, որոնց հետ և հնչականությունը, փոխվում են, ավելի է ծանրանում անեծքի տպավորությունը։ Կարծես հոգուց բխում է մի անվերջ հորդացող լավա, որը որպես մաղձ, թույն և խանձող խորշակ թափվում է մեղավորի գլխին։ Որքան շարունակվում է անեծքը, այնքան բուռն և հորդուն է դառնում չարության զգացումը չարի դեմ, և անեծքի, այսինքն՝ անընդհատ հաջորդվող հարվածների տևականությունը ոչ թե հոգնեցնում, ձանձրացնում է, այլ ավելի է առաջ մղում։

Ինչպես երևում է, Ղրիմեցու այս անեծքն ուժեղ տպավորություն է թողել մարդկանց վրա և լայն տարածում գտել։ Կարճ ժամանակում առեղծվել են նոր տարբերակներ, որոնք ներկայացնում են բավականաչափ հետաքրքիր պատկեր։ Ահա մի օրինակ.

---

1 Հ. Ս. Անասյան, Գրական նմուշներ Գրիգոր Շղթայակրից, «Էջմիածին» (ամսագիր), 1950, էջ 39—46։

ա	բ
Ճիւաղդ յայտնի,	*Ճագար ծակամուտ,*
Ճեռոտ ախտալի,	*Ճճուղակն սուտ,*
Ճակաճան լկտի,	*Ճն(ճ)ղուկ վավաշուտ,*
Ճաճանչդ նուաղի,	*Ճոխաբան լեզուդ,*
Ճեպով կործանի,	*Ճռռոմ բերանդ,*
Ճակատդ ի հողի։	*Ճանկդ քո որդնուտ։*

Բ ձեռագրում կա նույն անեծքի համառոտումը՝ յուրաքանչյուր տնից վերցված մի տող, և ուրիշ անեծքներ ու ոտանավորներ դրա նմանությամբ գրված։

Բայց անեծքի լայն տարածումը դրանով չի սահմանափակվում։ Այն ծառայել է իր նպատակին։ Հավանորեն Ղրիմեցին անեծքը գրել է ընդհանուր գործածության համար, առանց դեմքի, այնպես որ յուրաքանչյուր ոք կարող է որևէ մեկին ուղղել։ Որ այդ անեծքի սկզբնօրինակը Ղրիմեցու, կամ թերևս նախագաղափար օրինակի գրչի կողմից չի հասցեագրված ոչ մեկին[1], ցույց է տալիս Բ ձեռագրի բնագիրը։ Անեծքը սկսվում է այսպես.

Արբանեակ չարին,
Անիծեալ լրբին,
Այս անուն պղծին։

«Այս անուն պղծին» տողի մեջ «այս անունը» ցույց է տալիս, որ հեղինակը որևէ մեկին նկատի չունի և յուրաքանչյուրը կարող է իր ուզած անունը տեղադրել։ Այդպես էլ վարվել են։ Ա ձեռագրի օրինակն այսպիսի այլընթերցում է տալիս.

Արբանեակ չարին,
Անիծեալ կուրին,
Աբրահամ պղծին։

Աբրահամը Աբրահամ անվան միտումնավոր աղավաղումն է վիրավորական իմաստ տալու համար։ Այդ ցույց է տալիս հետևյալ ծանոթությունը, որը գրված է Ա ձեռագրի բնագրի տակ.

[1] *Կարելի է ենթադրել նաև, որ Ղրիմեցին իր անեծքն ուղղել է մի ոմն Աբրահամ Այնթափցու, որը 1690 թվականին հիշվում է որպես Երուսաղեմի միաբան և Ս. Հակոբի տաճարի պաշտոնյա։ Նա ժամանակակից է Ղրիմեցուն։ Չպետք է շփոթել Աբրահամ Այնթափցի Արծիվյանի հետ, որին հետագայում ուղղվել է անեծքը։*

Զի մինչև ցաստ բանք որ գրին
Էր ի վերայ Աբրահամին.
Որ էր նա գլուխ ամէն չարին,
Պիղծ գարշելի նէքալէթ ժանդին,
Արդ, սակաւուկ բանքս լիցին
Յանդիմանօղք նորա չարին։

Ուրեմն անեծքը ուղղված է մի ոմն Աբրահամի, որը համարվում է ամեն չարի գլուխ։ Բայց ո՞վ է այդ անձնավորությունը։ Բ ձեռագրում անեծքների ծակաչ շարքի մեջ ասված է. «Մուռ վիզ Անթափցի»[1], որից և պարզվում է, թե դա կաթոլիկ գործիչ Աբրահամ Այնթափցի Մովսիսյանը կամ Արծիվյանն է, որը իրեն կաթողիկոս հռչակեց 1740 թվականին և հավանություն ստացավ պապի կողմից։

Այնթափցին ծնվել է 1679 թվականին, իսկ Մարտիրոս Ղրիմեցին մահացել է 1683 թվականին։ Եթե նույնիսկ ընդունենք, որ նա իր չափածո անեծքը գրել է մահվան տարին, ապա այդ ժամանակ Աբրահամ Այնթափցին հազիվ չորս տարեկան էր։ Պարզ է, որ Մարտիրոս Ղրիմեցին ոչ մի առնչություն չէր կարող ունենալ կաթնակեր մանկան հետ և նրան չէր ուղղի այդ երկարաշունչ և թունոտ անեծքը։

Այս անեծքը կոնկրետ բնույթ է ստացել և իբրև զենք ծառայել կաթոլիկական եկեղեցու ոտնձգությունների դեմ, հավանական է, ԺԸ դարի 20-ական թվականներից, երբ սկսվում է Աբրահամ Արծիվյանի եռանդուն գործունեությունը կաթոլիկ եպիսկոպոսներ օծելու, քարոզիչներ առաքելու և հակաթոռ կաթողիկոսություն նախապատրաստելու ուղղությամբ։ Արծիվյանն այսպիսով քառատում էր հայ ժողովրդի և եկեղեցու միասնությունը դավանաբանական հողի վրա արհեստական թշնամանք առաջացնելով թեմերի մեջ, վտանգի տակ դնելով հայ եկեղեցական և ազգային անկախությունը։ Արծիվյանի գործունեությունը լիակատար համահնչուն էր արևելյան քրիստոնեական թեմերի նկատմամբ պապական շահերի հետ։ Ահա թե ինչու Բենեդիկտոս ԺԴ պապը այնքան մեծ հետաքրքրություն է ցուցաբերում և ամեն կերպ խրախուսում նրան։ Աբրահամ Արծիվյանը փաստորեն պապի գործակալն էր արևմտահայոց մեջ։

Պարզ է, որ նրա դեմ պետք է բարձրանար բողոքի և հակառակության ալիք։ Ծավալվում է ուժեղ պայքար Արծիվյանի վտանգավոր միտումներին դիմակայելու համար։ Նրա մոլեգին գործունեությունը չափազանց է համարվում նույնիսկ կաթոլիկական պրոպագանդայի տեսակետից։ Ֆրանսիայի դեսպան Բոնակը իր մի նամակում գրում է. «Եթե Հալեպի միսիոնարներից մի քանիսը Աբրահամ եպիսկոպոսին մղած չլինեին անխորհուրդ քայլերի... այսօրվա դրության հասած չէինք լինի»[1], նույն դեսպանը Ֆրանսիայի թագավորին ուղղված մի նամակում նշում է, որ Աբրահամը և Սայդայի մի հույն կաթոլիկ եպիսկոպոս, իրեն անհասկանալի մնացած դիտումներով դիմեցին այնպիսի քայլերի, որոնք վերարծարծեցին գրեթե հանգած կրակը[2]։

Արծիվյանն ուղղակի չեզոքացվում է և նրա գործունեությունը ամփոփվում է համախոհների նեղ շրջանակի մեջ։ 1740 թվականին նրա կաթողիկոսանալը փաստորեն տիկնիկախաղ էր և ոչ մի իրական ուժ ու իրավական հիմք չուներ[3]։ Նա՝ ինքը նախօրոք օծում է մի քանի եպիսկոպոսների և նրանց ձեռքով օծվում կաթողիկոս, իսկ հետագա ամբողջ ընթացքում մինչև իր կյանքի վերջը մնում է մեկուսացած՝ վախենալով հալածանքի սաստկությունից։ Սակայն նրա շուրջը, իբրև հայ կաթոլիկ առաջին կաթողիկոսի, կաթոլիկ գործիչների կողմից ստեղծվել է մի ամբողջ գրականություն, որտեղ նա ներկայացվում է որպես բարձր և ճշմարիտ գաղափարների համար անխոնջ պայքարող անձնվեր և սիրված հերոս[4]։ Իբր նա ժողովրդի կողմից մեծ ընդունելություն է գտել, ժողովուրդն իրեն առաջարկել է կաթողիկոսություն, բայց նա երկու անգամ հրաժարվել է և ապա՝ հարկադրված ընդունել՝ տեղի տալով ժողովրդի բուռն թախանձանքին և այլն։

Պատմական ճշմարտությունը ցույց տալու համար՝ այս անեծքը շատ կարևոր նշանակություն ունի, որ արտահայտում է նրա

[1] „Documents inidits pour servir à l'histoire du christianisme en Orient (XVI—XIXsiecle)», Փարիզ, 1907, էջ 557:

[2] Նույն տեղում, էջ 563:

[3] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Կոստանդնուպոլիս, 1914, § 2009:

[4] Տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ 97—101: Անասյանը, չնայած իրեն հայտնի եղած աղբյուրների միակողմանիությանը, ճիշտ է տվել Աբրահամ Արծիվյանի հասարակական գործունեության բնութագիրը:

կողմից հարուցված ատելությունն ու թշնամանքը ժամանակակիցների մեջ։ Եվ դա միակը չէ։ Նույն Բ ձեռագրում կան երկու ոտանավորներ, որոնք նույնպես գրված են Աբրահամի դեմ Սիմեոն աբեղայի կողմից և մի անանուն անեծք Ղրիմեցու նմանողությամբ ամենայն հավանականությամբ դարձյալ ուղղված Աբրահամ Արծիվյանին[1]։

Քանի որ Ղրիմեցու այս անեծքը ուղղվել է Աբրահամ Այնթափցուն, բնագրի մեջ մտել են որոշ փոփոխություններ՝ համապատասխանեցնելու համար նրա անձնավորությանը։ Անեծքի հակակաթոլիկական բնույթը, որ գալիս է Ղրիմեցուց, դյուրությամբ է ընձեռել այն ուղղելու Այնթափցու դեմ։

Կաթոլիկական խժդժությունները, որոնցից սնվում էր հատկապես ֆրանսիական դիվանագիտությունը՝ նկատի ունենալով հատուկ քաղաքական նպատակներ, ԺԷ դարում արդեն լայն ծավալ ստացան։ Դա ազգային գործիչների կողմից դիտվում էր որպես հասարակական չարիք, անեծքն էլ ուղղված է հենց չարիքի դեմ։ Այդ անեծքի մեջ արտահայտվում է Ղրիմեցու վերաբերմունքը կաթոլիկության նկատմամբ և նրա անհաշտ պայքարը իրեն հատուկ բուռն կրքով։

Այդ հանգամանքն անհրաժեշտ է նշել։ Ղրիմեցին ԺԷ դարի նշանավոր հասարակական գործիչ էր և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի համախոհը։ Ջուղայեցին երբ 1679 թվականին եկավ Պոլիս քա-

[1] Սիմեոն աբեղայի ոտանավորներից մեկը «Սիմէոն աբեղայէ ասացեալ վասն Անթափցի Աղրահամին» խորագրով հետաքրքիր բովանդակություն ունի.

Ի յԱնթափու եկեղեցին՝ Աստուածածնի սուրբ տաճարին
Մկրտեցար յաւազանին, ով նզովեալ պիղծ Աղրահամ.
Սուրբ մեռոնաւն մեր օծար և Աբրահամ անուանեցար
Զմեր սուրբ օրէնքն մոռացար ով ուրացող պիղծ Աղրահամ:

Այսպես է սկսվում աբեղայի երկարաշունչ ոտանավորը, որի յուրաքանչյուր երկրորդ և չորրորդ տողերի վերջում կրկնվում է Աղրահամ: Աբրահամի անունն այդպես արտասանելը հավանաբար ընդունված և ճանաչված է եղել, որն տրվել է իբրև նշավակ, ինչպես Եզր կաթողիկոսի, որը ցանկացավ համաձայնության եզրեր գտնել հունական եկեղեցու հետ, անվան առաջին տառը այնուհետև ընդունվեց գրել գլխիվայր շուռ տված, որպես [illegible] անարգանք:

ղաքական առաքելության, որի պատվիրակության մեջ մտնում էր նաև երիտասարդ Իսրայել Օրին, անմիջապես սկսեց գործակցել Ղրիմեցու հետ, մի մարդու, որն անշուշտ ճանաչված էր իբրև կաթոլիկ նկրտումների անհաշտ հակառակորդ։ Դա արդեն խոսում է այն կեղծ վարկածի դեմ, թե Ջուղայեցու առաքելությունը միայն կաթոլիկ պապի դավանանքն ընդունելու անկեղծ ձգտումն էր։ Այդ դեպքում Ղրիմեցու և Ջուղայեցու մեջ առհասարակ որևէ կապ չէր կարող լինել։

Այսպիսով Ղրիմեցու այս չափածո անեծքը մի հետաքրքրական և իր տեսակի մեջ արժեքավոր գրական նմուշ է, որն ունի նաև պատմական արժեք։

Ղրիմեցու գրչին են պատկանում և հայատառ թուրքերենով գրված երեք աշուղական ստեղծագործություններ, որոնք նույնպես ունեն երգիծական բնույթ՝ «Ղրմցի Մարտիրոս վարդապետէ ի վերայ Պապատաղի ասացեալ», նորից՝ «Ի վերայ Պապատաղու» և «Ի վերայ Վանայի բաղանեացն»։

Ղրիմեցին իր ճանապարհին անցել է Վանայի և Բաբաղաղի վրայով։ Վանայում նրան բաղնիքը դուր չի եկել, իսկ Բաբաղաղում՝ ոչ մի բան, և այնքան ուժեղ, որ հարկ է համարել երկու անգամ «գովերգելու» այն։

Բաղնիքը, ծառայողներին, կեղտը, սրամիտ ձևով է ներկայացնում Ղրիմեցին, բայց առավել հետաքրքիր են Բաբաղաղի մասին նրա երկու ոտանավորները։ Ղրիմեցին իր մարդկանցով հինգ ու կես ամիս մնացել է այնտեղ և պատմում է, թե ինչեր են քաշել Բաբաղաղում։ Տեղը անհաջող է, ցեխոտ, մառախլապատ, սոխակը տարվա մեջ երգում է հազիվ հինգ-տասը օր և լռում ուժասպառ։ Մարդիկ՝ կին թե տղամարդ, գիժ են, խելոքը չի երևում, իսկ կյանքը այնպես դժվար է, ոչինչ չի կարելի ճարել, մեկ ձուն մեկ փարա, կանաչեղենը մանուշակից ավելի թանկ, մսավաճառի մոտ ոչխարի միս չկա, նպարավաճառը գանգատվում է, թե օգուտ չունեմ, չարչին ու նպարավաճառը վատ են ու անխիղճ, թեև միրուքները սպիտակել են, բայց էլի թերակշռում են, խախտում են, գողանում, արդարությունը զուլումի է նման։

[1] Այս արտահայտությունը մյուս բնագրում սրամիտ բառախաղի բնույթ է ստացել՝ «ձուն վիզ անթափ ձի», այսինքն՝ թափ չունեցող ձի։

Այսպես, հետաքրքիր, նուրբ ու բազմաթև դիտողականությամբ Ղրիմեցին ներկայացնում է ոչ միայն տեղի բնությունը, կենցաղը, այլ սոցիալական բարքերը։

Այս երեք ոտանավորներն էլ գրված են աշուղական բանաստեղծության հատուկ ոճական և տաղաչափական ձևերով։ Իրենց հանգավորմամբ ամեն մի տան առաջին երեք տողերը համապատասխանում են իրար և բոլոր տների չորրորդ տողերը՝ իրար, այսպես՝ aaaF, bbbF, dddF, cccF և այլն։ Տների չորրորդ տողերը ոչ միայն հանգերով են համապատասխանում, այլև կրկնվում են՝ որոշ երանգ ստանալով։ Ամեն մի ոտանավորի վերջին տան մեջ հեղինակն իրեն է վկայակոչում, ինչպես հատուկ է առհասարակ աշուղներին, իսկ տաղաչափությունը, ոճն ու նյութը նույնպես աշուղական են։ Երեք ոտանավորներն էլ ունեն երգիծական-հեգնական բնույթ և ընթերցողի մեջ առաջացնում են բուռն, առողջ ծիծաղ։ Ոտանավորները գրված են վարպետությամբ։ Այդ ոչ միայն վկայում է հեղինակի շնորհքը, այլև ցույց է տալիս, որ այդ շրջանում աշուղական բանաստեղծությունը հայ գեղարվեստական մշակույթի մեջ արդեն որոշ զարգացման էր հասել։

Ղրիմեցին զավեշտը բարձրացրեց երգիծանքի աստիճանին։ Փոքրիկ, մանր թեմաները, որոնք զբաղեցնում էին զավեշտագիրներին՝ չախուփ, մահրամայի, թութունի գովքը և այլն, նրա մոտ փոխարինվեցին կյանքի ավելի լայն հարցեր շոշափող թեմաներով, թեթև զվարճաբանությունը տեղի տվեց երբեմն բարեհոգի, երբեմն ոչնչացնող երգիծանքին։ Ներկայացնելով այս կամ այն երևույթը, արարքը կամ թերությունը, Ղրիմեցին որոշակի նպատակ է հետապնդում՝ մերժել կամ ոչնչացնել իր տեսակետից վատն ու խոցելին, իսկ զավեշտագիրների մոտ ծաղրը ինքնանպատակ է և անդեմ։ Գեղարվեստորեն, երգիծանքի սրությամբ, ծաղրելի վիճակ, դրություն ստեղծելու միջոցներով ևս նա շատ է տարբերվում իր նախորդներից։ Չնայած դրան՝ Ղրիմեցու երգիծական ոտանավորների մեջ զավեշտական տարրը դեռևս լրիվ չի հաղթահարված։ Կան նաև կտորներ, որոնք լինելով սուր ծաղրող, քննադատող, չեն հասնում երգիծանքի մակարդակին։ Բայց ընդհանուր առմամբ Ղրիմեցին իբրև երգիծաբան կանգնեց մի նոր աստիճանի վրա՝ իրենից հետ թողնելով ոչ միայն նախորդ զավեշտագիրներին, այլև իր անմիջական հաջորդներին։

305—5

Դ

Մենք կանգ առանք Մարտիրոս Ղրիմեցու պատմաքաղաքական և երգիծական ստեղծագործությունների վրա։ Ղրիմեցին ունի և ոչ պակաս թվով քնարական երգեր, որոնք անհարիր չեն նրա ստեղծագործական ոգուն։

ԺԷ դարում քնարական բանաստեղծությունը ևս բռնում է նոր զարգացման ուղի։ Նկատվում են ճիգեր հաղթահարելու հին քարացած թեմաները, քնարական բանաստեղծության մեջ իշխող մի տեսակ վերացական շունչը։ Իհարկե չի դադարում ղարիբի երգը, սիրո գովերգությունը, մահվան ողբը, երկնքի ու երկրի, ոգու և մարմնի փոխհարաբերության խնդիրը և այլն, բայց դրանք ստանում են ավելի նուրբ երանգ, ավելի անմիջական շունչ, ավելի կոնկրետ բնույթ։ Թեմաների մեջ տեղի ունեցող դանդաղ զարգացումը ԺԷ դարում նկատելիորեն տալիս է նոր երանգ ու նոր որակ։ Եթե առաջ երգվում էր Աստվածածնի պատկերը և դրա տակ աշխարհիկ կինն էր զգացվում, ինչպես Նարեկացու մոտ, հետո արդեն պարզապես կինը, որը սակայն ոչ մի դեմք ու անուն չունի, ինչպես Թլկուրանցու և Աղթամարցու մոտ, ապա այժմ կինը դառնում է շատ երկրային, իր կարմիր լաչակով հրապուրիչ ու սիրուն, ինչպես Նաղաշ Հովնաթանի մոտ. եթե առաջ ղարիբի երգը հնչում էր թախծոտ, ցավատանջ, բայց միալար. այդ առհասարակ երգ էր ղարիբի մասին, ինչպես Մկրտիչ Նաղաշի մոտ, ապա այժմ այդ երգը դառնում է կոնկրետ, սրտագեղ, անհատական և ոչ միալար, ինչպես՝ «Կռունկ ուստի կուգաս»-ը։ Եթե առաջ ողբում էին մահը համատարած, մահը ընդհանրապես՝ կապելով մարմնի նեխման և վերջին դատաստանի հետ, կամ նրա սարսափը վերարտադրում փոխաբերությամբ, ապա այժմ ողբում են ուղղակի մեռնողին, նրա անձնական տառապանքը, ինչպես Դավիթ Սալաձորեցու «Վասն Նռանայ» սրանչելի ողբում։ Եթե առաջ բնությունն ու աշխարհը երգվում էր որոշ խորհրդածականությամբ (միստիկայով) — լույսն այնտեղ արևային էր, բայց աստվածաշունչ, ինչպես Կոստանդին Երզնկացու մոտ, ապա այժմ բանաստեղծության մեջ վերարտադրվում է ուղղակի կենդանի բնությունը, ինչպես նույն Սալաձորեցու՝ բնության այդ նրբազգաց երգչի մոտ։ Այդ ամենի հետ միասին հայ միջնադարյան բանաստեղծության մեջ ներխուժում է գինու, խրախ-

ճանքի ու վայելքի թեման, այնպես հախուռն ձևով, որ կարող էր բանաստեղծությունը նետել վատ կրքերի գիրկը, և որոշ չափով այդպես էլ եղավ։ Անզուսպ հրճվանքը, գավաթի անդիմադրելի մղումը պոռթկաց դարերի ապաշխարանքից ու պասից հետո։ Այդ շրջանում Մարտիրոս Խարասարցին, Մարտիրոս Խարբերդցին, Աստվածատուրը դարձան գավաթի ինքնամոռաց երգիչներ։

Այսպիսով, թերևս թեմաները չփոխվեցին, բայց դրանք ստացան բազմաթիվ նրբերանգներ, ավելի շեշտվեց մարդկայինը, անձնականը, լայն ընթացք ստացավ անհատապաշտական քնարերգությունը։ Բանաստեղծությունը, թողնելով իր վերացական բնույթը, ընդունեց ավելի անմիջական ընդհանրացման շեշտեր։ Ընդհանրացմանը հենց այդ էր խանգարում։ Բայց իհարկե զարգացումը չպետք է պատկերացնել ուղղագիծ, և ոչ ամեն դեպքում վերընթաց։ Թեկուզ թեմաների կոնկրետացումը, որը կարծես տեղի էր ունենում ի հակակշիռ վերացականության, ԺԷ դարի բանաստեղծության մեջ վրիպումներ տվեց՝ զրկվելով դրա հետ միասին նաև ընդհանրացնող բնույթից։ Բանաստեղծության մեջ նկատվեցին որոշ թվով շատ նեղ ու անձնական և գեղարվեստորեն անարժեք երկեր։ Բայց դա չի խանգարում ԺԷ դարի բանաստեղծության մեջ տեսնելու վերապրող նորը։

Մարտիրոս Ղրիմեցու քնարական ստեղծագործության մեջ զգալի է հենց այդ նոր բանաստեղծության թարմաբույր շունչը։

Շատ հետաքրքիր է նրա «Տաղ այրի երիցուն է» երգը, որտեղ պատկերավոր ու հուզաթաթավ ձևով արտացոլված է մարդկային անհատի հոգեբանությունն ու վիշտը, մարդու ներաշխարհն ու զգացումները։

Քահանան այրի է։ Ամբողջ օրը տխրորեն տանն է նստում և այրվում է ինքն իրեն, բայց այդ ոչ ոք չի տեսնում.

Այրի էրէցն է խիստ տրտում,
Զօրն մժխուլ նստի ի տուն,
Այրի, այրի լուցկի չունի.
Ինքն կէրփ իսկ չէրևի։

Այրին գնում է ժամ կամ հարսանիք, բայց նրա միտքը միշտ ծփման մեջ է ու նախանձում է խիստ անհարգի ձևով։

Հետո գեղեցիկ պատկերներով, գարնան, ամռան ու աշնան հակադրությամբ, ավելի խորն է բացահայտում նրա տխուր հոգեվիճակը։ Ահա գարուն է.

Եկն է շնչեր գարնանային
Եւ ղալար բոյսքն բողբոջին,
Եւ կու ծաղկին ծառքն ի յայգին,
Վարդն վառի ի վերայ Թփին
Ջուրախանայ սիրտ քահանին,
Ի ոչ տրտմութիւնքն փարատին։

Գալիս է ամառը.

Ամառն եղև խիստ սիրալի,
Հնգետասան ժամ ավելի.
Ծառք զարդարին պտղով ի լի,
Գոյնքն կարմիր և ղրմզի.
Այրի, այրի լուցկի չունի,
Ինքն կէրւի իսկ չէրևի

Իսկ աշնանը տունը լցնում են բարիքներով, ուրախանում է ամեն մարդ, բացի քահանայից.

Աշունն լի խիստ ցանկալի,
Ամէն մարդոյ է պիտանի.
Տունն լնուն բարով ի լի,
Ուրախանան սիրով սրտի.
Ջուրախանայ սիրտ քահանին
Ոչ տրտմութիւնքն փարատին։

Չկա ավելի գեղեցիկ բան, քան ոսկին և անգին քարերը, բայց քահանայի աչքին դրանք անպետք են, երբ նրա կինը մեռնում է։ Նա ծառի նման գոսացել է և տատրակի պես առանձնացել։ Նրա սիրտը երբեք չի ուրախանում և տրտմությունը չի փարատվում, որովհետև մեռել է իր զուգակիցը։

Այս երգը կարեկիր շեշտով, մեղմ ցավակցությամբ գրված մի ստեղծագործություն է, ուր բարձրացվել է մարդկային անհատը։ Նրա ապրումներն ու հոգեվիճակը դարձել են երգի նյութ։ Ղրիմեցու ստեղծագործությունը մարդասիրության կնիք է կրում։ Մարդն ար-

ժեքավորվում է, նրա անհատական վիշտը, անձնական տառապանքը հասարակական ուշադրության է արժանանում և արձագանք տալիս բանաստեղծության մեջ։

Ղրիմեցու տաղը այնպես պարզ ու ճշմարտացի և բյուրեղացած ձևով է արտահայտում շատերի վիշտը, որ ստացել է ընդհանրացնող ուժեղ շեշտ։

Մեզ հասել են այրու տառապանքն ու կարոտը արտահայտող և ուրիշ երգեր։ ԺԷ դարում ապրած Հովհաննես քահանա Ղալամքյարը իր մեռած Էլմաստ կնոջ վրա գրում է հուզաթաթավ մի տաղ, իսկ Տեր Սարգիս նշանավոր քահանան, որը «Վասն անուանց ու որպիսութեանց պատուական ականց» հետաքրքիր ուսումնասիրության հեղինակն է, մի գողտրիկ բանաստեղծության մեջ պատմում է իր երազը՝ վաղամեռ «սիրուն ու գեղեցիկ պատկերով իրիցկնոջ» վրա, որը եկել է կարոտակեզ ամուսնու մոտ և ուզում է նրա հետ գինի խմել.

Ի մոտ քեզ եկեալ եմ հիւր,
Որ խնդամք գիշերս ի հետերց.
Ուտեմք ու խըմեմք գինի,
Բորբոքիմ ըղսեր մեր վառած[1]։

Ղրիմեցին իր տաղով դարձել է հենց այդ տառապող անհատների, նրանց զգացմունքների, նրանց սրտի թարգմանը։

Այս երգը միաժամանակ ուշադրություն է հրավիրում քահանայի այրիության անբնական վիճակի վրա։ Եկեղեցական օրենքներով քահանային արգելված է առաջին կնոջ մահից հետո կրկին անգամ ամուսնանալ։ Այդպիսով քահանան կարող էր երիտասարդ հասակում կորցնել իր կնոջը և մնալ այրի մինչև վերջ։ Դա դուռ էր բաց անում շատ հաճախ արտամուսնական հարաբերությունների և քահանայի վարքի անկման։ Ինչպես երևում է, դեռ վաղուց փորձեր են արվել փոխել այդ ավանդույթը և քահանային կրկնամուսնության իրավունք տալ։

Ղրիմեցուց մեզ ոչ մի սիրո երգ չի հասել, բայց կան գողտրիկ տաղեր՝ նվիրված բնությանը, խնջույքին և գինուն։ Գեղարվեստական հասուն վարպետությամբ է գրված նրա «Յաղագս քաղաքին Ամասիոյ տաղը, որտեղ տրված է գեղատեսիլ Ամասիայի հրապու-

[1] «Բազմավէպ», 1939, էջ 17։

րիչ նկարագրությունը։ Ամասիան իր գեղեցիկ շինվածքներով վեհորեն խրվել է լեռան մեջ։ Ապրիլյան դեղազարդ այգիներ, ուր ծաղիկներն են փթթում և երգում են քաղցրաձայն բլբուլները, խաղողի դրախտաբույս տնակներ, որոնցից հյութը ճմլվում և կարասներն է լցվում։ Ու հետո, ոգևորված բանաստեղծը երևակայում է. եթե ինքը կարողանար, ապա, որպեսզի Թամուզի շոգը չվնասեր քաղաքին, կկապեր մի կամուրջ և կծածկեր նշտարենի ծառերի սաղարթյա տերևներով, հետո մի ջրմուղ կկառուցեր ու Պուլաուխլու[1] գյուղի գինին կբերեր մինչև քաղաք, այնուհետև մարմարյա սալից ավազան կշիներ, որտեղից ներքին շատրվանով կցայտեր գինին, և իրենք ոսկեղեն բաժակները ձեռքերին՝ կնստեին խնջույքի.

Մատովակն յատին կացեալ
Մեզ բաշխեր զգինին անխնայ.
Մէկ մէկ այն ոսկի ճամով
Ես խմեմ, որ կարգն ի քեզ գայ։

Գեղեցիկ քաղաքի նկարեն բնության գրկում խնջույքի մի լավ պատկեր է ստեղծել Ղրիմեցին։ Այս բանաստեղծության մեջ կա բուռն, ափերից թափվող ուրախություն։ Շատ բան է նոր, նախ՝ թեման։ Քիչ կան այնպիսի երգեր, որոնք տային քաղաքի բնանկարը։ Հայտնի են առանձին վանքերի կամ սրբությունների նվիրված ստեղծագործություններ, որոնք ունեն շատ սրբազան, կրոնական բնույթ և կամ «Գովասանութիւն Կաֆայի» նման տաղեր, որոնք այն չեն։ Բացի դրանից, Ղրիմեցին քաղաքի բնանկարը կենդանացրել է խնջույքի պատկերով։ Այսպիսով, կարծես զգացվում է մարդու ներկայությունը, և քաղաքը շունչ է առնում։

Ղրիմեցին ինքը գիտակցում է, որ իր երգի թեման և բնույթը նոր է. թերևս ընդունելություն չգտնի, թերևս բանի տեղ չդնեն և չհավանեն.

Այսքան բաւական լիցի,
Մարտիրոս զբանդ դրաւեա.
Ծաղրալի անպէտ խօսիցդ,
Ով հաճի թէ նոր երգ է սա։

---

[1] Սիմեոն Լեհացին ասում է. «Թուրքի աշխարհն իրեք գինի ունի — մինն Պուլաուխլու, մին՝ Անկուրու և մին Այդընու». տե՛ս Ուղեգրություն, էջ 306։

Ասվեց, որ վայելքի անզուսպ տենչը մեր բանաստեղծությունը կարող էր նետել վատ կրքերի գիրկը և որոշ չափով այդպես էլ եղավ։ Ղրիմեցին այդ բանը կանխազգում է և, չմերժելով գինին և ուրախությունը, հորդորում է զգաստ լինել, աշխատում է միշտ պահել չափի զգացումը։ Այդ մտահոգությունը նկատվում է նրա գինու և ուրախության գրեթե բոլոր երգերում։ Վերոհիշյալ «Յաղագս քաղաքին Ամասիու» տաղը վերջացնում է այսպես.

Գինուն շատ մի հետևիր
Թէ պատճառ սիրոյ է մեզ նա.
Զբազումս անառակ առնէ,
Սողոմոն արքայն է վկայ։

Բարիկենդանի գեղեցիկ տաղը նույնպես վերջացնում է չափավոր խմելու հորդորով։ Նա ունի նաև մի տաղ, որի մեջ նուրբ երգիծանքով ծաղրում է հարբեցողությունը և գինու չարաշահումը.

Մաքուր և զուտ ըմպանակիս,
Ով սիրելի, երբ համդիպիս,
Թէ ի պատւի, կամ հարսանիս
Հնգէն վեցէն վեր չանցանիս.
Թէ չէ յետոյ լինիս ճառիս,
Շատ վատ ասես Մարտիրոսիս։

Ամեն մի տան վերջում սրամիտ ձևով ցույց է տալիս հարբեցողի վիճակը և ահաբեկում նրան։ Երկու-երեքը, կամ չորս-հինգը սիրով խմիր, բայց եթե ավելացրիր, ապա աչքերդ շուտով կփակվեն և քեզ «կհարուն ի ծափ», կմնաս «խելաց թափուր», «վերադ կկցեն հազար բարուր», կլինես այլոց ծաղր ու կատակ, «խելաց թափիս իբր զմոլի», արջառից ավելի ուժգին կգոչես և քեզ «մեջլիսի մեջ կատակ կառնեն»։

Հատկանշական է, որ ոչ մի դեպքում հարբեցողին չի սպառնում մեղքով և աստծո պատժով։ Սա ևս ցույց է տալիս հրաժարումն վերացականությունից։

Ղրիմեցին ունի նաև մի ուրիշ գողտրիկ տաղ՝ նույն նպատակով գրված, որը բերում ենք ամբողջությամբ.

Գինին առնէ զքեզ ուրախ,
Թէ չես խորտկին խմէս յաճախ.
Լինիս որպէս առիւծ անվախ,
Զուարճ լինիս և յոյժ խրախ։

Մէջ ապակուն ածես զսա,
Կարմիր գունով ցուցանէ նա.
Իբրև զվարդ գեղեցկանա
Եւ դէմք ի նա փայլեալ լինա։

Սակայն եթէ խմես գինին,
Կամ սակաւուկ, կամ հետ ջրին։

Այս հարցում նրա անմիջական ազդեցությունը տեսնում ենք իր աշակերտ Եփրեմ Երաժիշտի մոտ, որը գինու թասին երկու տաղ է ձոնել։ Դրանք չափածո մակագրություններ են.

Տաղաչափեալ շարադրի
Տեառն Եփրեմէ վարդապետի.
Ճամ թասս շինվաւ վասն ջրի,
Երբեմն ըմպեն սովաւ գինի։

Բայց մի լցեալ ամենայնի,
Զի մի տարցէ հանճար մարդի.
Այլ թէ լէն բան խրատի,
Սակաւ լցցեն անուշ լինի։

Ի վայելումն տեառն Եփրեմի
Քաղցրանուագ վարդապետի.
Հազար հարիւր քան թուի
Յարաբարդեալ իննեակ ամի[1]։

Չնայած արձանագրային բնույթին, որ իջեցնում է տաղի գեղարվեստական արժեքը, այստեղ ևս, բավական որոշ, միևնույն միտումն է արտահայտված։

[1] Երևանի Պետական Մատենադարան, ձեռագիր № 7717, էջ 252։

Ղրիմեցունն է նաև «Գովասանութիւն այգւոյ» մի տաղ, որից փոքր հատված է միայն հասել՝ ձեռագրից թուղթ ընկած լինելու պատճառով։

Ղրիմեցու քնարական տաղերի ընդգրկումը սահմանափակ է, նա ուրիշ թեմաներ չի զարգացրել։ Կամ դա գալիս է նրանից, որ մեզ թերևս չեն հասել նրա բոլոր ստեղծագործությունները, կամ պետք է բացատրել բանաստեղծության ընդհանուր մակարդակով։ Բայց նրա թողած սակավաթիվ քնարական գործերի մեջ էլ արտահայտվել է այն նորը, ինչ ԺԷ դարն իր հետ բերում էր հայ բանաստեղծության մեջ։

Է

Այժմ երկու խոսք նրա կրոնական և այլ բնույթի երկերի մասին։

Ղրիմեցու ստեղծագործության մեջ ոչ մեծ, բայց այնուամենայնիվ որոշ մաս են կազմում կրոնական բնույթի երկերը, որոնք իհարկե, նոր բան չեն բերում գրականության մեջ, բայց ուշագրավ են իրենց նպատակայնությամբ և միտումով։ ԺԷ դարում կրոնական գրականությունը ևս ծաղկման նշաններ ցույց տվեց, որին զուգակցեց վանքերի որոշ աշխուժացումը։ Իհարկե, չկար հին եռանդը, բայց նկատվում էր դեպի այն վերադառնալու ուժեղ ձգտում։ Դրա համար անհրաժեշտ էր վերականգնել թաղված ու մոռացված կրոնական հարուստ մշակույթը և նոր զարկ տալ դրան։ Ուստի առաջանում է ուսուցողական բնույթի ստեղծագործությունների պահանջ։ Ղրիմեցին իր կրոնական երկերի մեծ մասը գրել է այդ նպատակով՝ «Օրհնութիւն վասն ժողովրդոց» և մանավանդ «Ցանկ և ցուցակ յայսմաւուրաց գրոց»։ Մեկը օրհնության օրինակելի ձև է վարդապետների համար, երեք բնույթի։ Առաջինը արձակ՝ պարբերությունների այբբենական հաջորդականությամբ։ Օրինակ.

«Անեղն աստուած և արարիչն ամենայն արարածոց, հայրն երկնաւոր, որ ընկալաւ զդարձն անառակի որդւոյն և զգեցոյց նմա զառաջինն զարդ՝ ընկալցի զզջումն և զապաշխարութիւն ձեր, և շնորհեսցէ ձեզ արդարութիւն և զմաքրութիւն հոգւոյ և մարմնոյ։ Ամէն։

Բանն աստուած, էակիցն հօր, որդին միածին, որ բանիւ գոյացոյց զամենայն արարածս և ի պատկեր իւր ստեղծ զմարդն առաջին, և յետոյ վերստին նորոգեաց զնա ի հնութենէ մեղաց, նորոգեսցէ և զձեզ հոգւով և մարմնով ի նորոգումն յաւիտենական կենացն անվախճանից։ Ամէն» և այլն։

Երկրորդը՝ չափածո։

«Ազատարարն ազգի մարդկան ազատեսցէ զձեզ յամենայն փորձանաց.

Բացողն դրան դրախտին, բացցէ ձեզ զդուռն ողորմութեան իւրոյ» և այլն։

Իսկ երրորդը՝ դարձյալ չափածո Բ-ից Ա տառերի հաջորդականությամբ։ Օրինակ.

Քաղցրն աստուած ի ձեզ սիրով քաղցրասցի,
Փրկիչն ի փրկել զձեզ փութասցի.
Իւրաքանչիւրոցդ պսակ հիւսեսցի
Ցնծեալ ձեզ ի կեանս յետոյսն ապառնի։

Մյուսը՝ այսինքն «Ցանկ և ցուցակ յայսմաւուրաց գրոց» Հայսմավուրքն է չափածոյի վերածած, մի տաժանելի աշխատանք, որը, իհարկե, չէր կարող չոր ու ցամաք չլինել և ներկայացներ որևէ գրական արժեք, բայց այդ օրինակով արտահայտվում է Ղրիմեցու ամբողջ եռանդը կրոնական պատմությունը ներկայացնելու գործում, այնպես որ հեշտացվի ուսուցումը և հնարավորություն լինի այն ուղղակի անգիր սովորելու։ Նա ջանք չի խնայել իր նպատակին հասնելու համար։ Յուրաքանչյուր ամիս չափաբերելիս նա տարբեր հանգեր է գործածել, որպեսզի ավելի թեթևաջան մտապահվի.

Ոչ մի տառիւ յարմարական,
Զատորադասն աւարտական,
Այլ իւրաքանչիւրոյ ամսեան
Յայլատարազ փոփոխական։

Զի որք ցանկան սորին ուսման՝
Ի միտ առնուն թեթևաջան։
Առ այնս է իմ և եթ մաղթան,
Շնորհել սիրով զմի Հայր մեղայն[1]։

[1] Ձեռագիր № 1495, էջ 123բ։

Այս մեծ և տքնաջան աշխատանքը կարող է այժմ ևս հայ հին գրականությամբ և պատմությամբ, ինչպես նաև՝ հայ միջնադարին առնչվող որևէ հարցով զբաղվողների համար ծառայել իբրև աղբյուր, կամ ավելի ճիշտ՝ ուղեցույց։ Հակառակ բուն Հայսմավուրքներին՝ Ղրիմեցու չափաբերած Հայսմավուրքը մեծ դյուրություն է ընձեռում ցանկացածը կարճ ժամանակում գտնելու։

Ղրիմեցու անվամբ կան և ուրիշ գործեր. «Աղերսանք առ սուրբ Աստուածածինն», որը մի գեղեցիկ աղոթք է, «Ողբ», «Տաղ», որոնք գրված են իր ուսուցիչ Աստվածատուր Տարոնեցու մահվան առթիվ և «Գովեստ Սուրբ Աստուածածնայ վանացն յԱնկուրիոյ», որտեղ նկարագրվում է Աստվածածնի վանքը և այդքանով է միայն կրոնական։

Ղրիմեցին նոր վերածնվող հայ մշակույթի առաջին գործիչներից էր, և ինչպես որ հատուկ է ամեն մի շարժման սկզբնավորողներին, նրա գործունեությունը ունեցել է համակողմանի բնույթ։ Նա ոչ միայն հասարակական դեմք է, գրող, երգիծաբան, այլև, ինչպես երևում է, զբաղվել է հաշվային խնդիրներով։ Մեզ հասել է նրա մի վեճը Պետրոս Ագուլեցու դեմ՝ հաշվային հարցերի հետ կապված։ Հաշվի սովորական միավորներն են մեկ, տասը, հարյուր, հազար, տասը հազար, հարյուր հազար, միլիոն, միլիարդ և այլն։ Միջնադարում հաշվել են այսպես. «Մէկ, Ժ, Ճ, Ռ։ Մին բիւր, Ժ բիւր, Ճ բիւր, Ռ բիւր։ Մին գունդ, Ժ գունդ, Ճ գունդ, Ռ՟ գունդ։ Մին աւագ գունդ, Ժ աւագ գունդ, Ճ աւագ գունդ, Ռ աւագ գունդ։ Մին արքայ գունդ, Ժ արքայ գունդ, Ճ արքայ գունդ, Ռ արքայ գունդ։ Մին կայսըր գունդ, Ժ կայսր գունդ, Ճ կայսր գունդ, Ռ կայսր գունդ»։

Այդ հաշվարկումները, ինչպես երևում է, հաճախ շփոթել են, թե հաշվային մեկ աստիճանից մինչև մյուսը որքան է ընկնում։ Ահա հենց այդ հարցին է նվիրված Պետրոս Ագուլեցու և Մարտիրոս Ղրիմեցու բանավեճը։

Ձեռագիր № 1495-ում կա «Յաղագս համարողութեան է և թուոց» վերտառությամբ մի փոքրիկ բնագիր, որը, հավանական է, սկզբնաղբյուրն է եղել և առիթ է հանդիսացել վեճի. «Ծանիր ով սիրեցեալք մեր ի տէր,— ասվում է այնտեղ.— զի ԺՌ-ն մէկ բիւր է, և տասն Ռ բիւրն մէկ գունդ է և տասն Ռ՟ գունդն Ա աւագ գունդ է և ԺՌ աւագ գունդն Ա արքայ գունդ է և ԺՌ՟ արքայ գունդն Ա կայսըր գունդ է։ Ամենայն համարողութիւն մինչև ցայս վայր երթայ»։

Հեղինակը, նկատի ունենալով հաշվի բարդությունը, ավելացնում է. «Ով ուսումնասէր եղբայր թէ կամենաս յայս նրբահայեաց և խորիմաստ արհեստիս ձեռն արկանել, որ է մայր ամենայն թւոց, մի ամաչեր գնա ի մօտ վարդապետաց և ուսիր թէ որչափ մեծ ոք իցես, որպէս ասէ իմաստունն Սողոմոն, ոչ թէ ալիք ծերութեան, այլ ալիք իմաստութեան»[1]։

Ահա հենց այդ բնագրից անմիջապես հետո, առանց որևէ անջատման նշանի, գալիս է թվային հաշվի մի ուրիշ մեկնություն, որը կարծես շարունակությունն է.

Տասն հազարն մէկ բիւր է։
Տասն բիւրն մէկ գունդ է,
Տասն գունդն մէկ աւագ գունդ է,
Տասն աւագ գունդն, մէկ արքայ գունդ է,
Տասն արքայ գունդն մէկ կայսր գունդ է։

Բայց դա չի կարող նույն մարդու գրածը լինել, որովհետև հակասում է նախորդ մեկնությանը։ Ինչպես երևում է, հենց այդ վերջին հատվածն է Պետրոս Ագուլեցունը, որը չհավանելով իր սեփական մեկնությունն է տվել, և ահա, Մարտիրոս Ղրիմեցին էլ առարկելով նրան չափածո տողերի մեջ պաշտպանում է նախորդին, թերևս հենց իրեն։

Համաձայն Ղրիմեցու տասը հազար բյուրն է մեկ գունդ, իսկ Ագուլեցու՝ տասը բյուրն է մեկ գունդ։ Այդպես ուրեմն՝ բյուրից գունդ, գնդից ավագ գունդ, կայսր գունդ, և այլն հաջորդականությունը ստեղծվում է ըստ Ագուլեցու՝ մեկ, իսկ ըստ Ղրիմեցու՝ չորս զրոյի հավելումով։ Օրինակ.

Զբիւրն որ ասաք տասն հազար
Է ստոգիւ ծերունեաց շար.
Քառորդ կրկնեալ նոյնքան հազար
Նա բոլորի մի գունդ ճարտար։

Ուրեմն ավելանում է չորս զրո (քառորդ կրկնեալ), որ բյուրը դառնա գունդ, կամ.

[1] Ձեռագիր № 1495, էջ 138ա։

Նոյնազունակ իսկ և յարմար
Զգունդն աւագ տեսցուք ի շար։
Զի սա ունի զերկրորդն դար,
Երկոտասան կետից համար։

Այսպիսով, ավագ գունդը միավորից բացի ունի 12 զրո։

Նույն սկզբունքով Ղրիմեցին շարունակում է մինչև քսան զրո, որ անում է կայսր և կանգ առնում, որովհետև.

Ներհունք ոգեն մինչև ցայս վայր
Թիւ համարոյ դասիլ ի շար։
Քան զայս աւելն է բռնաբար,
Առ որս հասումն ասեն դժուար։

Բայց ինքնին քսան զրոն էլ քիչ չէ, եթե նկատի ունենանք, որ միջնադարում զրոյի հասկացողությունը եղել է, բայց որպես հաշվային միավոր-տառանիշ այն գոյություն չի ունեցել, որը պարզ է, կառուցներ և առաջացրել է անասելի դժվարություն։

Բանավեճի մեջ Մարտիրոս Ղրիմեցին է ճշմարիտ, որովհետև այնպիսի դասական մաթեմատիկոս և հաշվագետ, ինչպիսին է նշանավոր Անանիա Շիրակացին, հաշվում է նույն սկզբունքով։

Վերջացնենք։ Ընդհանուր գծերով այս է Մարտիրոս Ղրիմեցու ստեղծագործությունը, կամ այն, ինչ ժամանակը հասցրել է մեզ։

Զ

Մարտիրոս Ղրիմեցին գրական այնպիսի մի դեմք է, որն արտացոլում է դարաշրջանի պատկերը։ Ինչպես ասվեց, ժէ դարը արթնացնում էր մեր գրական ծաղկած միջնադարի՝ ժ—ժե դարերի ավանդույթները և որովհետև այդ անում էր որոշ խզումից հետո, ապա այդ դարը պետք է դիտել իբրև սկզբնավորող։ Թաթարների անողոք ավերից հետո նոր էր աշխուժանում մի կողմից եկեղեցական գրականությունը, մյուս կողմից՝ աշխարհիկ բանաստեղծությունը։ Տեղի է ունենում և մի ուրիշ երևույթ։ Մինչ այդ, երբ կյանքը ապրել էր լիակատար ավեր և ժողովուրդը կորցրել էր իր հոգևոր արժեքները, ազգային ստեղծագործող ոգին անկում էր ապրում։ Սակայն նրան հարկավոր էր հոգևոր սնունդ և նա այդ սնունդը սկ-

սեց մի որոշ ժամանակ քաղել օտար աղբյուրից։ Այդ հողի վրա առաջացավ աշուղական գրականությունը։ Աշուղական բանավոր և գրավոր գրականությունն արդյունք է մեր մշակույթի մեջ օտար ազդեցության։ Նա առաջացավ և կարող էր զարգանալ միայն այն դեպքում, երբ թափուր էր ազգային գրական անդաստանը և ժողովրդի հոգևոր պահանջներն այլ էին[1]։ Սակայն հետագայում այն հայ ժողովրդի դարավոր բանաստեղծությունից սնունդ քաղեց և որոշ չափով հարազատացավ, ապա թափվեց նույն բանաստեղծության հունի մեջ։ Բանաստեղծության հետ նրա մեծ միավորողը հանդիսացավ Սայաթ-Նովան, նրանից հետո աշուղությունը տվեց նաև մի ուրիշ նշանավոր դեմք՝ Աշուղ Ջիվանի։

Եկեղեցական բանաստեղծությունը, կորցնելով իր վաղեմի կրոնական բարձր ոգին, որի պայմաններում միայն կարելի էր ստեղծել այնպիսի դասական գործեր, ինչպիսիք «Անձինք նուիրեալք»-ը և «Մատեան ողբերգութեան»-ը, Մխիթարյանների մոտ իջավ մինչև սխոլաստիկ բառախաղերի և հուշատետրային ձոների մակարդակին՝ խճողված տողակապերի բարդ պայմանականություններով։ Նա իր լավագույն տարրերը փոխանցեց աշխարհիկ բանաստեղծությանը։ Իսկ վերջինս մի որոշ ժամանակ, ԺԶ-ից մինչև ԺԷ դարի սկիզբը, ապրեց ճգնաժամ՝ հող ստեղծելով աշուղական բանաստեղծությանը, բայց հետո, նոր թափ ստանալով, առաջ գնաց և հարատևեց մինչև այսօր։

Այսպիսով մոտ երկու դար այդ բանաստեղծությունները, որոնք գալիս էին տարբեր հունով, զուգահեռաբար գոյակցում էին, հաճախ նույնիսկ միևնույն ստեղծագործողի մոտ։ Ղրիմեցու գործերի որոշ մասը կազմում են կրոնական երկեր, մի ստվար մաս՝ աշխարհիկ տաղեր և մի քանի աշուղական տաղ։

Ղրիմեցու կրոնական երկերը ամբողջովին կրում են եկեղեցական բանաստեղծության կնիքը։ Ճիգեր՝ հասնելու դասական մակարդակին, խճողված պայմանականություններ, արդեն քարացած, կամ քարացող ձևերի օգտագործում, աստվածաշնչական արտահայ-

[1] Իհարկե, խոսքը չի վերաբերում գուսանական բանաստեղծությանը. հայ գուսանական վիպական երգերը և անտունիներն ու հայրենները զուտ հայկական ժողովրդական ծագում ունեն և երբեք չպետք է դրանք շփոթել աշուղության հետ։

տություններ ու պատկերներ և այլն։ Նյութը Աստվածաշունչն է, Մարիամ Աստվածածինը, Հայսմավուրքը, եկեղեցական շինությունները և այլն, նպատակը՝ վերարծարծել կրոնական զգացումը և հայրենասիրություն, վերջապես լեզուն՝ գրաբար։

Աշխարհիկ երգերը չունեն այդ կաշկանդող պայմանականությունները, կամ դրանք անհամեմատ ավելի քիչ են, գրված պարզ, գեղեցիկ ժողովրդական ոճով։ Կան ժողովրդից փոխ առած բազմաթիվ սրամիտ արտահայտություններ, առածներ և այլն։ Նյութը ավելի քիչ է «վսեմ», ըստ ժամանակի պատկերացման, և մոտ է կյանքին։ Հեղինակը ծաղրում է դիրք ունեցող նշանավոր մարդկանց՝ քահանաներին, երգում է ուրախությունը, գինին, ներբողում է սքանչելի քաղաքը և այլն, լեզուն՝ գրաբարից ոչ անխառն, բայց ժամանակակից աշխարհաբարին մոտեցող միջին հայերենն է։

Աշուղական երգերը բոլորովին այլ են։ Գրված այդ բնույթի ստեղծագործությունների ոճով, նյութը «վսեմից» շատ ավելի ցածր, զուտ կենցաղային, հեղինակը նկարագրում է բաղնիքը, քաղաքի ցեխը և այլն և որ դիտելի է՝ գրված հայատառ թուրքերենով։

Այսպիսով, նրա մոտ լեզվական սահմանազատումը սոսկ ձևական բնույթ չունի։ Երբ նա դիմում է կրոնական «վսեմ» թեմաների, գրում է գրաբար, «վսեմից» ավելի ցածր թեմաներ ընտրելիս, որոնք կրոնական բնույթ չունեն, գրում է միջին հայերենով, իսկ այլ թեմաներ շոշափելիս՝ գրում է աշուղական հանգով, ոճով և թուրքերեն։

Գևորգ Ախվերդյանը մեր ստեղծագործ մարդկանց մասին գրել է. «Հայ խոսքով ասել են միայն իրանց կրօնական ու խրատական երգերն, ու յանցանք համարելով անարգել իր աստուածախօս լեզուի սրբութիւն՝ իրանց սիրոյն պօէտական զգացմունքներն երգել են Պարսից, Թուրքաց ու Օսմանցւոց բարբառով»[1]։ Այդ այդպես է մի փոքր խմբագրությամբ։ Ոչ թե «իրանց սիրուն պօէտական զգացմունքները»— այդ զգացմունքները միշտ էլ երգվել են հայերեն լեզվով, այլապես Կոստանդին Երզնկացին, Աղթամարցին, հայրենները անմտածելի կլինեին,— այլ այն, որ իր ձևով հատուկ չի եղել հայոց բանաստեղծությանը, չի ունեցել ավանդույթ և օտար ազդեցություն է։ Իսկ այդ, բնական է, որ իր հետ պետք է բերեր նաև օտար լեզու։ Դիտելի է և մի ուրիշ հանգամանք։ Ամեն մի հայ մարդ, երբ

[1] Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովայ, Մոսկվա, 1852, էջ գ—դ։

ուզում էր աշուղ դառնալ, ընդունում էր որևէ թուրքական, կամ պարսկական անուն. օր. Թուրինջ, Սեփիլ օղլան, Քեշիշ Նովա, Գուրջի օղլի, Ղարիբ օղլան, Քոբաջի և այլն[1]։

Մարտիրոս Ղրիմեցու լեզվի մեջ միևնույն սահմանազատումը զարմանալի ձևով երևում է և անձնական նամակներից։ Նախաբանությունը, որտեղ դիմում է որևէ մեկին, բարձր ոճով՝ գրաբար է, իսկ բուն նյութը, երբ խոսում է հետաքրքրող հարցերի մասին՝ միջին հայերեն և շատ հաճախ էլ՝ թուրքերեն կամ թուրքերենախառն։

Այդպես էր առհասարակ ԺԷ դարի ոճը։ Ուժեղ ոգորումներ են նկատվում գրաբարը վերածնելու, ավելի պարզված միջին հայերենը շարունակում է մնալ աշխարհիկ բանաստեղծության լեզուն, իսկ թուրքերենը ներխուժում է հախուռն ձևով, որը կարելի է բացատրել համակեցությամբ և հայ ժողովրդի՝ թուրքախոս աշխարհում կոտորակված ու ցրված բնույթով։

Մարտիրոս Ղրիմեցին ամենուր՝ թե՛ իր քաղաքական գործունեությամբ և թե՛ իր գրական ստեղծագործության մեջ, մնում է որպես իր դարի զավակը, զգացել, ապրել է նրա կյանքով և որոշակի հաջողությամբ արտացոլել այն։

[1] Իհարկե, խոսք չի կարող լինել հայ աշուղների պատմական դերի, նրանց մեծ ու արժեքավոր ներդրման մասին առհասարակ, բայց դա ուրիշ խնդիր է և այստեղ մեզ չի զբաղեցնում։

ԲՆԱԳՐԵՐ

1

ՅԱԿՈԲ ԵՐԻՑՈՒՆ ԼԵՏՐՆԵՑՈՒՆ Է

Նախնի Հարանց մեր ընտրելոց
Պատուէր ունիմք հաստատական,
Վատաբախտից գրել պարսաւ
Եւ գեղեցկաց տալ գովասան։

Եւ ոչ ասել զչարն բարի,
Զխաւարն լոյս՝ որ չէ արժան.
Այլ զբարւոյն լաւ վկայել,
Զվատթարն չար ասել գրեցան։

Որպէս և այս բան չարագրի
Յաղագս ումեմն Յակոբ անուան,
Որ այժմ երէց վերաձայնի
ՅԱգրիանու կոչեալ պոլսեան։

Ոչ ի յազգէ ընտիր արանց,
Այլ ի յետնոցն որ աննշան.
Վասն այնորիկ ի յէտիրնէ
Գնայ Ստամպօլ վաճառական։

Եւ անդ երէց նա ձեռնադրի,
Ոչ ըստ իւրոյն արժանութեան.
Այլ ըստ բերման ժամանակի
Թէպէտ երբեմն ոչ է զարման։

---

1 A *Անվերնագիր*, B *Յակոբ երէց*: 6 Պ *չարին բարի*: 20 Պ *բեր-մամբ*: 21 Պ *դէպի եղեմն որ չէ արժան*, B *դէպի իւր բեմն զոր չէ զարման*:

Որպէս յաթոռն Մովսիսեան
Դպրաց նստիլ փրկչին է բան.
Կամ չէ առակն խոտելի
Բու յաւերական յարծուանման։

Անդ ժամանակ մի շրջմրջի,
Մինչ ի եանդունն Ըստամպօլայն.
Պատրիարքէն գիր մի առնու,
Որ Մարտիրոսն է Ղրիմայն։

Այնու գրով գայ յԷտիրնէ
Առ պարոնտէրն տէր Յոհան.
Նա ընդունի զնա սիրով
Պատրիարքին գրոյն փոխան։

Յետ այնորիկ նա գիրանայ,
Ստուարանայ, զոր գրեալ կան.
Զվարդապետն այլ ոչ յիշէ
Եւ ոչ զվեհն տէր Յոհան։

Ապա գնայ յՈրուսաղէմ,
Մահտեսութեան ցանկայ անուան.
Ուր որ նստի փառամոլի,
Թէ այս պատույս խիստ եմ արժան։

Հպարտութեամբ յոյժ ուռուցեալ,
Վայրենամիտ և անքարտաւան.
Ի յարծաթոյ հարեալ ի սէր,
Մոլեալ ի յախտն անյագութեան։

Մէջ երիցանց գիւան կառնէ,
Շաբաթն երկու և երեք անգամ,
Ասէ եկայք տուէք համար,
Թէ որչա՞փ է շաբթուս ղուրպան։

22 B *Մովսէսի*: 24—25 B *տողերը* չիք: 40—41 B *տողերը* չիք: 42 ՊB *հպարտութեամբ է ուռուցեալ*: 47 Պ չիք *և*: 49 B *որքան* փխ *որչափ*:

Եօթն ութ երի ինձ է համեր,
Ուր է չկայ մորթն ու փաչան.
Ժամկոչներուն երդումն տայ
Թէ ձեր կերածն եղնայ հարամ։

Մեռելթաղի գլուխ չունի,
Զէրէ հեռու է գերեզման.
Թէ խիստ նեղեն կու հայհոյէ
Զպատճառ եղողն նախնական։

Ժամբարութիւնն կու սիրէ,
Թէ զքաւամնիցն ամէն իւր տան.
Եւ առաւել զհոգոյ մատաղն,
Զծածուկ յիշէքն պաշտման։

Թէ աղքատաց մահ հանդիպի,
Կամ թէ ձայնեն հաղորդութեան.
Ոտվին կոտրի, մէջքն բեկի,
Շուտով յենու ի գաւազան։

Շաբաթն ի բուն ժամ չի գնար
Թէ այս օրերս չէ ինձ արժան.
Կիրակմտին շքեղազարդ
Գնայ կանգնի Բէլայ նման։

Որ զծխերն համցնէ,
Թէ «Հոյս զուարթ» ասաց տէր ան.
Եւ առաւել առաւօտուն,
Որ ընթեռնու զաւետարան։

Բերկրեալ սրտիւ զուարճանայ,
Յերբ որ լսէ հարսանեաց ձայն.
Յառաջագահ բազմի յընթրիս,
Որպէս պատմէ աւետարանն։

51 B *ճիկիարն* փխ *չկայ*: 53 B *է զայն* փխ *եղնայ*: 57 B *լինօղքն*: 61 B *այլև զպաշտմանն*: 67 Պ *օրս*: 70 B *ժողովուրդն* փխ *զծխերն*: 71 A *տէրն այն*: 76 B *յառաջագոյն*:

Ասէ զինչ տայք հայաօրհնէք,
Յետոյ տեսնունք պսակդրամ,
Զտասանորդն սաչուին,
Թէմին կառնում, կամ սաղ դրամ։

Եւ թէ ասեն կէս մի օժտէ,
Ձեռվին սոթտէ կանգնի մէյդան.
Աստուած փրկէ, տէրն ազատէ,
Ճէնկ ու կռիւ մէտէթ ամման։

Պակաս չառնու երկու պլիկ,
Ըռզակ ծախող չարչու նման.
Կանչէ, ճչէ գիշերն ի բուն,
Մինչև իւր կամքն լինենան։

Երբ տնօրհնէքն մօտենայ,
Տօնի, Զատկի՝ սուրբ Յարութեան,
Ձեռիցանին նա խոշտանգէ,
Սաստէ բանիւ սպառնական։

Ով նորընծայ փոքր երիցունք,
Զգոյշ լերուք ամենեքեան,
Տնօրհնէքի հետ բան չունիք,
Զատէք թէ մեր, կամ ազգական։

Քանզի ամէնն ինձ է տուեալ,
Թէ տեղացիք, թէ պազիրկան.
Ես ում կամիմ կուտամ զնա,
Որպէս ասաց պիղծ սատանան։

Խիստ անզգամ, չար և բռիշտ,
Իսկի չունի բարւոյ նշան.
Ամենեցուն է ատելի,
Մէկ մի չկայ իւրեան հաւան։

84 B և փխ տէրն։ 97 Գ կայ փխ կամ։ 100 B շնորհիմ փխ կուտամ։ 102 B անողորմ փխ անզգամ, չոր փխ չար։

Աղքատ և կոյրք և մուրացկան·
Թէ պատահին սորա դրան,
Անիծելով դառնան ի յետ
Անողորմի դրան նման։

Երբ որ աղքատ իւր դէմն ելնէ,
Դժուանայ զտեսն միայն.
Զդէմքն պնդէ իբրև զերկաթ,
Առնէ տրտունջս դիւական։

Թէ զօրն ի բուն աղաղակէ,
Նա չի տանի զձեռն ի քէսան,
Զերկու փողն լաւ կու սիրէ
Քան զդրախտն եդեմական։

Զօրն ասացից, զօրն թողից,
Ոչ ունի մաս մի բարութեան.
Յամաք ջրհոր և չոր աղբիւր,
Կամ աղտատուկ ջուր գառնահամ։

Զնախանձն անչափ ունի հոգին,
Լի է ախտիւք արտմտական.
Եւ ծոյլ բնաւ առ ի բարին,
Զագահութիւն անթուական։

Զմասն վերջին անյիշելի,
Եւ նա ծնունդ իսկ է սոցայն.
Սա եօթնեքին մասամբ վատթար,
Աստ և ի կեանս թշուառական։

Առ նա խօսի սպառնական
Տեառն մերոյ օրհնեալ հրաման,

106 B ւ այլ մուրացօղք։ 109 B տանն փխ դրան։ 110 B մի փխ որ։ 112 Գ զդէմքն իբրև պնդէ զերկաթ։ 115 B տանէր ձեռքն քեսայն։ 119 Գ որ չունի։ 123 B լի ախտիւք նա տրտմական։ 124 B նա փխ բնաւ։ 125 B անչափական փխ անթուական։ 127 B Զի սա ծնունդ իսկ է նորայն։

Թէ երթ ի հուրն յաւիտենին,
Որ է դիւաց պատրաստական:

Զի ոչ ետուր հաց քաղցելոց,
Զեղեր հիւրոց ասպնջական,
Զծարաւիս ոչ արբուցեր,
Ոչ հիւանդաց եղեր պաշտպան:

Բանտարկելոց ոչ մերձեցար,
Որ անհրաժեշտ իմ էր հրաման,
Որպէս որ դու իմոց չետուր՝
Ելցես յիմոյս արքայութեան:

Այս է նորա մասն ու բաժին,
Վերջին բաժակն դատնութեան.
Արբցէ զմրուրն դժոխոյ,
Որպէս Դաւիթ գրէ զայս բանս:

Հազար հարիւր քսան և երեք
Ազգիս հայոց բուն թուական,
Եօթն և ի տաս յամուարի
Որ դեռ սկսեալ իջև այս ամ,

Գրչածնունդ բանս ատտանոր
Արտայայտեալ ի չար եդան,
Մարտիրոսէ Ղրմեցւոյ
Առ որ գրեցան խիստ էր արժան:

132 Գ յաւտենական, B Թէ երբ: 144 Գ դժոխոց: 146—149 Գ տողերը չիք:

2

ՍՈՖԻԱՅԻ ՏԷՐ ՅՈՎՆԱՆԻՆ ՎԵՐԱՅ Է ԱՍԱՑԵԱԼ ՕՏԱՆԱՒՈՐՍ

Ես Մարտիրոս լոկ արեղայ,
Տեղւոյս անուն կոչի Կաֆա.
Աղդմամբ չարին պատահեցայ
Ի չէօլ քաղաքն Սոֆիա:

Եկաք ճանապարհէ դադրած,
Հեծեծանօք անձամբ ցաւած.
Մեք և գրաստք մեր խիստ սոված,
Զի էր անթիւ զօրք հեծելաց:

Գնացաք ի ժամն, դուռ ոչ էր բաց,
Յահէ զօրացն ամրափակած.
Որէց անուն չար մ՚ էր դրած,
Զինքն ու գիւղ օրհնողն անիծած:

Անուն կոչէն իւրեան Յունան,
Ի հաւատոց դատարկ և ունայն.
Զօրն ի բուն շրջի մէխանան,
Տղմաթաւալ խոզի նման:

1—2 Բ Սոֆիայ քաղաքի եպիսկոպոսի վերայ ասացեալ, A Սոֆիացի տէր Յովնանին վերա է ասացեալ, B անվերնագիր: 7 Գ ճանապարհէ եկաք դադրած: 11 A դուռն չէր բաց, A_1 գացանք ժամադուռն չէր բացած: 12 Բ ամուր փակած: 15 Բ իւրէն: 16 A_1 Բ է փխ՝ ի: 17 Գ ի մէխանն:

Մօրուքն է թուխ, երեսն սև,
Իսկի չունի քաշանի ձև.
Բուն բովանդակ մարմնացեալ դև
Ի ունի յոլով չարիս զիւրև։

Ափսոս որ կայ գլուխն բաշ,
Ընդ սատանին եղեալ է գաշ.
Ոչ ընթրիս կու բերէ և ոչ ճաշ,
Գաղանաբար կառնէ սավաշ։

Ջիակներուս հայիֆ արի,
Որ այն պղծոյն տունն տարի.
Բնաւ չետուր խոտ ու գարի,
Մինթէ իւր ճրագն մարի։

Ես կու ասեմ թէ բեր գարի,
Կու տայ զիւր գլուխն քարի.
Ի կնոջէն ինքն է այրի,
Գրողն գայ զինքն այլ տանի։

Զօրն ի բուն շրջի խռոված,
Ջեմ տեսեր իւր պէս նզոված
Կարծեմ թ'իսկի չէ մեռոնած,
Կամ թէ լոկ ձիթով է օծած։

Ժամատան դուռն չէ ի բաց
Եւ ոչ բնաւ կանթեղ վառած.
Զսուրբքն պահէ խաւար և ի լաց,
Աստուած ոչ տայ իւրեան կուշտ հաց։

Կերպիւ միայն գլուխն է խայտ,

19 A_1 մուրուքն, Գ էր փխ է. A_1 Բ երէսն է սև։ 22 Բ չիք և։ 23 A ափսոս ունի գլուխն փաշ։ 25 A_1 Բ չիք և։ 28 AA_1 պղծունն։ 30 A_1 լինի թէ փխ մինթէ։ 31 Բ քարի փխ գարի։ 33 AA_1 Բ ես է փխ ինքն է։ 34 ԳԲ չիք գայ AA_1 չիք այլ։ 36 A_1 այնպէս փխ իւր պէս։ 37 Բ մեռուհած։ 38 A_1 չէ փխ է, A_1 և կամ թէ լոկ ձիթով օծած, Բ և կամ լոկ ձեթով օծած։ 41 A_1 և լաց։

Կէս կորեակի չունի հաւատ.
Զինչ որ ասես կառնէ ինատ,
Խիստ նզոված է և մուրթատ։

Խօսքն ու զրոյցն է բուն ղալատ,
Իւր երեսին հազար նալլաթ.
Ասի, աստուած տայ քո պէլադ,
Ջհդի ազգ ես թէ ինչ միլլաթ։

Թէ հարցանես ճուղապ չի տար,
Կամ ղօղանչէ անկարգաբար.
Եւ թէ կրկնես երկրորդաբար,
Ահեղ գոչէ, քան զգիւահար։

Նման թունիւք լցեալ իժի,
Ցերեսն իսկի ծաղր չունի.
Դէմքն զազիր և աղտեղի,
Տեսն զժնեայ զարհուրելի։

Մնացաք մեք անդ շաբաթ մի բուն,
Զորն ասացից չարեաց պղծոյն.
Սոված թողոյր զմեզ օրն ի բուն,
Երթեալ շրջէր ինքն ի յօրտուն։

Քաղաքացիք իրմէն պէզար,
Եկեալ առ իս հարցին հնար.
Խրատ ետու առանձնաբար,
Կատաղեցաւ զերդ գազան չար։

Խիստ անզգամ և վատշուէր
Անյիշելի ունի չարեր.

47 A զրոյցքն, A_1 զրուցն։ 49 Բ ասացի թէ գտեալ ես պէլատ։ 50 Գ ջհուտի A_1 չհուի, չէ ինչ փխ թէ ինչ։ 51 ԳԲ հարցանեմ։ 53 ԳԲAA_1 կրկնեմ։ 55 A թիւնօք A_1 թիւնիւք։ 56 A_1 երեսն ծաղր իսկի չունի։ 57 A դէմքն է փխ դէմքն։ 58 A_1 զժուար տեսիլ զարհուրելի։ 59 A_1 մնացաք անդ շաբաթ բուն, Բ մեք չիք։ 61 ԳԲ մեզ զօրն ի բուն։ 64 A եկեալք։ 67 A վատաշվէր, A_1Բ չատ չուեր։

Տունն դառնայ հիմանց աւեր,
Ձինքն պատէ բարակ ցաւեր։

Առաւօտուն երբ լուսանայ,
Իւր ժամատեղն է մէխանայ.
Մինչ ի կէս օր չորս հինգ օխայ
Ձեխի, ապա ի տուն դառնայ։

Հանդերձ անձին պատառոտուն,
Ըստ առակի մեծ իմաստնոյն.
Քան զՍանդիտոռն մերկացոյն,
Նրջի ընդ վայր զինչ ասված շուն։

Անպէտ մշակ, չար ռատիկան,
Ձայգի տիրուն արար խոպան,
Անասնակոխ և անպարման,
Ինքն է զիւաց բնակարան։

Ոտի և այլ բաղում չարեր,
Որ խիկի մարդ զայն չէ արեր.
Հասցէ իւրեանն չար օրեր
Եւ զհայլնին առցէ երեր։

Քան զայս աւելի այլ ինչ օգուտ,
Երբ նա անզիղջ է զերդ ջհուդ.
Ոչ հայ, ոչ Թուրք և ոչ մուլհուտ,
Ձինքն ծածկէ բարէ կարկուտ։

Զօր ինչ յիմովս աչօք տեսի,
Զբաններն Յունան չար երիցի,
Զքիչն ի բազմաց ձեղ գրեցի,
Ես Մարտիրոս Ղրիմեցի։

69—70 B ձեռագրի տողերը դասավորված են 70—69 կարգով։ 76 Բ ընդ լուսաւոր առակի։ 77 A_1 կանգնէ գռնէ ի դուռ կանդուն։ 78 ՊA քան զասված, A_1 երբ ասված։ 79 A_1 այնպէս փխ անպէտ, 83 տողից A_1 բնագիրը ընդհատվում է։ 89 ՊA ջհուտ փխ մուլհուտ։ 92 ՊԲ աւնայն փխ Յու-նան։

3

ԴԱՒԻԹ ԵՐԷՑՈՒ ԳՈՐԾՈՒԱԾ ՁԵՌԻՒՆ Է

Դաւիթ երէց Սամամպոլու,
Տեղեաւ Սուլումանաստիրու.
Դու նկիրակ Ուռումելու,
Սահմանողին հերն անիծած։

Ելար էտիրնէ գնացիր,
Հինգ վեց ամիս հոն մնացիր,
Զթէլպիսութիւնդ իմացուցիր,
Եկած համբուդ դուռն անիծած։

Գնացիր հասար Պապատաղի,
Տէր Մկրտչին եղար եաղի.
Զփողն կիսեցիր Թապախի,
Քո երեսին ջուրն անիծած։

Կեղծուկ շրջիս սևուկ շալով,
Փարիսեցի ձևանալով,
Պատմագիրք կու կարդաս լալով,
Քո արտասուաց ծորն անիծած։

Արաբացի դայլ նմանիս,
Զձև քահանի միայն ունիս,

1 A Մարտիրոս վարդապետ Ղրիմցի պատրիարգ Կոստանդինապոլսոյ արարեալ պարսաւանք Դաւիթ երիցուն։ 2 A ի Սամամպուլու։ 5 Պ խերն։ 6 B էտրնոյու, Բ յէտրէնէ։ 9 Բ էկած։ 11 B աղի։ 12 Պ կիսեցիր զփողն տապաղի։ 17 A ձորն փխ ծորն, B քո երեսիդ խաւն անիծած։

Ժամ ասելով կու փրփրիս,
Քո բերնին փրփուրն անիծած:

Հետ Թաթոսին արիր բաղար,
Կերար զղրամն երկու հազար.
Յետոյ գնացիր սուտ երդուընցար
Քո պիղծ առուտուրն անիծած:

Աճամներուն դու հիւր եղար,
Երեք ամիս պատիւ կերար.
Զվարագոյրն է՞ր գողացար,
Քեզ նման պիղծ հիւրն անիծած:

Թէլպիսութեան մէջն ես սնել,
Մարդ չի կարեր հետ քեզ հնել,
Դու ի մօրէ չար ես ծնել,
Քո մայրն ու մորքուրն անիծած:

Դու չես երէց, ցցի պատ ես,
Զօրն ի բուն արիւն կու լակես,
Գիր գրելով զմարդ կու խաբես,
Քո կաղամարին մուրն անիծած:

Դու յայտնապէս Յուդա եղար,
Այն երիցուն փողին համար,
Յիսուն ղուռուշ կաշառ կերար,
Քո կերած ապուրն անիծած:

Գնացիր պէթըմալճուն ասիր,
Մարդ է մեռեր, շուտով հասիր.
Զորբերուն հացն կտրեցիր,
Քո հացին խմորն անիծած:

24 Ա երգուեցար: 26 A Ա աճեմներուն, Ա դուն: 28 AԲ զվարագուրն, Գ չիք է՞ր: 31 B կանար, իյնել, Բ հնել: 33 B քո մէր մորուքդ անիծած, Բ մամդ փխ մայրդ: 37 B կաղամարիդ մուրն անիծած, Բ քո կաղամարի: 40 ԳԲ կաշառ, Ա իզուռն փխ յիսուն: 38—41 B տողերը չիք. 42 Գ գացիր, պէյ-թամալճուն, Բ բէյթամալճուն, Ա բէյթումալճուն, 42–81 B տողերը չիք:

Այ եղկելի և խելագար,
Կէս հալէպի չուխին համար՝
Երէց էիր՝ է՞ր գողացար,
Քո երեսին ջուրն անիծած:

Համբաւեցար գեղ ու քաղաք,
Ամէն երկիրն առհասարակ.
Ուռումելու գող նիրակ
Քո համբաւուդ լուրն անիծած:

Ելար փախար դաղստագողի,
Սահաթի փողն ուտեմ տէյի.
Խոճայ Սէֆէրն յանկարծակի
Հասաւ, քո ուղուրդ անիծած:

Ամօթալի յետ դարձուցին,
Զսահաթի դրամն առին,
Զուռուպադ տարաւ ղաթըրճին,
Ղաթըրճուդ ալ փիրն անիծած:

Զի վարձեցիր դարձեալ կրկին,
Խայտառակեց զքեզ այն ձին,
Ընկեց ի ցէխն այն քաղաքին,
Քո թաղուած չամուռն անիծած:

Ելար եկիր խայտառակած,
Բոլոր անձամբ ապականած.
Որպէս զամէշ չամռէն հանած,
Դողայիր, սարսուռդ անիծած:

Մէջ երիցանցն Ստամպոլայ

47 Բ հալապի: 48 Բ գող եղար, Ա դող ելար: 50—54 Ա տողերը չիք: 52 A ըռումելու: 55 Գ սահաթին փխ սահաթի: 56 Գ սաֆար: 57 Գ թէ փխ քո: 58—59 Ա տողերը չիք: 59 Բ զդահաթի, A և սահաթի: 60 Բ զըըռուբըս փխ զուռուպադ: 61 Գ դիրն փխ փիրն, Բ ղաթըրճուն ալ: 62 Բ վարձեցին: 63 Բ չիք զքեզ: 64 Բ չիք այն: 66 A ելեալ: 68 Բ ցեխէն:

Քեզ նման չար խակի չի կայ,
Կաշառակեր և սուտ վկայ,
Քո վարպետիդ հերն անիծած։

Եղար մէհքէմէի մուլի,
Վայր կու հայիս նման խոզի.
Դու բորոտիս զերդ Գեեզի,
Նա հին և դու նոր անիծած։

Նախնի անունդ էր քո Տօլվաթ,
Այժմ եղեր ես պիտօլվաթ,
Ամէնքն կուտան քեզ նալլաթ,
Զքո ծնած օրն անիծած։

Հարամզատայ խաբեբայ դու,
Միշտ կու ծամես զմիս մարդու,
Ոչ բարով գայիր Թոխաթու,
Եկած սար ու ձորդ անիծած։

Ով վատշուեր լիրբ էտէպսուզ,
Իսկի չոմնիս առ ու նամուս.
Այս բաւական լիցի այժմուս,
Այլ աւելի զուրն անիծած։

---

72 Բ կաշառակուր։ 73 Բ վարդապետին։ 75 Գ նայիս։ 78 A Տէօվլէթ Բ Տէօլվէթ։ 79 A խիստ փխ ես, Բ եղար խիստ այ տէօլվատ։ 80 A ամենն քեզ կուտան նալէթ, Բ ամէնքն քեզ կուտան նալաթ։ 82 B հարամզատէ։ 84 B դու Շամախու, Բ Թուխաթու։ 85 Բ ծարդ։ 86—89 B տողերը չիք։

4

ՏԷՐ ՍԻՄԷՈՆ ԵՐԻՑՈՒՆ Է

Պոնտոսական ծովեզերեայ
Վանա անուն քաղաք մի կայ.
Անդ քահանայ զոմն տեսայ,
Տէր Սիմէոն անուանի նա։

Կերպիւ պարկեշտ նա ձևանայ,
Որպէս չունի ոչ մահանայ.
Իմաստնաձև, բայց անիմայ,
Զորպիսութիւնն ասեմ հիմայ։

Ով որ նմա հիւր լինենայ,
Թէ վարդապետ, թէ քահանայ,
Կարդ մեռելոյ զնա իմանայ,
Զի քան զմեռեալն է անզգայ։

Ընդ արշալոյսն, երբ լուսանայ
Ելնէ ժամում թողնու գնայ.
Զճաշն և զընթրիսն մոռանայ,
Մինչ իրիկուն այլ տեղ շուրջ գայ։

Յեկեղեցին ոչ երևայ
Եւ զեկեալ հիւրան ոչ խղճայ.

---

1 Բ Վանու քաղաքի երեցու վրա ասացեալ բանք։ 7 ԳA որպէս թէ չունի մահանայ։ 11 A կամ փխ թէ։ 12 ԳA մեռելոյ։ 14 Բ Առաւօտուն նա վեր կենայ։ 15 A ելէ։ 17 Բ մինչև յիրկուն։

305—7

Թէ զինչ կերան այսօր նոքա,
Կամ անօթի և ջուր չիկայ։

Երբ իրիկուն ժամուն ելնայ,
Ի սեղանոյն ոչ հեռանայ.
Կարծիս առեալ ակն ունի նա,
Թէ կու գտնեմ հացը լօխմայ։

Հարցանողին ճուղապ չի տայ
Թէ ուր էր նա, կամ ուստի գայ.
Ի չորեք դին աչվին շուռ տայ,
Թէ մեծ գաւաթն երբ առ իս գայ։

Զինչ որ գտնու սիրով կուլ տայ
Եւ մթնծեծ առնէ զնա.
Ցիւր քամկէն փող մի չելնայ,
Այլոց հացին մուշթախ է նա։

Զականչն ի կախ ձգէ ժուռ գայ,
Թէ զինչ պատիւ մարդոյ լինայ.
Զօրն ի քուն անօթի մնայ,
Որ լաւ ուտէ և կշտանայ։

Երբ զփորնլից գառն տեսնայ,
Հոգւով մարմնով ուրախանայ,
Առանց ծամել զինքն կուլ տայ,
Երկու երեք չորս հինգ օխայ։

Փարչ մալ գինի կէս սուլումայ,
Գառան մսին վրայ շուռ տայ.
Ապա երեսն ծաղր գայ,
Հանգչի հոգին և դուրանայ։

Ով որ կամի պատուել զնա,
Երկու երեք գառ ումենայ.
Ղապլու փիլաւ և հերիսայ
Չորս հինգ ղալխան պալըխ շօրպայ։

Բեռ մի սապզի, կանանչ մէզայ,
Թահուն, մառօլ, կծու թառայ,
Ուտու տերև խառն լինայ,
Որ զկերակուրն մարսել տայ։

Մի մեղադրէք Մարտիրոսիս,
Թէ կարճառօտ ասիր զդա.
Զորն գրեցի, զորն մոռցայ,
Եւ զմնացեալն տեսցուք ապա։

Անմեղադիր թող մեզ լինայ
Տէր Սիմէոն, որ ի Վառնա.
Կէսն է յըղորդ, կէսն շախայ,
Աստուած իւրեանն նիաֆ տայ։

21 Բ տողը չիք: 22 ԱԳ ելլա: 23 ԳԱ սեղանուն: 24 ԳԲ կարծես: 28. ԳԱ ժուռ, Ա զա փխ տա: 34 Գ ձախ փխ կախ, ԱԲ շուրջ գայ: 40 Գ ծամել:

54 Գ Մարտիրոսին: 56 Բ մոռացայ: 59 Բ Սիմոււն:

5

ԶԻԼԱՅԵՑԻ ԵՐԻՑՈՒՆ ՀԱՒԻ ԳՈՎԱՍԱՆՔՆ Է

Ես Մարտիրոս Ղրիմեցի,
Սպասաւոր կենաց բանի,
Որ՚ ի Վանայ քաղաքն եկի,
Զարմանալի բաներ տեսի։

Երէց մի կայ Զիլայեցի,
Երեսնամեայ չափ հասակի,
Փանդխտացեալ յայսմ վայրի,
Տէր Սիմէոն մականուանի։

Յաւուր միում գնեց հաւ մի,
Մեզ տի բերէր խահվէալթի.
Եւ էր հաւն այն ծեր պառաւ մի,
Մորթած, փետտած և փորն ի լի։

Երկոտասան սաղ դրամի
Գին կարեցին մէջ ամբոխի,
Երէցն ուրախ էր իւր մտի,
Թէ մատղշուկ հաւ մի գտի։

Շուտով էարկ զինքն ի սանի
Եդիր յեփոց խահարանի,

1 A Երիցու, B Զիլեցի երիցու հաւու գովասանք։ 2 A Ղրըմէցի, B Ղրիմցի։ 6 AB Էրէց մի հայ։ 11 A Թէ մեզ փխ մեզ։ 13 A փորն լի։ 19 A յէփոց, B խոհարանի։

Զմեզ աղաչէր լսել պահ մի,
Թէ մի ճաշէք զխահվալթի։

Քան և մէկն էր յապրիլի,
Պատկեր աւուրն երկուշաբթի.
Սկսեալ ժամուն մետասանի,
Վառեալ զհուրն ըստ օրինի։

Իբրև էանց ժամ մի քանի,
Կերպն հաւուն այլագունի.
Տրտմաւ երէցն ի յիւր մտի,
Թէ եփելու նիշէթ չունի։

Եբեր կացոյց երեք հոգի
Սպասաւոր այնմ սանի.
Զմինն եդիր մուրող փայտի
Զմիւսն յղեաց տկով ջրի։

Եւ զերրորդն, որ ասացի,
Սպասաւոր իբրև զաշճի,
Որպէս զարսն Գաբաւոնի,
Ջրկիր, փայտաբեր Իսրայելի։

Տայիմն ի կեր զփայտն ի հրի,
Մշտածաւալ բոցն փայլի,
Որպէս զհնոց Բաբելոնի
Եւս առաւել նա բորբոքի։

Յեռացմանէն, որ ուժգնակի,
Ցամաքեցաւ ջուրն ի սանի.
Եօթն ութ անգամ դարձեալ կրկնի,
Ձեղեւ հնար թէ հաւն եփի։

20 AB լսել փխ լսել։ 21 B զահվէ ալթի, չիք էր, 25 A վառել։ 32 ԳA մինն կացոյց, Գ կրող փխ մուրող։ 32—33 տողերը B բնագրում գրված են 40—41 տողերի փոխարեն և ընդհակառակը։ 34 ԳA զի երրորդն։

Ծրէցմ յետոյ անճար ընկնի
Հնար խնդրէ ինչպէս եփի.
Ասեն, թէ լաւ է պալմումի,
Երբ արկանես՝ շուտով եփի։

Յեկեղեցւոյ պուճախն ընկնի
Մոմ մի դանու չափ խիյարի.
Զգէ յեռման ջուրն հալի,
Մինթէ այնու հաւուկն եփի։

Եւ նոյն անկեալ մոմն հալի
Յերես ջրոյն վերաբերի.
Խնդայ երէցն ի յիւր մտի,
Թէ հաւն եփաւ, իւղն փայլի։

Երբ զճաշակն եռես խաշուի,
Ի մէջ բերնին մոմն սառի,
Իսկ նա առ այս սաստիկ արամի
Որպէս Յովնան ի Նինուէի։

Ասէ ուր կայր զայս բանս արի,
Որ խարուեցայ ծեր պառւոյ մի.
Եօթն իշոյ բեռ փայտ վառեցի,
Մէկ երկու տիկ ջուր դայ արի։

Հաւ մի եփել ոչ կարացի,
Այլոց կատակ զիս արարի.
Մանկունքս ի զուր չարչարեցի
Կսկծանաց սրտիկս այրի։

Քսան սահաթ ւ այլ աւելի
Աշխատեցան երեք հոգի.

46 Գ անճարըկնի։ 47 Բ թէ ինչպես փխ ինչպէս։ 49 Բ արկանեն։ 51 Ա խըյարի։ 53 Գ Մինթէ լինի որ այնու եփի, Ա մինթե լինի այնու եփի։ 57 Բ ջուրն փխ իւղն։ 58 Ա հաշուի։ 63 Բ խարեցայ, շուն փխ ծեր։ 64 Բ իշու։ 70 Բ չիք ւ։

Ձեղև հաւէն մեզ օգուտ մի
Եւ մնացի ամօթալի։

Մնայ այսպէս ի յեփոցի,
Մինչ որ գիշերն կէս լինի.
Յոյժ ձանձրանայ և աճըղի,
Թափէ զհաւն ի յամանի։

Ի նոյն ժամուն յանկարծակի
Ներս անկանին երկու հոգի.
Գինով հարբած և անօթի
Եւ երկոքեանն են այլազգի։

Անտես աչօք մութն ի մթի
Զհաւն ուտեն անծամելի.
Քիչ մի երէցն ուրախ լինի,
Թէ գիշերով պայն կերուցի։

Եւ թէ մնայր յառաւօտի
Եւս առաւել խախք լինէի.
Յայլոց լեզու անկանէի,
Ժողովրդոց մեծի, փոքրի։

Եղեալ բաներս, որ պատմեցի,
Իբր զխրատ ձեզ գրեցի.
Որ ի գարնան եղանակի
Հաւս չանէք հաւու մսի։

Գարնանն զառն է գովելի,
Փիլիճն ի մուտն աշնան ամսի.

73 ԱԲ եւ փխ եւ։ 74 Բ մնաց այնպէս։ 75 ԳԱ անցանի փխ կէս լինի, Բ գիշերն որ փխ գիշերն։ 77 Բ զհաւնն ի համանի։ 78 Ա ժամայն, Բ ժամոյն։ 79 Բ երեք։ 80 Բ արբածք խիստ...։ 81 Բ չիք են։ 84 Գ մը փխ. մի։ 85 Գ կերցուցի։ 86 Բ եթէ փխ եւ թէ։ 90 Ա բանս, Բ չեղեալ։ 91 Բ իբրև խրատ։ 93 Ա չընէք։ 94 ԱԲ գարունն։ 95 Ա գարնան մտի, Գ աշնամտի։

Հան ի ձմրան մեծ գիշերի,
Թէ արկանէք մէջ հերիսի։

Անմեղադիր լեր մեզ որդի,
Տէր Սիմէոն գիլայեցի.
Զգուշութիւն քեզ գրեցի
Որ չխաբուիս հոռոմ պառուի։

6

ՍԻԼԻՍՏՐԵՑԻ ՅԱԿՈԲ ԷՐԻՑՈՒՆ ՊԱՐՍԱՒԱՆՔՆ Է

Եղբարք եկէք ձեզ բան ասեմ,
Ականջ դրէք ամեններին,
Թէ զինչ բաներ եղաւ պէյան
Սիլիստրեցի տէր Յակոբին։

Հազար հարիւր քսան ւ երկու
Ազգիս հայոց թուականին,
Մեծի աւուր ճրագալուցին
Սուրբ Յարութեան յերեկոյին։

Իւրեանց մէջն սահման մի կայր,
Յաւուր իրիկուան նաւակատին
Կերակրեղէնք և ըմպելիք
Յեկեղեցին պատրաստէին։

Մեղրով շինած փախլավաներ,
Ջըրախուն լան բերէին.
Յերբ պատարագն որ արձակէր,
Մեծի փոքրի բաժանէին։

Այնպէս արին և այս տարիս,

---

1 A գրեմցի Թաթար Մարտիրոս վարդապետին ոտանաւորներն է, Բ Սիլիստրացի Յակոբ էրիցուն է պարսաւանք, B բարեկենդան: 2 A էկէք: 4 A էզավ, Բ եղան, ՊAB պայման: 10 B կար, AB Նավակատին, Բ երկու փի- իրիկուան:

Զոր ինչ սահմանք որ ունէին.
Վարդապետ մի հանդիպեցաւ,
Իսկի խապար չէր այն բանին։

Վերակացուքն, որ անդ կային,
Վարդապետին հանեն բաժին,
Ջհօրիլքի լաւ զումղումէն,
Փախլաւայի մեծկակ սենին։

Երբ մեծ երէցն զայն լսեց,
Գնաց զինչ խելք որ կայր գլխին.
Ասէ բերէք, որ ես պահեմ,
Տանիմ սեղան վարդապետին։

Այն միամիտ վերակացուին
Հաւատացին նորա ստին.
Թէ տէրտէրն սուտ չի խօսիր
Աւագերէց տէր մղտեսին։

Բերին զարախն ու զփախլաւան
Մեծ երիցուն թէւլիմ արին.
Եւ նա առեալ եդիր տօլապն՝
Մինչև անցցէ զգեստ անձինն։

Քանզի նա ինքն էր ժամարար,
Ձեռն թաթախ սուրբ խորհրդին.
Շուտով ձգեց զգեստն ի վար
Դող էր ելեր ոտքին, ձեռքին։

Թէ երբ կարեմ տանել ի տուն
Մարդ չի տեսնէ մութն ի մթին,
Մէկ մի չի կայր, որ զայն գողնայր.

19 B սահման։ 21 B չտուին փխ չէր այն 24 B զհոռուչիքի լա զումզումին, A զհօռեկլքի լաւ զումզումայն, Գ զումզումէն։ 30 ABԲ վերակացուքն։ 32 B տէր պապան։ 37 ABԲ հանցէ։ 38 ԳA նախ ինքն է։ 39 A ձեռնաթաթախ։ 44 A չի կար, գողնար, Բ չկայր, գողանայր։

Հրեշտակք ի վեր զարմանային։

Գայ ի սեղան, բազմի յընթրիս,
Որպէս Յուդա, նենգն ի սրտին.
Ասէ իսկի մարդ չիմացաւ.
Ուրախանայր ի յիւր մտին։

Թէ զփախլաւան հետ արախուն
Որ թաքուցի տեղւոջ մթին.
Այս գիշերվան բանին բուսաւ,
Վաղէն հերիք է ինձ բաժին։

Երբ առաւօտն լուսացաւ,
Աւարտ եղեւ պատարագին,
Եկին բերողքն կերակրոց,
Հարցին զզալայն ու մեծ սենին։

Այս բաներուս մարդ չէր խապար,
Ոչ փոքրաւորք վարդապետին,
Ասեն թէ մեք ոչ եմք տեսեալ,
Ոչ փախլաւան, ոչ արախին։

Նորա լսեալ ազմկեցին,
Տնէ ի տուն հարցմունք արին.
Ելաւ տնէն մեծ տէրտէրին,
Այն մղտեսի տէր Յակոբին։

Քաղաքն ամէն զայն իմացան,
Եւ առաւել ծիր պատմէին.
Այն մահուղեղ լինի նոցա,
Միաբերան զայն ասացին։

Ամենեքեան տուին անէծք

51 A ի տեղոջ։ 53 A վազվան, Բ վաղեան հերիք է նա ինձ բաժին 58 Գ չէ փխ չէր։ 62 A լսեալք։ 67 Բ պատաւնին։ 68 A մահաղեղ։ 69 ԳA ամենեքեան զայն։ 70 ԳA միաբերան։

Մեծ երիցուն և իւր փեսին,
Նա ինչ արժան էր այնպիսուն,
Թող չու խմէր խաչկի որդին։

Զայնմ հնչեալ տարածեցաւ,
Ամեներեան զայս լսեցին,
Թէ տեղացիք, թէ մուսաֆիրք,
Վաճառականք, որք ի խանին։

Ով որ լսեց՝ ասաց նայլաթ
Զեխած նեխած այն մարեօլին։
Զխախկութիւն ի միտ բերեալ,
Յոյժ զարմացեալ հիանային։

Ով սիրելիք ի միտ ածէք
Զնղեալ բանիս, որ ձեզ պատմին.
Արահն չէ աստուածապաշտ
Այլ է ծառայ պիղծ որկորին։

Եթէ բանիս վկայ խնդրես,
Կարդայ զգիրսն Պօղոսին,
Վայ և եղուկ տայ այնպիսուն,
Թէ թշնամի է սուրբ խաչին։

Եւ Յոհաննէս սուրբ առաքեալն
Հրամայէ նման նմին.
Թ՛ամէն մարդոյ մի հաւատայք,
Այլ ընտրեցէք զչար և զբարին։

Զի որկրամոլն է չար տըրուկ,
Որ վկայէ իմաստնալին.
Զի ոչ յագի ու ոչ շատ ասէ,
Ծառայ է միշտ որովայնին։

71 Ա*Բ երիցուն*: 76 *Գ կամ* փխ *թէ*: 77 *Բ վաճառականքն որ խանին*: 79 *Բ մառեօլին, Ամալռուլին*: 85 *Բ իւր կեղծ փորին* փխ *պիղծ որկորին*: 90—97 *Գ տողերը չիք*: 93 Ա *չարն ու բարին*:

Եօթն մահու գրեալ մեղացն
Զերեքն ունի իւրն բաժին,
Զի որկրամոլն է և ագահ,
Որք են ծնողք բղչախոհին։

Իսկ մեք զբանս աւարտեսցուք,
Զի բաւական է գիտողին.
Ով որ ագահ է և մարեօլ՝
Հազար նալլաթ իւր երեսին։

Ինչ քահանայ, որ ագահ է,
Խոբէ զբաժին վարդապետին,
Նա բորոտի, զինչ Գեհզի,
Զինքն անիծէ աստուած հոգին։

Աստուած օրհնէ զժողովուրդն
Եւ զտանուտիկնայքն ի միասին,
Զաստուածասէր և զողորմած
Բարեբարոյ ծեր պաւլնին։

Թէ շատ թէ քիչ, զինչ որ եփեն,
Բաժին հանեն վարդապետին.
Իւղով մեղրով շինած գաթայք
Եւ չոր միսկ, պաշար ճամբին։

Ինքն փրկի յամէն չարէ,
Աստուած պահէ զդուստրն և որդին
Եւ եա աստեացս ելանելոյ
Յարքայութեան հանգչի հոգին։

102 *Գ մենք*: 103 *ԳԲ այս* փխ. *զի*: 106 *Բ ագահին*: 108 Ա *փորոտի*: 113 *Բ պառավնին*: 116 *Բ*Ա *եղով*:

7

Ի ՎԵՐԱՅ ԱՆՀԵՕԼԻ ՏԻՐԱՑՈՒԻՆ

Բայց դու դալս ծանիր, տիրացու Նիկօլ,
Անուն քաղաքիդ որ կոչի Անհեօլ.
Հաց ու կեր չունի, միայն ջուրն է պօլ,
Վերջն տի մնա խարապա և չեօլ:

Քաղաք անուանէք գդեղդ աւերակ,
Ցամենայն բարեաց է ինքն ցամաք.
Որոյ են բնակիչք չար և դժնդակ
Առեցողք միմեանց իրերաց ներհակ:

Իւրեանց զառօրեայ կեանքն երերմնի,
Ժամ աղօթք չունին շաբաթն ոչ օր մի,
Կից կից ափ ալուր փոխարկեն աղի,
Կիսախառն դշուրն ծախեն, թէ գինի:

Ընդէր զօրն ի բուն ձրի խօսիք սուտ,
Յերբ չունիք այտի ձեզ շահ և օգուտ
Բարձէք ի տեղւոյդ գլուխ և ումուտ
Արարէք այտի զփախուստ ձեր շուտ:

10 *Բնագրում խուլեանց:*

8

Ի ՎԵՐԱՅ ԳՈՒՐՂԱՋՈՒ ՈՃԻԴ ՅՈՒՆՎԱՐԻ ԺԷ-ԻՆ

Գուրղադ, դու հիմանց քանդիս,
Քո շինուածքդ ամէն կործանի,
Աւեր ւ անտերունչ մնաս.
Դու նման Սոդոմ քաղաքի:

Ջուրդ դառնահամ և պարշ
Համեմատ ծովու է լեղի,
Զունիս բարութեան նշան
Ցամենայն իրաց ամայի:

Բնակիչ քո չար և դժնեայ
Նմանին որդւոցն Քամի.
Հիւրընկալութիւն չունին,
Զինչ Սոդոմն, որ նոր ասացի:

Կէս մի սովամահ լինին,
Կէս մի դայ դրողն ու տանի.
Ու այլքն երերուն մնան
Դողդոջեալ նման Կայէնի:

Յաւօք տագնապին յաւէտ,
Տենդոտին վշտօք ջերմայնի,

16 Գ ալ փխ մի: 20 Ա ջերմանի:

Չիք և չքաւոր դառնեան,
Որ չունին սէր ընդ օտարի։

Այգիքն ի խոպան դառնան,
Փուշ բուսցի փոխան խաղողի,
Ողկոյզ դառնութեան ծնցին՝
Զինչ գրեաց Մովսէս ի գրի։

Քանզի անողորմ են խիստ,
Ճռաքաղ առնեն զայգի.
Ոչ թռչնոց բաժին թողուն,
Ոչ ողկոյզ մի տան օտարի։

Ի մէջ Ադամայ որդւոց
Չէ տեսեալ սոցա նմանի.
Անգութ և օտարատեաց,
Դժնադէմ և խիստ զարշելի։

Զջուրն ի հորոյ ըմպէն,
Օտարին չի տան կաթիլ մի.
Մինթէ ակն արիւն բղխէ
Եգիպտեայ գետոյն նմանի։

Մարտիրոս հերիք արա,
Մի չափեր չար փոխան չարի.
Օրհնեա զանիծիչն քո,
Աշակերտեա դու Յիսուսի։

35 Գ ի հրոյ։ 36 Գ չտան։ 38 A էգիպտեաց, գետուն։ 42 A աշակերտ եա։

9

ԲԱՆՔ ԾԱՂԿՈՑԱՒՔ ԳՐԵԱԼ Ի ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՌ ԲԱՐԵԿԱՄՍ ԻՒՐ

Ով սիրելիք պարոն խօճայք,
Մեր ճարն ձեզ մնաց եղբարք.
Էանց գարնան լաւ ժամանակ,
Ահայ յամրան կէսն հասաք։

Պաղչիս ծառերն ծաղկեցան,
Ծաղիկքն ելեալ պտուղ հասան,
Վարդ ու շուշան թառամեցան,
Վայելչութիւնք ծաղկանց անցան։

Կանանչ պարտէզ, խիյար պոստան,
Սեխ և դդում և բաթլիճան
Տուեալ պտուղ եկին ի համ,
Զթութշին կերաք իրեք անգամ։

Ծառոց մրգերն եկին ի հաս՝
Տանձ ու սալոր, ծիրան, ինճաս,
Ընկուզն ու նուշն են կիսահաս,
Մեր սրտիկն է բորբոսն ու փաս։

Գորտերուն ձայնն կտրեցաւ,
Երգ պլպուլաց խափանեցաւ,

6 A կէան փխ կէսն։

Ծէթ մոծակաց խայթն սրվաւ
Ձայն գոռեխից յոյժ զօրացաւ։

Վճարեցաք զինչ կայր քսակ,
Մանր ու խոշոր թէմին սատակ.
Արտ մի բակլայ կանանչ կերաք,
Թող զբազուկն ու կարմիր տակ։

Այժմ քաղեմք խելար խոտեր,
Կու տայ յիւրմէն գէշ գէշ հոտեր.
Արգրումցին սիրով կուտէր,
Հիւանդացաւ, կասէր, ախ մէր։

Զմեզ ձգեցիք տեղ մի եապան,
Ոչխար չունինք լինաք չօպան.
Գայլերն եղին մեզ պահապան,
Դէմ փէնճիրին կանգնեն օռնան։

Ճար մի տեսէք մեզ եղնալու
Գնանք թ՚ուր են՝ք մեր գնալու
Այլ ճար չունինք աստ կենալու
Փող չի մնաց հացի տալու։

Պարտոք հաց չի տար էրմէքճին,
Դրամ կուզէ մէխանաճին,
Խիյար ծախող մեր պոստանճին
Մեզնէ կառնու զգին խիյարին։

Ամռան շոգերն զօրացաւ,
Ջօրն ի բուն նեղինք տագնապաւ.
Հորերում ջուրն ալ կէս եղաւ,
Վախենք կորի, մնանք ծարաւ։

Աղաչեցէք առ տէր քրիստոս
Մեզ ողորմի հանէ նոտոս,

24 A *մթին* փխ *թէմին։* 33 Պ *գալերն։*

Վարդավառն ձեզ բարեխօս,
Մեզ խղճացէք մի թողուք հոս։

Մեզ մէկ ամիս վատայ զրիք,
Ձերկուսն անցաւ չասեք հերիք.
Վասն աստուծոյ, ով սիրելիք,
Մեր զանգատին արէք մտիկ։

Նախնի մրգերն ամէն հատաւ,
Կարգն ի խաղողն և թուզն եկաւ.
Մեծ հավուզի ջուրն ալ հատաւ,
Զով ու խարար, զինչ կար փտաւ։

Զայս նեղութիւնս, որ կրեցաք,
Զամէնն առ ձեզ գրեցաք.
Յուլիս ամիսն ալ կիսեցաք,
Հացէ ջրէ ալ կտրեցաք։

Այս բաներուս մի տրտնջէք,
Տէրտէրւ սէօյլէր լաւ կու գիտէք.
Երբ այդչափ մեզ մոռացեր էք
Զաղու հացն հէլալ արէք[1]։

48 A *օզորմի։* 52 A *չասիք։*

10

ՂՐՄՑԻ ԹԱԹԱՐ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՇԻՆԱԾ ՑՏԱՆԱՒՈՐՆ Է

Ա

Արբանեակ չարին,
Անիծեալ կուրին,
Աղբահամ պղծին,
Աչքդ կուրացին,
Ականջդ խլցին,
Ազգդ ջնջեցին։

Բ

Բելիարածին,
Բեհեզղերուղին,
Բողբոջ Նեստորին,
Բերանդ կարկեցին,
Բիբքդ թափեցին,
Բանքդ սպառեցին։

Գ

Գեհեգի կրկին,
Գաղտ նենգաւորին,
Գայլ քանսաարին,

1—2 B *անվերնագիր։* 4 B *լրբին* փխ *կուրին։* 5 B *այս անուն պղծին։* 7 B *խցին* փխ *խլցին։*

Գլուխդ հատցին,
Գործքդ խափանեցին,
Գաղտնիքդ յայտնեցին։

Դ

Դիւթ դժոխային,
Դև դաս կախարդին,
Դառնահոտ ժանտին,
Դողումն կայցին,
Դողդոջ Կայէնին,
Դեղ մի գտանիցին,
Ըստ ցաւոց անձին։

Ե

Եղիր հոմանին,
Եւ նմա գործին,
Եւտիքէս չարին,
Երեսդ սեաւ,
Եղիցիս գերի,
Եւ ճար մի գտցի։

Զ

Զազրագործ մոլի,
Զինչ Մանիքոսի
Զարմն Լևոնի,
Զցաւն Արիոսի,
[Զ]նգովս Նեստորի,
Զնովաւ պարփակի։

Է

Է պիղծ շան որդի,
Է վատթար լոթի,

22 A B *Երեք Թեզաս, որն աստվածաշնչական անուն է, բայց գ-ով է գրվել Դ-երի շարքը լրացնելու համար, իսկ գրիչների կողմից չհասկացվելու պատճառով առանձնացվել է։* 29 B *եղեռնագործին* փխ *և նմա գործին։* 41—42 B *տողերը չկա։*

Է չար եղկելի,
Էն քեզ խռովի,
Էրիկամբդ այրի,
Էջ բառնաս գոթի։

Ը

Ընդ քո ընկերի,
Ընդ համախոհի,
Ընկեր Նեստորի
Ընկղմիք յերկրի,
Ըղունկդ թափի,
Ընքվիդ բորոտի։

Թ

Թունալից զեռուն,
Թափուր ի բարոյն,
Թեղաս կախարդ շուն,
Թաղուիս մէջ գբուն,
Թուք քո պեխերում,
Թափի մէջ հրում։

Ժ

Ժանտաժէտ զեռուն,
Ժտող կանոնոյն,
Ժայթքեալ ոսցա շուն
Ժառանգ գեհեննոյն
Ժահահոտ գբոյն,
Ժամանիս մահուն։

Ի

Իժ ծնող քարբոյն,
Ինքնասպան պղծոյն,

43—45 B տողերը նույն հաջորդականությամբ չեն գրված։ 45 C էջ դարձցիս գոթի։ 47 A զօր անսաւի փխ համախոհի։ 58 B Ժանդաաւէրս։ 59 B Ժխտող։ 58—63 B տողերը միևնույն դասավորությունը չունեն։

Իգասէր զեռամ,
Իշցէ բարկութիւն
Ի սրբոյ հոգւոյն,
Ի քո ժողովոյն։

Լ

Լուծեցեր զկանոն,
Լկտի չարագոյն,
Լակոտ շներուն,
Լեզույդ հերձուածոյն,
Լիցի համրագոյն,
Լուռ ի հաչելոյն։

Խ

Խլուրդ դարշելի,
Խանգարիչ երկրի,
Խելագար ջորի,
Խորհուրդդ ցրուի,
Խելքդ ցնորի,
Խաղք լիցիս յերկրի։

Ծ

Ծնունդ Կայէնի,
Ծագածին որդի,
Ծուռ վիզ անթափ ձի,
Ծառդ չորացի,
Ծաղիկդ թօթափի,
Ծունկդ կտրատի։

Կ

Կցորդ Աքարի
Կախարդ Սիմոնի,
Կամապաշտ մոլի,

77—78 B տողերը հակառակ դասավորությունն ունեն։ 84 B անթափցի։ 86—87 B տողերը հակառակ դասավորությունն ունեն։ 88 B կամքդ սատանի։

Կառափիդ ծռի,
Կուռքդ կործանի,
Կոյրդ սատակի։

Հ

Հանգոյն Յուդայի,
Համացեղ հրէի,
Հոյլդ հեթանոսի
Հեր գլխոյդ թափի,
Հոգիդ տագնապի,
Հայրդ սատակի։

Ձ

Ձանձաղ պիղծ չհոտ,
Ձիավարժ մախսուտ,
Ձիակերպ հայտուտ,
Ձեր օրէնքն է սուտ,
Ձեր տոմարն է փուտ,
Ձեզ հուր և կարկուտ։

Ղ

Ղոմոս եղկելի,
Ղամայ աղտեղի,
Ղօղանջես յերկրի,
Ղամբարդ շիջանի,
Ղեկդ ալէկոծի,
Ղեղան մի լիցի։

Ճ

Ճիւաղդ յայտնի,
Ճեռոտ ախտալի,
Ճակաճամ լկտի,
Ճաճանչդ նուազի,

94—99 B տողերը նույն հաջորդականությունը չունեն։ 100 A Ձամաք փխ ձանձաղ։ 102 A ձիակեր։ 103 B փուտ փխ սուտ։ 104 B սուտ փխ փուտ։

Ճեպով կործանի,
Ճակատդ ի հողի։

Մ

Մեղապարտ մոլի,
Մրգուզ խոտելի,
Մակեդոն վերջին,
Մարմինդ գարշելի,
Մահուանդ օր չարի.
Մի ի հող մտցի։

Յ

Յապուշ և յոռի,
Յանդուգն ձանձրալի,
Յիմարդ ի յոգի,
Յանցանքն Կայէնի,
Յանձին քում լիցի,
Յաւէտ ոչ ջնջի։

112—117 A Ճագար ծակամուտ,
Ճճուղական սուտ,
Ճն(ճ)ղուկ փաւաշուտ,
Ճոխարան լեզուդ,
Ճոռոմ բերանուդ,
Ճանկդ քո որդնուտ։

118—123 A Մկնաքիս աղբուտ,
Մուտտաս պաղրահոտ,
Մկլէդ գարշահոտ.
Մուրն քո գլխուդ,
Մորուքդ ծրտոտ,
Մուր վայ արևուդ։

124—129 A Յորդագործ շամաս,
Յուդայի սարաս,
Յուրացող դամագ.
Յանկողնէդ չեյլաս,
Յաչացդ կուրնաս,
Յրնկէդ խլանաս։

Ն

Նեաարին չարի,
Նոր բոյս ի յերկրի,
Նեատր Նաարանի
Նոր մանիքեցի,
Նոր ծնունդ չարի,
Նենգիչ օրէնի։

Շ

Շաղփաղփ սաորի
Շաղղակեր լոթի,
Շիթ շնորհաց հեռի,
Շաղի[զ]դ քում պղծի,
Շիրիմ մի մտցի,
Շանց բաժին լիցի։

Ո

Ով ողորմելի,
Ոճրագործ գեր[ի]
Ոգիդ գեհենի,
Որոգայթ անկցի,
Որ յաւէտ տանջի։

Չ

Չար բելիարի,
Չարարմատ յերկրի,
Չքնաղ սիրելի,
Չար մարմինդ յերկրի,
Չար արձան լիցի,
Չգառնայ ի հողի։

Պ

Պառաւ գարշելի,
Պղծոյն Յուդայի,
Պատժակից որդի,
Պիղծ լեզուդ համրի,
Պապանձեալ կարկի,
Պապակեալ այրի։

Ջ

Ջանշանաց տեսի,
Ջատուկ կախարդի,
Ջատագով արի,
Ջուրդ ցամաքի,
Ջահդ շիջանի,
Ջիլքդ կարկամի։

Ռ

Ռեմակալ որդի,
Ռամիկ գործով լի,
Ռահակ դու յայտնի,
Ռահդ խաւարի,
Ռասիմդ մոլորի,
Ռամօթ խարխափի։

Ս

Սերմն Արիոսի,
Սաղարթ կրկնակի,
Սերեալ յաշխարհի,
Սարաս Գոմորի,
Սարայ արժանի,
Սոդոմայ պատժի։

Վ

Վայ քեզ չար ոգի,
Վաւաշ լեոնի,
Վաղամեռ որդի,
Վառէն քոյդ բանի,
Վտանգն Սաբելի
Վերայ քեզ լիցի։

183 B ի վերայ։

Տ

Տոհմ Նեռան պարմի
Տերև սաղարթի,
Տիպ Մակեդոնի,
Տաժանեալ տանջի,
Տինա արժանի
Տիրող Նզովի։

Ր

Րասանդ չարի,
Րոտող խորհրդի,
Րոտեալ հաճելի,
Րաբունին բարի,
Րամիցն արժանի,
Րամէ ի ծախի։

Ց

Ցեղէն Յուդայի,
Ցանկալի որդի,
Ցոյց ամէն ազգի,
Ցաւ մարմնոյդ անի,
Ցուցումն սարսափի,
Ցանկ ոչ պակասի։

Ւ

Իւանդ ի հոգի,
Իւնօք խոցոտի,
Իւթով չար ախտի,
Իւսեալ ի մարմնի,
Իւծեալ մաշեսցի,
Իթեղդ մսեղի։

Փ

Փարաք կատաղի,
Փաղաղ յօժարի,
Փիծ ապաւառի,
Փաթուր փանարի,
Փառքդ կորնչի,
Փաղփինդ խաւարի։

Ք

Քամահեալ գոթի,
Քո ցաւդ յաճախի,
Քո դէմքդ այլայլի,
Քո մարմինդ յերկրի,
Քայքայեալ ցրուի,
Քանցեալ կոտորի։

Օ

Օթարան չարի,
Օրինաց հեռի,
Օձտող կանոնի,
Օն և օն լիցի,
Օտոց հանդերձի,
Օձոյդ արժանի։

II

Արբանեակ չարին,
Բելիարածին.
Գենգի կրկին,
Դիւթ դժոխային։
Երկրորդ Սաբինոս.
Զաւիր Մաքինոս.
Էրէց Արիոս,
Ընդարոյս տիկոս։
Թունալից սողուն.
Ժանդասիրտ գեռուն,
Իժ ծնող քարբոյն,
Լաշակերիկ շուն։
Խլուրդ գարշելի,
Ծնունդ Կայենի,
Կցորդ Աքարի,
Հանդոյն Յուդայի։
Ձամաթ պիղծ ջհուտ
Ղոշակ քարշ տղմուտ
Ճագար ծակամուտ.
Մկնաքիս քառքուտ,
Յուռթագործ շմաս,
Նզովեալ Թեդաս,
Շանորդի Թառապակ,
Որոտապաշտ փափաս։
Չարածնունդ Չարես,
Պղծագործ մոլած.

Ջրգողեալ նեխած
Ռասիմ նզոված
Սեգ ամբարտաւան
Վիթխարի գազան։
Տուն լեգէոնեան
Րաստան ախտութեան
Ցնդեալ խելագար
Նիւթիւք լցեալ չար.
Փարաք վայրաբար,
Քեզ վայ բիւր հազար։

12

ՏԱՂ ԱՅՐԻ ԵՐԻՑՈՒՆ Է

Այրի էրէցն է խիստ տրտում,
Զօրն մժխուղ նստի ի տուն,
Այրի, այրի լուցկի չունի.
Ինքն կէրսի իսկ չէրևի։

Այրի էրէցն երթայ ի ժամ,
Միտքն հանապազ կայ ի ծփման.
Այրի այրի լուցկի չունի.
Ինքն կէրսի իսկ չէրևի։

Այրի էրէցն երթայ հարսնիք,
Ի ինքն նախանձի խիստ անհարկիք.
Ի ինքն չելնէ դաշտ կամ այգի
Սէր ւ ի սեղան ւ ամէն տեղիք։

Եւղն է շնչեր գարնանային
Եւ դալար բոյսքն բողբոջին
Եւ կու ծաղկին ծառքն ի յայգին
Վարդն վառի ի վերայ Թփին։
Զուրախանայ սիրտ քահանին
Ի ոչ տրտմութիւնքն փարատին.

19-րդ տողից հետո ձեռագրում գրված է նույն այրի այրի... կրկնակը: Նկատի ունենալով որ երկու կրկնակ գրվում է իրար հետևից և բնագրում համաժամանությունը պաշտպանելու համար կրկնակը հանեցինք:

Ամառն եղև խիստ սիրալի,
Հնգետասան ժամ աւելի.
Ծառք զարդարին պտղով ի լի,
Գոյնքն կարմիր և դրմզի։
Այրի այրի լուցկի չունի,
Ինքն կէրսի իսկ չէրևի։

Աշունն լի, խիստ ցանկալի,
Ամէն մարդոյ է պիտանի,
Տունն լնուն բարով ի լի,
Ուրախանան սիրով սրտի։
Զուրախան(այ) սիրտ քահանին,
Ոչ տրտմութիւնքն փարատին։

Ձինչ գեղեցիկ կայ քան զոսկին,
Եւ կամ քարինքն, որ են անգին.
Տես քահանին չի պիտանի,
Ցորժամ նորա կինն մեռնի։
Զուրախանայ սիրտ քահանին,
Ոչ տրտմութիւնքն փարատին։

Նման ծառի է դուսացեր,
Եւ ինք միայն կանգուն մնացեր,
Եւ քան զտատրակ առանձնացեր,
Զի զուգակիցն իր է մեռեր։
Զուրախանայ սիրտ քահանին,
Ոչ տրտմութիւնքն փարատին։

Այլ նա զլոյսն ի տէրն ունի,
Որ կեանս տա յամենայնի։
Տէր իմ Յիսուս Քրիստոս աստուած,
Դու պահեա զիս ի աշխարհէս,
Ի յալեացն մեղաց ծովէս
Եւ ի սորին սահեցմանէս։

Առաջնորդեա ինձ ի յերկրէս
Ի հանդերձեալն, որ կայ հանդէս.

Օրհնութիւն հօրն անեղի
Եւ էակից նորին բանի
Եւ սուրբ հոգոյն քո փառակցի
Յայժմ և յաւէտ յամենայնի։

Մարտիրոս էրէցս Կաֆացի
Զի զողբս զայս շարադրեցի.
Ով վերծանողք գրոյս տառի
Զողորմին ասացէք ինձի.
Զեղկելիս որ կամ
Բազում մեղօք ողորմելի։

13

ՏԱՂ Ի ՂՐԻՄԵՑԻ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՔԱՂԱՔԻՆ ԱՄԱՍԻՈՅ

Ով դու վայելուչ քաղաք,
Լեռնամէջ կառոյցք գերակայ.
Շինուածք հրաշալի ունիս,
Որ անունդ է Ամասիա։

Դղեակդ անառիկ ամրոց,
Քարանձաւ լերանց վերայ կայ,
Քարհատ պահարանք ՚գանձուց
Յօրինեալ ի Միհրդատայ։

Խոր ձորամէջ վայրիդ,
Մշտահոս գետոյն մերձակայ,
Սիրով համեցան բնակիլ
Քաջատոհմ որդիք հայկազնեայ։

Գետդ այդ հեռագոյն վայրէ,
Բարձրաբերձ լերանց հոսի գայ,
Ծիծաղածաւալ գնացիւք
Մտանէ ի ծովն Պոնտեայ։

Սովաւ զարդարին բոլորք քո,
Նմանեալ դրախտին եդեմայ.
Ծաղկին ծառաստանք այգիքդ,
Գեղազարդ ի մուտն ապրիլայ։

Փթթին գոյնզգոյն ծաղկունքդ,
Հոտ անուշ բուրեն յարակայ.
Վարդն պատուական գովեալ,
Եւ շուշան ընդ բրաբիոնեայ։

Երգէ քաղցրաձայն պլպուլն
Զերգս անուշ և զուարճանայ,
Զմայլի վարդին սիրոն,
Գայ նստի ի թփին վերայ։

Պտուղ բազմացեղ ունիս,
Զանազան ճաշակ քաղցրանայ.
Նուռն և սերկևիլ, խնձոր
Հիւանդաց շարապ լինենայ։

Որթն դրախտարոյս է տունկ,
Զոր բերէ զխաղողն ողկուզեայ.
Այնիւ գովական պտուղ,
Ճաշակածն ասէն Ադամայ։

Ճմլի ւ ի կարաս լցուի,
Նա բաժակ սիրոյ լինենայ,
Թէ ի սուրբ սեղանն ելնէ,
Փրկչական արիւն գոյանայ։

Զսուրբ Աստուածածնի տաճարն,
Ընդ սրբոյ մեծին Յակոբայ
Եւ զնիկողայոսն ընտրեալ,
Հայրապետն յերկրին Ասիա։

Ընդ այլ բազմահոյլ սրբոց
Եւ զԲասիլ վկայն քահանայ
Առ քեզ բարեխօս ունիս,
Եւ քոյոցդ, ով Ամասիա։

Թէ ինձ հրաման լինէր,
Կապէի կամուրջ քո վերայ,

Եւ նշդարենի ծառոց,
Տերևով ծածկոյթ սաղարթեայ։

Որ ոչ վնասէր զքեզ,
Զօրաւոր շողն թամուզայ.
Յաջմէ ւ ահեկէ շմաթք,
Որ հեզիկ հողմն գայր ի նա։

Ցնցուղ փայտեղէն բերեալ,
Կազմէի իբր պշրմղայ,
ԶՊուլտուխլու գեղի գինին
Հեղուի գալ ի քո վերայ։

Ներքին շատրվան ծովակ
Շինէի սալից մարմարեայ.
Վեցից անկիւնից կազմեալ,
Որ է ձև այնիւ չէշխանա։

Յորդառատ աղբերց նման,
Խիտ առ խիտ բխմամբ ցոլանայ.
Նման ծովակին այնիւ,
Որ շինաւ ի Սողոմոնայ։

Բաժակ ոսկեղէն լինէր,
Որ տանէր միննն վեց օխայ.
Մեք անդ ի գահոյս բազմեալ,
Լինէաք խրախ մէստանայ։

Մատովակն յոտին կացեալ
Մեզ բաշխէր զգինին անխնայ,
Մէկ մէկ այն ոսկի ճամով,
Ես խմեմ, որ կարգն ի քեզ գայ։

Ապա զուարճացեալ բերկրիմք,
Քաղցր երգեր մեզ պիտոյանայ,
Խօսիմք այլ և այլ լեզուս,
Զինչ գինին մեզ բարբառել տայ։

Այսքան բուսական լիցի,
Մարտիրոս զբանդ զրուեա.
Ծաղրալի անպէտ խօսիցդ,
Ով հաճի թէ նոր երգէ սա։

Գինում շատ մի հետևիր,
Թէ պատճառ սիրոյ է մեզ նա,
Զբաղումս անառակ առնէ,
Սողոմոն արքայն է վկայ։

Ջհամարն որքանի թուոյս,
Քանակաւ ազգիս Հայկազնեայ,
Ահա բացայայտ գրեմ,
Մի ասեր դու, եթէ Չէ ՆԱ։

14

ՆՈՐԻՆ ՂՐԻՄՑԻ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԱՍԱՑԵԱԼ ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Մաքուր և զուտ ըմպանակիս,
Ով սիրելի, երբ հանդիպիս,
Թէ ի պատիւ, կամ հարսանիս,
Հնգէն, վեցէն վեր չանցանիս.
Թէ չէ յետոյ լինիս ճոռիս,
Շատ վատ ասես Մարտիրոսիս։

Զայս ըմպանակ, որ ունիս յափ,
Է կատարեալ հարիւրի չափ.
Երկու և երեքն սիրով արբ,
Թէ յաւելուս տա քեզ ի խաբ.
Շուտով բերէ յաչքիդ մրափ,
Կատակելով հարուն քեզ ծափ։

Ըմպանակիս զուտ և մաքուր,
Երբ հանդիպիս գոհութիւն տուր։
Քաղցր ճաշակն գայ քեզ դուր,
Զորսէն յաւելն ի տէրն տուր.
Թէ չէ մնաս խելաց թափուր,
Վերադ կցեն հազար բարուր։

Վայելչագեղ այս ըմպանակ,
Բոլորաձև է սա քանակ.

Զանուշ գինին կարմիր որակ,
Սովաւ ըմպես չորս կամ հնգակ,
Թէ յաւելցուս վեց կամ եօթնեակ,
Լինիս այլոց ծաղր և կատակ։

Այս ըմպանակս է գովելի,
Անուշահամ գինով ի լի.
Երեք ու չորսն հետ մեկմեկի,
Ուրախութիւն բերէ սրտի։
Թէ աղահիս այլ աւելի,
Խելաց թափիս իբր զմոլի։

Ըմպանակիս մշտապայծառ,
Թէ հանդիպիս լաւ ի միտ առ.
Սա է ստոյգ սիրոյ պատճառ,
Եթէ երեք ըմպես, կամ քառ.
Թէ յաւելուս կանչես լերդխառ,
Ուժգին գոչես քան զարջառ։

Այ ըմպանակ, իմ մեծագին,
Խիստ վայելես դու իմ ձեռին։
Զկարմիր որակ զանոյշ գինին
Չափէ չորս, հինգ դու ինձ բաժին։
Թէ յաճախես զայլ աւելին,
Կատակ առնես զիս մէճլիսին։

Ես վայելուչ սիրոյ եմ հաշտ,
Ձեռնէ ի ձեռ շրջիմ ի կաշտ,
Մինչև ի չորսն պահեմ հաշտ,
Յետոյ առնեմ խելաց երաշտ։
Եթէ իցես աստուածապաշտ,
Շատ մի կենար դու ինձ հետ հաշտ։

15

Գինին առնէ զքեզ ուրախ,
Թէ յետ խորտկին խմէս յաճախ,
Լինիս որպէս առիւծ անվախ,
Զուարճ լինիս և յոյժ խրախ։

Մեջ ապակուն ածես զաս,
Կարմիր գունով ցուցանէ նա,
Իբրև զվարդ գեղեցկանա,
Եւ դէմք ի նա փայլեալ լինա։

Սակայն եթէ խմես գինին,
Կամ սակաւուկ, կամ հետ ջրին։

16

(ՏԱՂ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ)

Իմ սիրելիքն՝ գոչեցէք ջան,
Մեծ աւետիս ես նոցա տամ.
Զի այսօր է բարեկենդան,
Որ է օր մեծ ուրախութեան։

Պարտ է այսօր ուրախանալ,
Զի հայրապետքն են կանոնեալ.
Ոչ ոք կարէ հակառակ կալ
Եւ նզովից տակն մնալ։

Եկայք եղբարք, իմ սիրելիք,
Պարտ է գինուն մեզէն հոգալ.
Դէպի պաղձան սէյրան երթալ,
Հետ սիրելեացն զուարճանալ։

Տաղ, շարական և խաղ երգել,
Անուշ գինով թասը լեցնել,
Տալ սիրելի եղբօր ձեռն,
Անուշ, անուշ վերան ձայնել։

Ուրախութեամբ բազմիլ սեղան,
Լի կերակրով յոյժ բազմազան.
Ծաղկունքն բուրեն հոտ զանազան
Զոր տեսանողքն հիանան։

Ելէք երթանք այսինչ գետնէն,
Նստէնք ծաղկեալ մէջ չարտախին,
Ջուկն հանենք տանք կրակին,
Մեզէ անենք, խմենք գինին։

Գինին եթէ չափով խմես,
Հետ կերակրոյն յարմար դասես
Եւ ոչ հնգէն աւելցնես,
Հոգիդ յանձին քում դուրանայ
Եւ ցնծութիւն կից միանայ։

17

ԵՒ ՁԱՅՆ ԱՅԾԵՆԵԽԻՈՐԻՑ Է Ի ՎԵՐԱՅ ՃԱՄ ԹԱՍԻ ԳՐԵԼՈՑ

Կարմիր բաժակ մէջն լնէ,
Ով աջն առնէ մեկեն խմէ,
Անուշ մէղէն վերան ծամէ,
Բերան մի Հայր մեղայ ասէ:

* * *

Կարմիր գինով դու լնանիս,
Սիրով շրթամբ միշտ համբուրիս,
Պտոյտ տալով գաս ի ձեռիս
Եւ այս անուն քրիստոնէիս:

* * *

Դու կարմրագոյն որպէս ոսկի,
Զքեզ գովեմ թաս սիրելի.
Պաղուկ ջրիկ տուր ըմպելի
Եւ այս անուն քրիստոնէի:

* * *

Ճամս այս գոչէ ձայն գեղեցիկ,
Թ՚ արբեցութեանց մի հետևիք.
Առ զիս ի ձեռդ որպէս ծաղիկ,
Տուր սիրելոյդ երկու հատիկ:

* * *

Թասըմ, սէնի փեք սէւէրիմ,
Տայիմ ալըփ՝ պօս էտէրիմ,

Տաթլու պատէճիկ իչէրիմ,
Մէստի մի տամ քէյֆ կէզերիմ[1]*:*

* * *

Ես վայելուչ սիրոյ իմ տաշտ,
Ձեռնէ ի ձեռն շրջիմ ի կաշտ,
Մինչև ի չորսն պահեմ ի հաշտ,
Յետոյ առնեմ խելաց երաշտ:
Եթէ իցես աստուածապաշտ,
Շատ մի կենար դու ինձ հետ հաշտ:

---

1 Թասս, ես քեզ շատ կսիրեմ,
Հար առնելով՝ կհամբուրեմ.
Անուշ զավաթ միշտ կըմպեմ,
Գինով արբած կղեղերեմ:

18

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂՐԻՄԱՅ ՅԵՐԿՐԻ, ԱՐԱՐԵԱԼ ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՂՐԻՄԵՑՒՈՅ ՈՏԱՆԱՒՈՐ ՉԱՓՈՎ

Անժամանակն աստուած, անեղ և-անսահման,
Արար ի սկզբան զաշխարհս ամենայն.
Ոչ նիւթոյ լիմէքէ իբր արուեստական,
Որպէս բաջաղեցին ոմանք սխալական։

Այլ ստեղծ յոչնչէ զօրութեամբ իւրեան,
Նախ զերկինս երկնայնօք, յոյժ վայելչական,
Ապա զորս ի նիւթոյ չորից տարրական,
Զկենդանեաց տեսակս և զազգս մարդկան։

Վերնոց և ստորայնոց եդ յատուկ սահման.
Ծովու և ցամաքի, լերանց դաշտական,
Երից մասանց բաժանի աշխարհիս համայն.
Եւրոպի և Լիբի և յԱսիական։

Յորոց մասունք զատեալ զաւառք որոշման,
Բազում և անհամար շինուածք յաւելան,
Մեծահռչակ քաղաք ընչիւք լի փարթամ,
Ծովամիջի կղզիք, դղեակք ամրական։

Յարեւելից մինչ ի մուտս արեւմտական,
Հիւսիս հարաւայնօք միջոցն ի լման,
Իշխանութիւնք կայսերց թագաւորական,
Տէրութիւնք պարոնաց յատուկ սեփհական։

Ոմանք աշխարհակալ կայսերք նախնական
Շինեցին հոյակապ քաղաքք և աւան.
Զոր այժմ յիշատակին ըստ տիրոյն անուան,
Նոքօք մատաբերեալ յիշեմք զայն արքայն։

Որպէս մեծն Աղէքսանդր զՍկանտարիայն,
Անտիոքոս շինեաց զԱնթախիայն,
Ի մէծէն Կոստանդեայ հին Բուզանդիայն
Շինեալ Կոստանդինուպոլիս կոչական։

Սոյնպէս և զայլն իմա, ո՛վ խորհրդական,
ԶՀռոմ, զՄսր, Պաղտատ, Շամախ և Շիրվան։
Արդ, ըստ կարգի յիշել կամիմ զԿաֆայն
Եւ զկղզաձև բոլոր տունն Ղրիմեան։

Զի է հիւսւսակոյս յերկիր ցրտայեան,
Պատեալ ալիասատ ծովով Պոնտական,
Թէ ովք եղեն շինօղք նորին ի սկզբան,
Կամ ովք յորոց առեալ ունին ի կալման։

Քանզի պատմագրոց չունիմք նախնական
Գրեալ վասն նորին պարզ և յայտնի բան,
Այլ անգիր զրուցաց, յարմար և պատկան,
Առեալ կամիմ լինել նորա պատմաբան։

Յետ Քրիստոսի՝ փրկչին մերոյ համբարձման
Մինն ի յեօթանասնից գայ ի յաշխարհն այն,
Քարոզութեամբ նորին ի կուոց դառնան։
Էին բնակիչք տեղւոյն յազգէն յունական։

Քանզի սերունդք նոցին մինչև ցայսօր կան,
Զծովեզերայս ունին յատուկ սեփհական,
Ի քարանձաւ դղեակս Թաքեալ ամրանան,
Արուեստիւք ն(ա)ւաստիք են և այգեպան։

Իսկ յետ ժամանակաց գնդէն պարսկական
Ազգ մի խփչախ կոչեալ, յերու ալլածան,

Գայ տիրէ յաշխարհին միապետական,
Կրօնիւքն Մահմետի և նոյնադաւան։

Շինէ զՂրիմ քաղաքն իւրն կայարան,
Որ և Կազարիայ Սոլխաթ կոչական.
Յայնժամ որպէս թէ մերս ազգի թուական
Ի մուտս հինգ հարիւրի կարծի թէ լինան (1051)։

Եւ յետ ժամանակաց սակաւուց անցման
Եկեալ լատինք՝ տեղւոյն Կաֆայու ցանկան,
Սիրով ուխտեն իրեարց խփչաք ընդ լատեան,
Տան նոցա քաղաքի շինելոյ հրաման։

Շինեն զմիջնաբերթն ամրոց սեփհական,
Զայն որ Ֆռանկհասար անուն կոչական,
Նաւահանգիստ նաւուց, յոյժ վայելչական,
Գեղեցկազարդ քաղաք յօրինեն զԿաֆայն։

Քանզի է ծովահուպ և ձկնափարթամ,
Հրաժարեալ յանչափից ցրտոյ և ջերման,
Նստեալ ի ստորոտի չափաւոր լերան,
Ուստի յաղբերակունք բղխեն քաղցրահամ։

Եւ արդ դարձցուք ի յոճ մերոյինս աղեան,
Տեսցուք, թէ ուստի լեալ եկայք յաշխարհն այն,
Քանզի ոչ էր այն մեզ երկիր սեփհական,
Զի մեք հայ եմք ազգաւ և ցեղ Պահլաւեան։

Ի յաճախելն ի մեղս ազգիս հայկազեան,
Եւ դառնանալն ի մեզ գութն արարչական,
Որպէս Իսրայէլի որդւոյ անդրանկան,
Մատնէ ի սով, ի սուր և ի գերութեան։

Բանք սուրբ մարգարէից գրեալ յայտնի կան,
Քանզի գիտող ծառայն զտիրոյն հրաման
Առաւել գանս արբցէ ըստ ապիրատութեան,
Ունկամբ ոչ լսողի թիկունքն առցէ գան։

Հանգոյն Իսրայէլի, որպէս ասացան,
Եղեն տիրադաւաճ ազգք մեր հայկազան,
Ի խոտոր գնացից իւրեանց ոչ դարձան,
Առեցին զբանս գրոց յանդիմանական։

Վասն այն յօտար ազինս լեալ վտարական
Զրկեալք ի հայրենեաց եղեն ցիր և ցան,
Կայսերք մեր նուաղեալ ի յարքայութեան,
Իշխանազունք և ազատք ի միջոյ բարձան։

Քաղաքն մեծ Անի, մերս ազգի պարծան,
Ի ծաղկաւէտ հացոտ գաւառ Շիրակվան,
Հայկածին զաւակաց տուն լեալ Շարայեան,
Գահոյք Թագաւորաց ցեղից Բագրատեան։

Յաւերիլ քաղաքին ի սպառակործան,
Վարիլն ի գերութիւն ազգիս խղճական.
Քանտումն եկեղեցեաց սրբոց հրաշազան
Յանտիրանալ նորին տերանց սեփհական։

Մնացեալքն ի հարուածոյ անտի պատժական
Յաստուածասաստ և խիստ եկեալ բարկութեան,
Փախստեայ ի տեղւոյն ելեալ հեռանան,
Որպէս թէ գերավար դիմօք լալական։

Կէսքն ճղեալ գնան ի Ջուղայ և Վան
Եւ այլքն ի յայլ տեղիս, ուր և կամեցան,
Իսկ կէսքն տարագէմ յերկիր հեռաստան,
Անցանեն ընդ ծովամբն Կասպիական։

Յազգքն նետողական ելեալք ապաստան,
Եւ ի կայսր նոցին՝ թաթարի մեծ խան,
Ձեռըի առեալ մնան մերձ Հաճի Թարխան,
Ախսարայ կոչեցեալ տեղին աննշան։

Եւ անդ ոչ ախորժեն մնալ սեփհական,

Զրուեալ դժնաբարու ազգաց հոնական
Ապա դեսպանս յղեն առ լատին իշխան,
Որ էր տէր Կաֆայու նախնի բերթին այն:

Առ որ ուխտ հաստատեն և դաշն ամրական,
Զուեալ Աղսարայու և գան ի Կաֆայն.
Կէսք ի Ղրիմ քաղաք ախորժեալ մնան,
Միրելով զբաղցրայօդ լեառնամերձ վայր այն:

Եւ այլքն անցեալ յերկիր յօտար հեռանան
Ի յաշխարհն Իլախաց և ի յԱխքիրման.
Որոց սերունդք տևեալ մինչև ցայսօր կան,
Իշխանազունք գոլով և ընչիւք փարթամ:

Ի գալն ազգիս հայոց յերկիր Ղրիմայն
Եօթն հարիւր ութսուն էր մեր թուական
Զետեղեալ մնացին ուր և ասացան՝
Ի Կաֆայ, ի Ղրիմ, ի Լեհ ւ Ախքիրման:

Իսկ այնք, որք ի Կաֆայ կացին սեփհական
Եւ ի Ղրիմ քաղաք Սուլխաթ կոչական,
Եկեղեցովք լցին զվայրսն ամենայն
Փոխան եկեղեցացն, որք ի Շիրակվան:

Հոյակապ վանորայք և կրօնաստան,
Ի յայրս և ի լերինս սրբոց կայարան,
Բազումք ի նոցանէ մինչև ցայսօր կան,
Որպէս և փառազարդ վանքն Սուրբ Նշան:

Յետ այսմ ամենայ/ն/ի այնք որ ի Կաֆայն,
Խոշտանգեալ տաքնապին յա/ղ/գէն հոնական,
Զի գայր պատերազմաւ դժնատես ազգն այն,
Առնէր վնաս բազում ընչից և մարդկան:

Զի ոչ էր ամենից բերդն բաւական,
Զայն որ Ֆռանկն ունէր իւրն սեփհական,

Վասն այն միաբանեալ սիրով մեծաջան
Շինէն բերթ արտաքոյ եռակ պարսպեան:

Իսկ յութ հարիւր թուին և չորեքտասան
Գայ անդ պատերազմաւ Թաթարի մեծ խան,
Առեալ զՂրիմ տիրէ բուռն աշխարհին այն,
Հալածելով զՉիփչախ ազգն պարսկական:

Բայց ոչ կարէ զօրել քաղքին Կաֆայեան
Եւ այլոց պարսպաց դղեկաց ամրական,
Առնէ սէր ընդ նոսա, զի յակամական
Կարեկցին իւրեանց երթևեկութեամբ:

Այս բանք նոցա միջին իբր ուխտ և պայմանս
Ժամանակ մի կացին սիրով երկոքեան,
Մինչև եհաս մերոյս ազգի թուական
Յինն հարիւր և չորս այլ ևս քսան:

Յայնժամ ազդմամբ չարին յոյժ աղմկեցան
Մեծ պարոնն Շիրինի և Թաթարին խան,
Մանաւանդ թէ վասն մեղաց բազմութեան,
Հայոց և ֆռանկաց քրիստոսադաւան:

Քանզի խանն և պարոնն խնամի/ա/նան,
Զդուստրն պարոնի խանի որդւոյն տան,
Ի գալ փեսին ի տուն իւրոյ աներան
Բանսարկ[1] աղմկեն զսոսա զերկոսեան:

Ասեն խանին, պարոն եղև քեզ սատան,
Կամի զքեզ բառնալ զորդիդ առնել խան,
Նոյնպէս և պարոնին պատրողական բան,
Իբրու փեսայն լինել նորա դաւաճան:

Ըմբռնեալ պարոնին նենգիւ զիւր փեսայն
Տայ պահեստ ի Կաֆայ առ լատին իշխան,

[1] Բանսարկ բառը դնում ենք հավանական, մոտավոր ընթերցումով:

Եւ նա առեալ ունէր զնա ի կալման,
Ոխացաւ ընդ նոսա այսու մեծն խան։

Ապա ձգեալ զձեռն յօսմանցուց արքայն,
Ընալ նմա ուխտագիր առաքէ դեսպան,
Ելանել շատ նաւօք և գալ ի Կաֆայն,
Եւ ինքն ցամաքով զօրօքն իւրական։

Քաղաքն առէ լինել թագաւորական,
Ինքն միայն առցէ զորդին սիրական,
Ելեալ բազում նաւօք օսմանցու փաշայն,
Երեք հարիւր առեն համարք նաւուցն այն։

Գայ հասանէ այնու՝ նայ ի նոյն սահման,
Եւ խանն ցամաքով, որպէս ասացան,
Տան սաստիկ պատերազմ նոքա երկոքեան[1]
Ընդ ծով և ընդ ցամաք շրջապատական։

Առեալ տիրէ զքաղաքն օսմանցու փաշայն,
Դառնա ուրախութեամբ առ իւր մեծ արքայն,
Յամօթալի դառնա և թաթարին խան,
Քանզի զորդին առեալ յՍտամպօլ տարան։

Առեալ ածէ զնա կայսեր յանդիման
Կետիկ Ահմատ կոչեալ փաշայն Ղափուտան,
Հնազանդել յանձն առնու մանուկն սուլթան,
Ամբփակ նզովիւք մինչև յաւիտեան։

Եւ նա կայէ նմա թագ արքայական,
Շքեղազարդ փառօք առնէ զնա խան
Եւ զհայրն սպանէ անդէն յիւրում տան,
Նստուցանէ զորդին իւր հօրն փոխան։

Ունին հաստատագոյն նոքա զայս սահման,
Ձեռամբ կայսեր նստի թաթար ազգին խան,

[1] Նոքա երկոքեան—տպվել են հավանական, մտավոր ընթերցումով. Ժապավենի մեջ աղճատված է։

Այս է նոցա պատճառ հնազանդութեան
Ուր կայսրն կամիցի անտրտունջ գնան։

Աստանօր ի պատմել ճառս անկարանամ,
Քանզի ճմլի սիրտ իմ եղեալ ի դողման.
Զի՞րդ կարայց հիւսել զբանս աւաղական
Ի վերայ Կաֆայու քաղաքին առման։

Շրջապատեալ եղեն զքաղաքն ամենայն,
Այլասեռ թշնամիք ծարաւիք արեան,
Կրճտեալ ատամամբք իբր գէշք գազան
Գիշատել զկլկլանս գայլօրէն ագահեան։

Գոչումն աղաղակի նոցին և կական,
Ո՞վ կարէ արկանել գրով զամենայն,
Ծնօղքն աղէխարով դէմ զաւակաց լան,
Անկեալ զպարանոցաւ նոցին հեկեկան։

Նորահասակ փեսայք ընդ հարսին ողբան,
Լաւ առեն մեռանել յաւուր բաժանման,
Մատաղատունկ մանկունք, մարգն սիրական,
Գիտարձակ բողոքեն յոյժ ողորմաձայն։

Քանզի տաքնապէին անհանդուրժական
Ահագնագոչ ձայնէ զինուց սաստկութեան,
Ինքեան ոչ ունելով ուստեք օգնական,
Անթիւ զօրաց նոցին պակուցեալ երկեան։

Աստանօր մերս անցանք առ տէր փչեցան,
Հրամանաւ արարչին կարգեցան յառեան,
Հանգոյն վերջին աւուր դպրութիւնք բացան,
Նժարք մերոյս կշռի ծանր ծանրացան։

Ի ձեռս անօրինաց մատնեցաք վասն այն,
Քանզի կամ արարչին առ մեզ դառնացան,
Ամրոց կարծեալ պարիսպն յոր մեք ապաստան
Հարեալ աւերեցին ի սպառակործան։

Արդ՝ մեզ պիտոյանայ մեծն Երեմիայն
Ողբալ զթշուառութիւնս հանգոյն նախնական.
Զտաճարս մեր աւերեաց նոր Նաբուզարդան,
Բազմութիւնք սրբութեանցս արարեալ թալան։

Սուգ առին ճանապարհք երթեւեկութեան,
Նորոյս մեր Սիօնի տօնք եղեն խափան,
Վայելչագեղ տաճարքս ի մէնջ գերեցան,
Փոխան օրհներգութեանց մուղրոց լսեմք ձայն։

Թէպէտ ըստ մեղանացս որ էաք արժան,
Եհար զմեզ խրատու տեառն գաւազան,
Սակայն ոչ նուազեաց գութն արարչական,
Յարեամբն իւրով գնեալ հօտէս բանական։

Արկեալ զգութ սիրոյ սիրտ իշխանին այն
Անդէն անշարժ կալոյ տա նոցա հրաման,
Զոմանս եկեղեցեաց շնորհէ սեփհական,
Նոյնպէս և զվանորայս որք ի բացեական։

Իսկ ազգն ֆռանկաց առեալ հրաման,
Զուեալ աստուստ գնացին ի Ֆռանկստան.
Եւ մերայինք մնացեալք ի նոյնն պայման,
Տուեալ հարկս կայսեր կացին անսասան։

Պատմութիւն Կաֆայու էր մինչև ցայսքան,
Զոր կարգաւ ճառեցաք զեղեալն ի սկզբան,
Խնդրողաց ծանուցաք ըստ մերոյս խոստման,
Թէ ույք յորոց առեալ ունին ի կալման։

Ունիմ ընդ սոյն ասել այլ իմն սուղ բան,
Զի այնք ևս են ախորժ լսողի ունկան.
Գան առ մեզ պատուհասք որպէս ասացան,
Յաճախ ձգտելս մեր ի մեղս զանազան։

Յորժամ հազար և յիսունն էր մեր թուական
Մեծ իմն փորձութիւնք աշխարհիս դիպան
Միջերկրեայցս որ կոչեն աշխարհ յունական,
Գրէթէ Ստամպօլու մինչ ի Պարսկաստան։

Քանզի արք յելուզակք ելին աննշան
Ժողովեալ զօրիկայս եղեն միակամ,
Յաւելեալ օր յաւուր և յոյժ բազմացան,
Կոչեցան ճէլալիք՝ յաշխարհակործան։

Յասար առին զաշխարհս ուր և ընթացան,
Ոճիրք անպատմելիք նոքօք գործեցան.
Արարք և գործք նոցին որք յանդգնեցան
Անկար է թիւ առնուլ զեղեալսն ամենայն։

Ընդ այլոց դիպուածոց ցասմանց պատժական
Եւ զայս դառն մրուր էարբ Հայաստան,
Ելեալք ի հայրենեաց իւրեանց սեփհական
Ընդ ծով և ընդ ցամաք եղեն ցիր և ցան։

Ի յայնմ աստուածասաստ աւուր բարկութեան
Բազումք ի մերս ազգէ գնան ի Կաֆայն,
Թողեալ զհայրենիսն և անդէն մնան,
Զերծեալք ի հալածչաց զտեառնէ գոհանան։

Նաև յայլ քաղաքունս որք ի նոյն սահման,
Սփռեալք զետեղեցան յորս եղեն հաւան,
Ի Ղարասու կոչեալ նորաշէն յաւան,
Եւ ի Պաղչասարայ Կողլով կոչական։

Քանզի է Ղարասուն վայր միջասահման,
Եւ է գոյիւք առատ շատ ունի ցորեան,
Բազում և անհամար ծառք և բուրաստան,
Կարկաճասահ գետով գեր քան զամենայն։

Իսկ թէ ոք հարցանէ զՊաղչասարայն,
Նայ է տեղ պարծանաց բոլոր յերկրին այն,

Քանզի թագաւորաց է գահ սեփհական,
Յայնց որ նետողական ազգին կոչեն խան։

Եւ քաղաքն Կոզլով անուն կոչական,
Ծովահուպ շատ նաւուց է ապնջական.
Բնակիչքն նորին առատ բարեօք լիանան,
Բայց ի հորոյ ըմպեն զջուրն քաղահամ։

Արդ՝ աւարտումն եղև բանիս պատմութեան
Յաշխարհին Ղրիմու կոչեալ հոնական.
Թէ յորոց հիմնեցաւ բացայայտեցան
Եւ կամ թէ զինչ այժմոյս է նորայն սահման։

Զմերս ազգի գալուստ կարգաւ յիշեցան.
Թէ յերբ, կամ յուստի եկին յայտնի ծանուցան,
Փախուցեալք ըստ երգոյն յորսողաց զերծան,
Ի մի վայր ժողովեալ սեփհականեցան։

Զարմ և սերունդք նոցին մինչև ցայսօր կան,
Ծաղկեալք են ի հաւատ քրիստոնեութեան,
Ցիշատակին զնախնիսն, պտեառնէ գոհանան,
Սրբոյ երրորդութեան յաւէտ փառս տան։

Եւ արդ՝ որ մերս ազգի կոչեալ թուական.
Է հազար և հարիւր տասն և մետասան,
Այս բանք արտայայտեալ ի մի շարեցան
Պատմողական ոճով տաղաչափական։

Յարմարող նորագիտ բանիս պատմութեան
ԶՄարտիրոս պիտակ պեռս Ղրիմեան.
Յիշել առ տէր հայցեմ սրտիւ լիական
Եւ ինձ բաժին շնորհել զմի Հայր մեղայն։

19

(ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ)

Մերումս յատուկ շրջականի,
Ամանակաց որ հոլովի,
Բոպէից թիւ մի անգամի,
Տրամատեալ յայլոց սեռի։

Ի մետասան հարիւրորդի,
Բուպ ընդ նմին եօթնեակ թւի
Ամակացաւ սա ի քարտի,
Ստացմամբ հիքոյս շուառալի։

Վերծանողացդ մաղթեացի,
Աղերսանօք կողկողալի,
Բարունօրէն յորժամ վիպի,
Դասիւ ի ձէնջ լուր յաւենի։

Անդէն յիշել յանձն եղիցի,
Պուետիկոսացդ պանծալի,
Եւեթ անուն զիս զեղկելի,
Տէր Մարտիրոս Ղրիմեցի։

Ինձ մասն ընդ ձեզ հայցեմ լիցի,
Էկլէսական պարգևոյդ ձրի,
Սերմանողք դուք կենաց բանի,
Առջիք յիշման զմեզ արժանի։

Հայր մեր յերկինս՝ սուրբ եղիցի....։

20

Ի ՄԱՐՏԻՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ՂՐԻՄԵՑՒՈՅ ՇԱՐԱԴՐԵԱԼ ՈՐ ԸՆԴ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԱԳՈՒԼԵՑՒՈՅ ԱՌԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԻՆ ՇԱՂԱԳՍ ԹՈՒՈՅ

Իմաստնալի յուշիմ եղբայր,
Զգրեալս ընկալ խոհեմաբար.
Անցեալ ատորբք բանք վիճաբար,
Զոր առարկաւ քննողաբար։

Զբիւրն որ ասաք, տասն հազար,
Է ստոգիւ ծերունեաց շար.
Քառորդ կրկնեալ նոյնքան հազար,
Նա բոլորի մի գունդ ճարտար։

Նոյնագունակ իսկ և յարմար,
Զգունդն ասագ տեսցուք ի շար։
Զի սա ունի զերկրորդն դար,
Երկոտասան կետից համար։

Իսկ գունդն արքայ դիմեաց ի սար,
Որոյ շաւղի ելքն է դժուար.
Գահաւանդակ յերրորդն դար,
Վեշտասան կէտ սորայն ի շար։

Յետ այսորիկ զօրեղաբար,
Կայսրն խմբիւք բազմահամար։
Հզօրօք դիմեալ ելնէ ի ծայր,
Քսանահամար կէտն, որ ի շար։

Ներհունք ոգեն մինչև ցայս վայր,
Թիւ համարոյ գասիլ ի շար։
Քան զայս աւելն է բռնաբար,
Առ որս հասումն ասեն դժուար։

Ծանոթագրություններ

I

Ինչպես երևում է, Ղրիմեցու երկերը լայն ընդունելություն են գտել։ Կարճ ժամանակում կատարվել են բազմաթիվ ընդօրինակություններ։ Պոտուրյանը նրա բանաստեղծությունների բնագրերը հրատարակել է Վենետիկի Մխիթարյան ձեռագրատան մի տաղարանից, Քյուրտյանը ունի Ղրիմեցու ստեղծագործություններ մի տաղարան, ըստ Տաշյանի Ցուցակի Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի № 436 ձեռագիրը պարունակում է Ղրիմեցու տաղերը, Կ. Օհանջանյանը ևս ունեցել է այդպիսի մի տաղարան։ Այս չորս տաղարաններն էլ, ընդգրկել են նրա միայն երգիծական ստեղծագործությունները և բովանդակությամբ համապատասխանում են Հայաստանի Պետական Մատենադարանի № 3860 և 8908 ձեռագրերին։

Մարտիրոս Ղրիմեցու երկերից կան ցրված Բոդլեյան գրատան, Երուսաղեմի Մատենադարանի, Անկյուրիայի և այլ ձեռագրերում։

Պարզ է, որ եղել են և թերևս կան Ղրիմեցու ստեղծագործությունների մեզ անհայտ ուրիշ ձեռագիր ընդօրինակություններ ևս։

Մ. Գյումուշխանեցին մի հետաքրքիր վկայություն ունի։ Նկարագրելով Ղրիմի թշվառ վիճակը, իր «Անձնական պատմութեան» մեջ գրում է.

«Եկեղեցիք անզարդացեալք, քահանայք էին փախստեայք, սպասաւորք և պաշտօնակատարք յետին ողբալի կացութեամբ՝ ուր երբեմն փայլեալք էին արք իմաստունք և գեղեցկագիր ճարտար նոտարք, որպէս Յակոբ Ղրիմեցի բուն տոմարագէտն, Մարտիրոս վարդապետն, և այլք՝ որք պահպանին ընդ թերթիւք երից հատորոցն պատմութեանց, և փայլէին բազումք գեղեցիկ ձեռագրովք ի զանազան մատեանս, օրինակեալք ի Կաֆայ և յայլ քաղաքսն Ղրիմու, յորս գտանին ի վերջաբանութեանց յայտարարեցեալքս անուամբ և տեղեաւ»[1]։

Նկատելի է, որ Ղրիմեցին մեծապես ճանաչված ու սիրված է եղել իբրև գրող ու մատենագիր։

Երևանի Պետական Մատենադարանում Ղրիմեցու երկերը ամփոփված են հիմնականում չորս ձեռագրում՝ № 1495, 7717, 3860 և 8908։

№ 1495 ձեռագիրը զանազան նյութերի ժողովածու է, գրված 1678—1684

[1] Գյուտ Աղանյանց, Դիվան՝ հայոց պատմութեան, Գիրք ԺԲ, էջ 74—75։

թվականներին Եփրեմ վարդապետի կողմից, որը Մարտիրոս Ղրիմեցու աշակերտ Եփրեմ Երամիշյանն է։ Նյութերն ընդօրինակված են Մարտիրոս Ղրիմեցու կենդանության օրով և գրեթե ունեն ինքնագրի արժեք։ Այստեղ հավաքված են մեծ մասամբ նրա պատմական ու կրոնական բնույթի երկերը։

Երկրորդ ձեռագիրը՝ 7717, տաղարան է[1], գրված 1695 թվականին Ադրիանուպոլսեցի Տեր Մինաս քահանայի ձեռքով, Ադրիանուպոլսի առաջնորդ Եփրեմ վարդապետի պատվերով, որը նույն 1495 ձեռագրի գրիչն է և Մարտիրոսի աշակերտը։

Այստեղ զետեղված Մարտիրոսի տաղերը նույնպես բավականաչափ անաղարտ են և ունեն ինքնագրի արժեք։

Երրորդ ձեռագիրը՝ 3860, տաղերի ու զանազան նյութերի ժողովածու է, ԺԸ դարի գրչություն, տեղը և գրիչը անհայտ, գրված է անկանոն, վայրիվերո և բազմաթիվ սխալներով։ Այստեղ ընդգրկված են Ղրիմեցու բացառապես երգիծական ոտանավորները։

Չորրորդ ձեռագիրը՝ 8908, տաղարան է, ԺԹ դարի գրչություն. գրիչն է նշանավոր Ղևոնդ վարդապետ Փիրղալեմյանը։ Տաղերի բնույթով ձեռագիրը համընկնում է № 3860-ին։ Ղ. Փիրղալեմյանը իր սովորության համաձայն տաղերն արտագրել է որոշ խմբագրումներով և կրճատումներով։

Ղրիմեցու երկերը ցրված են նաև Պետական Մատենադարանի այլ ձեռագրերում՝ ձեռագիր № № 737, 7726, 6517, 523, 2095, 607.

Պայմանական նշաններ

ձեռագրեր

AA, = ձեռագիր № 3860։
B = » № 8908։

տպագրեր

Ա — «Արձագանք», 1897։
Բ — «Բազմավէպ», 1929—30։
Գ — Պոտուրյան «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները», Բուխարեստ, 1924—30։

Համեմատական բնագրերը կազմելիս մեր նպատակն է եղել հնարավորին չափ վերականգնել ինքնագրերը։ Ամբողջ աշխատանքն ընթացել է այդ ուղղությամբ։ Տարբերակների դեպքում հավանական դիտվող ընթերցումները մտել են բնագրի մեջ, իսկ ոչ հավանականները, կամ որոշ երկրայնություն առաջացնող տարընթերցվածները՝ տարվել տողատակ։ Ձեռագրերի բացահայտ սխալները, բացարձակ վրիպակները, որևէ օրինաչափությամբ չպայմանավորված զանազան աղավաղումները և այլագրությունները, որոնք գիտական և բնագրային նշանակություն չունեն, տողատակում չենք նշել։

Մեր ձեռքի տակ եղած բնագրերում ուղղագրությունը չափազանց այլազան է։ Միօրինակություն պահպանելու համար բնագրերը տալիս ենք գրաբարյան ուղղագրությամբ։

[1] Այս ձեռագիրը պատկանել է Կ. Կոստանյանին, որից նա մի երկու տաղ է հրատարակել իր պրակներում։

II.

1

Տպագրել է Պոտուրյանը «Նաւասարդ»-ում (Բուխարեստ, 1923, էջ 101—102, տես նաև՝ «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները», Բուխարեստ, 1924—30, էջ 40—47)։

Պոտուրյանն այս և հաջորդ մի քանի երգիծական տաղերը հրատարակել է 1913 թվականին Սեբաստիայից Ս. Ղազար բերված մի ձեռագրից։

Այս տաղից օրինակներ պահպանված են Երևանի Պետ. Մատենադարանի երկու ձեռագրերում՝ № 8908, էջ 55բ—56բ և № 3860, էջ 200ա—201ա։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի ենք առել Պոտուրյանի և ձեռագիր № 8908-ում զետեղված օրինակները։ № 3860-ի օրինակը չափազանց աղավաղված է, անկանոն, ուստի հարկ չհամարեցինք նրա տարընթերցվածները նշել։ Այդ օրինակը պարզապես մի անկարևոր տարբերակ է. այսպես.

Պոտուրյանի ժողովածու	Ձեռագիր № 3860
Որպէս և այս բան շարադրի	Այլ որպէս պատմի
Յաղագս ումեմն Յակոբ անուան.	Յաղագս ումեմն Յակոբ անուան
Որ այժմ էրէց վերաձայնի	Որ այժ/մ/ վերաձայնի Յակոբ էրէց
ՅԱդրիանու կոչեալ պոլսեան։	Ի քաղաքն Անդրիապօլիս,
	Ի սահմանն ուռումեան։

Սակայն օգտագործվել են № 3860 ձեռագրի այն տարընթերցվածները, որոնք հնարավորություն են տալիս մյուս օրինակների աղավաղումները ճշտելու և մաքրելու։ Այսպես, ոտանավորի 21 տողը աղավաղ է և անիմաստ Պոտուրյանի և № 8908 ձեռագրի օրինակների մեջ. «Դէպի եդեմն որ չէ արժան». «դէպի ի բեմն զոր չէ զարման»։ Իսկ ձեռագիր № 3860-ի միջոցով գտնում ենք ավելի հավանական և ճիշտ ձևը. «Թէպէտ երբեմն ոչ է զարման» և այլն։

2

Տպագրվել է «Նաւասարդ»-ում, էջ 74—75 և ապա՝ «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները», էջ 11։ Այնուհետև տպագրվել է «Բազմավէպ»-ում Քյուրտյանի կողմից (տես «Բազմավէպ», 1929, էջ 285—286) ԺԸ դարի նրա սեփական տաղարանից։

Մեր Մատենադարանում պահպանվել է երկու օրինակ միևնույն գրչագրի մեջ (Տե՛ս ձեռագիր № 3860, էջ 190բ—191 և 197ա. բ)։ Ինչպես երևում է, գրիչը սխալմամբ երկրորդ անգամ է արտագրել և հետո՝ հիշելով, կիսատ է թողել։ Չնայած դրան՝ երկու օրինակները տարընթերցվածներ են տալիս։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի են առել բոլոր օրինակները։

3

Առաջին անգամ տպագրվել է 1897 թվականին «Արձագանք»-ում, Կրպեի «Քիշնեվից Ալեքսանդրապոլ» հոդվածի մեջ իբրև մեջբերում։ Հոդվածի հեղինակն ասում է, թե տաղը վերցրել է իր ձեռքի տակ եղած 1673 թվականի «Քէֆեցի Մարտիրոս վարդապետի» տաղարանից։ (Տես «Արձագանք», 1897, № 67)։

Փորձ արեցինք գտնելու այդ ձեռագրի հետքերը, բայց շոշափելի արդյունքի չկարողացանք հասնել։ Մեզ համար միայն պարզվեց, որ Կրպեն Կարապետ Օհանջանյանն է, բնիկ լենինականցի, վերաբնակվել է Քիշինևում, ունեցել է պատկառելի թվով ձեռագրեր, որոնք նկարագրված են Ի. Ի. Քուշուկ-Իոաննեսովի կողմից (տե՛ս „Древности Восточные. Труды Восточной Комиссии и Московского Археологического Общества. Հտ Բ, Մոսկվա, 1903, էջ 50—56)։ Բայց այդ ձեռագրերի մեջ Մարտիրոսի տաղարանը չի հիշվում։ Այնուհետև տպագրվել է «Նաւասարդ»-ում, 1923, էջ 75—76. «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները» ժողովածուի մեջ, էջ 23—27, և «Բազմավէպ»-ում, 1929, էջ 284—285։

Մեր Մատենադարանում պահպանվել է ձեռագիր երկու օրինակ. № 3860, էջ 196ա—բ, № 8908, էջ 54բ—55ա։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի ենք առել բոլոր օրինակները։

4

Տպագրվել է «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները» ժողովածուի մեջ, էջ 28—36 և «Բազմավէպ»-ում, 1930, էջ 264։ Մեր Մատենադարանում կա մի օրինակ՝ ձեռագիր № 3860, էջ 190ա-բ։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի ենք առել բոլոր օրինակները։

Ոտանավորի վերջին տունն այսպես է.

Մի մեղադրէք Մարտիրոսին,
Թէ կարճառօտ ասիր զդա.
Զորն գրեցի, զորն մոռցայ
Ու զմնացեալն տեսցուք ապա։

Հիրավի նա իր խոստումը կատարում է գրելով մի ուրիշ ոտանավոր ևս՝ «Ջիլայեցի երիցուն հաւի գովասանքն է» վերնագրով, որտեղ ծաղրում է նույն տեր Սիմեոնին։

5

Տպագրվել է «Նաւասարդ»-ում 1923, էջ 75, «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները» ժողովածուի մեջ, էջ 18—23 և «Բազմավէպ»-ում, 1930, էջ 265։

Մեր Մատենադարանում կա մի օրինակ. ձեռագիր № 3860, էջ 189ա-բ։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի ենք առել բոլոր օրինակները։

Բնագրի մեջ նշված է դեպքի ժամանակը.

Քսան և մէկն էր յապրիլի,
Պատկեր աւուրն երկուշաբթի,
Սկսեալ ժամուն մետասանի
Վառեալ զհուրն բաս օրինի։

Նշանակում է Մարտիրոս Ղրիմեցին Վանա է եղել 1673 թվականի ապրիլի 21-ին, որովհետև այդ թվականի ապրիլի 21-ն է երկուշաբթի ընկնում։

6

Տպագրվել է «Նաւասարդ»-ում, 1923, էջ 100, «Մարտիրոս Ղրիմեցին և իր քերթուածները» ժողովածուի մեջ, էջ 37—40 և «Բազմավէպ»-ում, 1930 թ. էջ 114—115։

Մեր Մատենադարանում պահպանվել է ձեռագիր երկու օրինակ. № 3860, էջ 180ա-բ և № 8908, էջ 53ա—բ։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի ենք առել բոլոր օրինակները։

Ոտանավորի մեջ Մարտիրոս Ղրիմեցին նշում է դեպքի ժամանակը.

Հազար հարիւր քսան ւ երկու
Ազգիս հայոց թուականին,
Մեծի աւուր Հրագալուցին,
Սուրբ Յարութեան յերեկոյին։

1122+551 անում է 1673 թվականը։ Իսկ 1673 թվականի Հարություն (զատիկի) երեկոն ընկնում է մարտի 29-ը։ Ուրեմն դեպքը կատարվել է 1673 թվականի մարտի 29-ի երեկոյան։

Ոտանավորի մեջ հիշված վարդապետն անշուշտ ինքը՝ Մարտիրոս Ղրիմեցին է։

7

Մեր Մատենադարանում այս տաղից պահպանվել է ձեռագիր մի օրինակ. № 3860, էջ 182 բ։

Տպագրվում է առաջին անգամ։

8

Տպագրվել է «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները» ժողովածուի մեջ, 48—50։

Մեր Մատենադարանում կա այդ տաղից ձեռագիր մի օրինակ. № 3860, էջ 182ա—բ։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի ենք առել այդ երկու օրինակները։

9[1]

Տպագրվել է «Նաւասարդ»-ում, 1923, էջ 100—101, ապա նույնը «Մարտիրոս Ղրիմեցի և իր բերթուածները» ժողովածուի մեջ, էջ 37—40։

Մեր Մատենադարանում կա մի օրինակ՝ ձեռագիր № 3860, էջ 191ա—բ։

Համեմատական բնագիրը կազմելիս նկատի ենք առել այդ երկու օրինակները։

Ձեռագրում գրիչը տաղին կցել է այսպիսի հավելագրություն.

Զառն ինչ բանս ցայնս գրէր
Եւ զբարեկաման համօղէր։

10

Այս անեծքից մեր Մատենադարանում պահպանված են երկու օրինակներ։ ձեռագիր № 3860, էջ 188ա—բ և № 8908, էջ 56բ—57ա։ № 3860-ի օրինակը լրիվ չէ. պակասում են Զ, Է, Ղ, Ն, Շ, Ո, Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ւ, Փ, Ք, Օ, սկզբնատառերով տները։ Իսկ № 8908 ձեռագրի օրինակը լրիվ է։

Համեմատական բնագիրը կազմելիս հիմք ենք ընդունել № 8908 ձեռագրի օրինակը։ № 3860-ի տարբերակները բերվել են տողատակ, իսկ տարընթերցվածները նկատի են առնվել մյուս համեմատական բնագրերը կազմելու սկզբունքով։

Տպագրվում է առաջին անգամ։

11

Ղրիմեցու նախորդ անեծքի համառոտումն է։ Պահպանված է մեր Մատենադարանի № 8908 ձեռագրում, էջ 56։

Տպագրվում է առաջին անգամ։

12

Տաղը վերցված է մեր Մատենադարանի № 7726 ձեռագրից, էջ 77բ—78ա։

Տպագրվում է առաջին անգամ։

13

Տպագրել է Կ. Կոստանյանն իր «Նոր ժողովածու»-ի Ա պրակում, Թիֆլիս, 1892, էջ 38—41, սխալական տաղարանից, որը մեր Մատենադարանի ձեռագիր № 7717-ն է, էջ 238ա—240ա։ Մենք ևս տաղը վերցրել ենք միևնույն ձեռագրից։

[1] 1-ից մինչև 9 երգիծական տաղերը հրատարակված են «Վէմ» ամսագրում, Փարիզ, 1934, Է, էջ 47—54, Ը, էջ 60—66, Փարիզի Նուպարյան Մատենադարանի մի ձեռագրից, որի գրիչն է Հովհաննես քահանա Մկրյանը։

Այս հրատարակության մասին ուշ իմանալու պատճառով հնարավորություն չունեցանք օրինակը օգտագործել, բայց համեմատությունից պարզվեց, որ տաղերի կարևոր տարբերակներ չի տալիս։

Ոտանավորը վերջանում է հետևյալ քառատողով.

Զհամարն որքանի թուոյս
Քանակաւ ազգիս հայկազնեայ
Ահա բացայայտ գրեմ՝
Մի՛ ասեր դու՛ եթէ Չէ ՆԱ։

Չէ ՆԱ-ն ծածկագիր է [700+7+400+1+551=1659], ուրեմն տաղը գրված է 1659 թվականին։

14

Վերցրել ենք մեր Մատենադարանի ձեռագիր № 3860-ից, էջ 192ա-բ։

Տպագրվում է առաջին անգամ։

15

Գրված է ձեռագիր № 3860-ի էջ 192ա-ում, «Տաղ ուրախութեան»-ից անմիջապես հետո։ Պարզ է, որ նախորդին վերաբերող հարակից տաղ է և հանձնարարականի բնույթ ունի։ Բայց նախորդ տաղից անջատված է երեք գծիկով, ինչպես սովորաբար այդ ձեռագրում անջատվում են տաղերը միմյանցից։ Այդ պատճառով տաղը դնում ենք առանձին։

Տպագրվում է առաջին անգամ։

16

Տաղը վերցրել ենք ձեռագիր № 3860-ից, էջ 192 բ։ Անվերնագիր է։ Դրված է «Գինին առնէ զքեզ ուրախ» տաղից հետո, նոր էջից։

Տպագրվում է առաջին անգամ։

17

Բաժակի այս քառյակները վերցված են ձեռագիր № 1495-ից, էջ 179բ։ Այստեղ կրկնվել է «Տաղ ուրախութեան» ոտանավորի վերջին տունը.

Ես վայելուչ սիրոյ եմ տաշտ.
Ձեռնէ ի ձեռն շրջիմ ի կաշտ.
Մինչև ի շորսն պահեմ ի հաշտ
Ցեառ առնեմ, խելաց երաշտ
Եթէ իցես աստուածապաշտ,
Շատ մի կենար դու ինձ հետ հաշտ։

Քառյակների մի մասը օրինակելի ձևեր են, գրված են այնպես, որ յուրաքանչյուր ոք կարող է խնջույքի ժամանակ իր անունով հանդես գալ, Օրինակ.

Կարմիր գինով դու լնանիս,
Սիրով շրթամբ միշտ համբուրիս,

Պառոյտ տայով գաս ի ձեռիս
՝ Եւ այս անուն Քրիստոնէիս:

«Եւ այս անուն» բառերի տեղը ամեն մեկը կարող է իր անունը դնել: Այդպես էր նաև անեծքը:

Տպագրվում է առաջին անգամ:

18

Բնագիրը գտնվում է Օքսֆորդի Բոդլեյան գրադարանը, Ms. Arm. E25. fol 168a—176b: Բնագրի միկրոֆիլմը Ակադեմիայի գրադարանի միջոցով բարեհաճորեն մեզ ուղարկեց հայագետ Հ. Քյուրտյանը, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում:

Հրատարակվում է առաջին անգամ:

19

Սա 1658 թվականին գրված մի ձեռագրի՝ «Մեկնութիւն Նարեկայ» հիշատակարանն է: Ձեռագրի գրիչն է Վարդան Ղրիմեցին, իսկ ստացողը՝ Մարտիրոս Ղրիմեցին: Ղրիմեցին այդ ձեռագիրը նվիրել է Երուսաղեմի Ս. Հակոբ վանքին: Իր չափածո հիշատակարանից առաջ արձակ տողերով գրում է. «Եղաւ սա անջինջ յիշատակ ի Սբ. Եմ. ի սբ. Յակոբայ Աթոռն»:

Հետաքրքիր է նաև գրչի հիշատակարանը, որի չափածո մասը բերում ենք ամբողջությամբ.

Սուրգիւ ծրեալ աւարտեցա,
Էսայիու Մեկնիչ է սա,
Նկարելով յոյժ ցանկացա,
Անթիւ գանձին որ ի սմա կա:
Դէտ Մարտիրոս յերկրէն Հոնա,
Բարուն և յոյժ պեւտիկոս,
Ապայ դա տես սուղ ինչ իմա
Վերոյ տողին թւին սորա:

Ներքևից վերև սկզբնատառերը հեգում են «Վարդանէս», իսկ ապայ դա = 1107 բուն հայկական թվականի:

Տե՛ս Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. Դ. Երուսաղեմ, 1956, էջ 134—135.

20

Մեր Մատենադարանում կա մի օրինակ, ձեռագիր № 1495, էջ 198ա:

Իբրև մեջբերում ամբողջությամբ տպագրել է Ա. Աբրահամյանը հայկական հնագրության մասին իր ձեռնարկի մեջ: Տե՛ս Ա. Աբրահամյան «Հայկական պալեոգրաֆիա», Երևան, 1948, էջ 121—122:

III

Ղրիմեցու գրչին պատկանող որոշ նյութեր դուրս են մնացել ներկա հրատարակությունից: Տալիս ենք այդ նյութերի ցանկը:

1 Կարգ և թիւ թագաւորաց ազգիս հայոց

Ազգս հայոց գառ առանձին
Է սուրգիւ յաբեթածին՝
Որդւոյ Նոյի նահապետին
Յորմէ Գոմերն է մեր նախնին:

վերջ՝
Յինէն ընծայ այս քեզ եղբայր,
Մերոց նախնեացս վէպ և ճառ.
Մարտիրոսէս յոգնաթշուառ,
Երջաներեալ թիւս է ծիծառ (= 1672 թ.):

ընդամենը 72 քառատող:

Այս ժամանակագրության վերջին մասից մի փոքր հատված՝ Կիլիկյան շրջանը ֆրանսերեն թարգմանության հետ միասին տպագրել է Դյուլորիեն իր „Recueil des historiens des croisades" գրքում (Փարիզ, 1849, հատ. Ա, էջ 684—687), բայց ամբողջ ժամանակագրությունը անհայտ է մնացել բանասիրությանը: Լեոն, որ հետաքրքրվել է գրանով, գրում է. «Յայտնի չէ, թէ ուր է գտնվում այդ աշխատությունը», իսկ Ղազիկյանը տեղեկացնելով Դյուլորիեի հրատարակության մասին. ավելացնում է. «Մարտիրոսի և նորա ժամանակագրութեան վերայ էլ ուրիշ տեղեկութիւններ չունիմ» (տե՛ս «Հայկական նոր մատենագրութիւն եւ հանրագիտարան հայ կեանքին», Վենետիկ, 1909—1912, էջ 1924):

Այնուհետև 1941 թվականին Երևանի Պետ. Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի մեջ (№ 1, էջ 212—213), նկատի ունենալով № 737 ձեռագիրը չափածո ժամանակագրության մասին մեջբերումներով համառոտ ծանուցում է տվել Ա. Աբրահամյանը:

Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1495, էջ 141բ—142բ և № 737, էջ 197ա—199բ:

Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի ձեռագիր № 465. էջ 19բ—22ա (տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 940):

2 Ողբ Երեմիայ մարգարէին որ է երրայեցերէն Թրէնի. պարգեալ ոտանաւոր չափով ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ

Սկիզբ՝
Զիարդ վատեալ նստաւ միայն
Բազմամբողով սուրբ քաղաքն այն,
Իբրև այրի ի տրտմութեան,
Լցեալ ցաւօք անբուժական:

Վերջ՝
Պառեցան զքեզ Սիոն չարիք քո ահա,
Այլ ոչ ես յաւելցի խախտել զքեզ նա.

Այց արար քո չարեաց դուստր Եդոմայ
Որ զամբարշտութիւնդ բնաւից յայտնեաց նա։

Ընդամենը 574 տող։

Այնուհետև Ղրիմեցին կցել է չափածո հավելված 22 տողից, որը մի տեսակ վերջերգ է և սկզբնատառերը հոդում են «Մարտիրոս վարդապետի է բանս»։

Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1495, էջ 113բ—116ա։

3 Այս են կարգ վարդապետաց հայոց ի Ղրիմցի Մարտիրոս վարդապետէ գրեցեալ.

Սկիզբը՝ Նախ Մխիթարն, որ մականուն Գոշ կոչի։

Վերջը՝ Նորին աշակերտ Եփրեմ Երամիշան, պետն Անդրիանուպօլսոյ։

Գոշից մինչև Մարտիրոս Ղրիմեցին՝ ինքը և իր աշակերտ Եփրեմ Երամիշը, միմյանց հաջորդող վարդապետների ընդարձակ ցանկ է և նույնը՝ համառոտ։

Ունի որոշ պատմական արժեք։ Նյութ է տալիս վարդապետների, որոնք միաժամանակ նշանավոր մատենագիրներ են, կենսագրության համար։

Նման մի ժամանակագրություն ունի նաև Առաքել Դավրիժեցին իր պատմության մեջ։

Ա. Աբրահամյանը այս նյութի մասին մի փոքրիկ հաղորդում է տվել Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի մեջ (1941, № 1, էջ 216)։

Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1495, էջ 172բ—173ա)։

4. (Երուսաղեմի ժողովը):

Սկիզբը՝ Մեծահրաշ ծագմանէ միածին բանին,
Վեշտասաներորդի ի հարիւրորդին
Միով քանի տասանց շարադրեալ թվին
Եւ ի չորեքտասան թիւ յարաբարդին։

Վերջը՝ Սակաւ բանս յարմարեալ գրեցաւ ի քարտի,
Ի Սուրբ յԵրուսաղէմ արժանեալ քաղաքի.
Ձեռամբ Ղրիմեցի սուտ Մարտիրոսի
Սակս մեծի խնդրոյն Վարդան Աբեղի։

Ընդամենը 25 տուն ոտանավոր։ 1652 թվականի ընդհանուր եկեղեցական ժողովի մասին անհրաժեշտ տեղեկություններ է տալիս։ Օրմանյանը օգտվել է այդ ոտանավոր պատմությունից Բաբկեն Կյուլեսերյանի միջոցով։

Բնագիրը՝ Անկյուրիայի ձեռագիր, № 77, էջ 461բ—466ա, տե՛ս Բ. Կյուլեսերյան, Անկյուրիայի Ձեռագրացուցակ, էջ 382։

Կյուլեսերյանը նյութը համարելով կարևոր՝ ձեռագրացուցակում մեջ է բերել ամբողջությամբ։ Տե՛ս նույնը, էջ 388—392, տե՛ս նաև՝ Բ. Կյուլեսերյան, «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» Անթիլիաս-Լիբանան, 1939, էջ 353—355։

5 Ցանկ և ցուցակ յայսմաւուրաց գրոց ի վերայ երկոտասան ամսոց, պարզեալ եւ շարադրեալ ոտանաւոր չափով ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ.

Սկիզբը՝ Այս է հրաման աստուածային
Առ Նախաստեղծ մարդն առաջին.
Գործել ջանիւ ի դրախտն յադին
Եւ վայելել զհրճուանս նորին։

Վերջը՝ Զի որք ցանկան սորին ուսման
Ի միտ առնուն թեթևաշան.
Առ այնս է իմ ևեթ մաղթան
Շնորհել սիրով զմի Հայր մեղային։

Ամբողջ Հայսմավուրքն է չափածոյի վերածված, ամիս առ ամիս։ Չորս հարյուր տուն ոտանավոր։ Գրված է 1672 թվականին։ Ունի ուսուցողական նպատակ։ Բնագիրը պահպանված է Պետ. Մատենադարանի № 1495 ձեռագրում, էջ 116ա-123բ։

6 «Ճշտակարան գրոց» ընդհանուր խորագրի տակ.

ա) Հին կտակարանի պատմությունը

Սկիզբը՝ Փառք, պատիւ էակի էին անսահման
Եւ երկրպագութիւն բնութեան եղական.

Վերջը՝ Ի յԱդամայ նախնոյն մերոյ ի սկզբան
Հինգ հազար եւ հարիւր ինուն եւ ութն ամ։

Գրված է երկտող տներով։ Ընդամենը կազմում է 276 տող։ Ամբողջովին Հին Կտակարանի պատմությունն է չափածո համառոտ։

Տես Անկյուրիայի Կարմիր վանքի ձեռագիր, № 89, էջ 868—872ա և № 110, էջ 275—386։

բ) Նոր Կտակարանի պատմությունը.

Սկիզբը՝ Արդ այսքաննաց բնաւից ոգեալ,
Ի յիբ[ս]կզբանց պատմաբանեալ,
Յաստուածաստեղծ մարդոյն հիմնեալ,
Մինչև ցայս վայր բովանդակեալ։

Բաղկացած է 36 քառատող տներից։ Տների առաջին տողի սկզբնատառերը հոդում են այբուբենը՝ Ա—Ք։ Ամբողջովին Նոր Կտակարանի պատմությունն է չափածո համառոտ։

Տե՛ս նույնը, էջ 872բ—874բ և էջ 386—392

գ) Մի արձակ ճշտակարան Մարտիրոս Ղրիմեցու կողմից 1670 թվականին պատվիրած լիակատար պատկերազարդ Աստվածաշնչի գրչության հանգամանքների մասին.

Սկիզբը՝ Ամենապատճառ և սկզբնական էութիւն
Երանական երրորդութեանն սրբոյ և այլն

Վերջ՝ Արդ՝ ժամանեալ սորին աւարտ,
Թուականս ոչ զոյգ այլ դիպաւ Յարտ.
Հազար հարիւր տասն է գումարտ
Եւ յինն աւել, ամիսըն մարտ։

(=1670 թ.)

Հիշատակարանը հետաքրքիր է։ Բաբկեն Կյուլեսերյանը այն տպագրել է իր Անկյուրիայի Ձեռագրացուցակի մեջ։ Տե՛ս Բ. Կյուլեսերյան, «Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարմիր վանուցն Անկիւրոյ», Անթիլիաս, 1956, էջ 438—443։

Բնագիրը տե՛ս Անկյուրիայի Կարմիր Վանքի ձեռագիր, № 89, էջ 876—881։

գ) Մի չափածո հիշատակարան

Սկիզբ՝ Քրիստոսի փրկչին երկիր պագանեմ,
Զանբաւ գթութիւնդ գոհութեամբ օրհնեմ,
Փառակցի հոգւոյդ ընդ հօր զուգահեմ,
Զօրհնութիւնս և զփառս միշտ վերընծայեմ։

Վերջ՝ Բանք իմ անյարմար սաստէն կայ առցէ,
Թէև լսելեացդ ախորժ ոչ իցէ.
Արամեանքս թիւ յաւել հազարէ
Հարիւր տասն և ինն ի նոյն բարդեալ է։

Ընդամենը 72 տող։

Այս հիշատակարանները անցել են հետաքրքիր գրչագրական ուղի։ Բ. Կյուլեսերյանը նկարագրելով Անկյուրիայի № 89 ձեռագիրը նկատում է, որ նրան կցված հիշատակարանները ոչ մի կապ չունեն ձեռագրի գրչության պարագաների հետ։ Դրանցից մեկն է «Քրիստոսի փրկչին երկիր պագանեմ» սկզբնատողով հիշատակարանը, որի տողերի վերջնատառերը կազմում են «Մարտիրոս վարդապետ», ինչպես նաև՝ մի արձակ հիշատակարան, որը նույնպես Մարտիրոս վարդապետի անունով է գրված (տե՛ս էջ 438—444)։ Կյուլեսերյանը եզրակացնում է, որ «դրանք արդիւնք են Երուսաղէմի պատրիարք Ղրիմցի Մարտիրոս վարդապետին և այս բոլորը կրկնաբերին Աստուածաշունչ մատեանի մը։ Սակայն նրան հետաքրքրում է, թե «ուր մնացած է արդեօք Ղրիմեցւոյն թանկագին Աստուածաշունչը» և «ինչ կերպով ձեռք բերուած և ընդօրինակուած կրնան ըլլալ այդ յիշատակարանք» (էջ 443—444)։

Ղրիմեցին այդ արձակ հիշատակարանի մեջ գրում է, որ իր պատվիրած Աստվածաշունչը ավարտվել է 1670 թվականին, Կ. Պոլսում, գրիչներն են Մելիտոն, Եղիա և Ազարիա, իսկ ծաղկողը՝ «զարմանալի և անհաս արուեստաւորն Մարկոս»։

Մեսրոպ Նշանյանը Երեմիա Չելեբիի «Օրագրութեան» մեջ հրատարակում է Մարտիրոս Ղրիմեցու դիմանկարը նշելով աղբյուրը։ Ըստ որում նկարը առնված է Երուսաղեմի Մատենադարանի № 2651 ձեռագրից, որը Ղրիմեցու սեփական լիա-

կատար Աստվածաշունչն է, գրված 1670 թվականին, Կ. Պոլսում Մելիտոնի, Եղիայի և Ազարիայի ձեռքով, ունի ճոխ նկարազարդություն և նկարողն է Մարկոս Ծաղկարարը (տե՛ս «Օրագրութիւն», էջ ՃԿԱ)։

Ինչպես տեսնում ենք, տվյալները համընկնում են։ Հիշատակարանները պատկանում են Երուսաղեմի № 2651 ձեռագրին (որը Մարտիրոսի սեփական Աստվածաշունչն է)։

Իսկ ինչպե՞ս է այդ ձեռագրի հիշատակարանը ընկել Անկյուրիա և կցվել 1694—1726 թվականներին գրված «Կաթողիկեայց մեկնութեան» վերջում։

Կյուլեսերյանը կարծում է, որ երբ Մարտիրոս Ղրիմեցին գնացել է Անկյուրիա ուխտի և գուցե է գրել Անկյուրիայի Ս. Աստվածածին տաճարի վրա, այդ ժամանակ իր մոտ է ունեցել Աստվածաշունչը և մեկը հետաքրքրվելով հիշատակարանը արտագրել ու կցել է «Կաթողիկեայց մեկնութեան» ձեռագրին։ Դա հավանական չէ, որովհետև Մարտիրոս Ղրիմեցին Անկյուրիա է գնացել 1669 թվականին, իսկ ձեռագիրն ավարտվել է 1670 թվականին։ Բացի դրանից՝ «Կաթողիկեայց մեկնութեան» ձեռագիրը սկսվել է գրվել Ղրիմեցու մահից տասը տարի հետո, 1693 թվականից։

Հավանական է մի այլ ենթադրություն։ 1677 թվականին Մարտիրոս Ղրիմեցու հրամանով Անկյուրիայի եպիսկոպոս է կարգվում Ստեփանոսը (Անկյուրիայի Ձեռագրացուցակ, էջ 395)։ Կարող էր նա իր հետ տանել այդ հիշատակարանները։

Այսպես թե այնպես այդ հիշատակարանները որպես գրական նմուշներ անմիջապես տարածվել են և ընդունել անկախ ստեղծագործությունների բնույթ, հատկապես «Քրիստոսի փրկչին երկիր պագանեմ» հատվածը։

Անկյուրիայի մի ուրիշ՝ № 110 ձեռագրի վերջում կցված է նույն աղբյուրից այդ հիշատակարանների մի այլ ընդօրինակություն, որտեղ գրիչը «Քրիստոսի փրկչին երկիր պագանեմ» հատվածը փորձել է իրեն սեփականել, փոխելով թիվը և անվան հիշատակությունը։ Ղրիմեցու հիշատակարանը վերջանում է այսպես.

Դուք ով հոգեկիրք սպասաւորք բանի,
Եւ հայրք բարունեաց բոլորով սրտի,
Գըթացեալ ի հէգս տայցէք ողորմի
Ինձ ունայնարան սոսկ Մարտիրոսի։

Բանք իմ անյարմար սաստէն կայ առցէ
Թէև լսելեացդ ախորժ ոչ իցէ.
Արամեանքս թիւ յաւել հազարէ
Հարիւր տասն և ինն ի նոյն բարդեալ է։
(=1670 թ.)

№ 110 ձեռագրի գրիչը փոխել է.

Դուք ով հոգեկիրք սպասաւորք բանի
Եւ հայրք բարունեաց բոլորով սրտի,

Դթացեալ ի Հէգս տացէք ողորմի
Ինձ ունայնաբան և սոսկ Մովսէսի։

Բանքս իմ անյարմար սատէ(ն) կա՛ տացէ,
Թէև լսելեացդ ախորժ ոչ իցէ.
Արամեանս թիւ յաւել Հազարէ
Հարիւր վաթսուն և մին ի նոյն բարդեալ է։
(=1712)

Բայց գրագող գրիչը գլխի չի ընկել, որ տողերի վերջնատառերը հոդում՝ են **Մարտիրոս վարդապետի** է, և չի խաթարել այն։

Իմիջիայլոց Բաբկեն Կյուլեսերյանը, չնկատելով, որ դա Մարտիրոս Ղրիմեցունն է և մի անգամ մեջ է բերել նրա անունով, բառացի բերում է երկրորդ անգամ միևնույն ձեռագրացուցակում (տե՛ս Անկյուրիայի ցուցակ, էջ 564—566)։

«Հիշատակարան գրոց»-ի այս հատվածը իբրև անկախ ստեղծագործություն անջատ մյուս հիշատակարաններից Պետ. Մատենադարանի № 1495 ձեռագրում արտագրել է նաև Մարտիրոսի աշակերտ Եփրեմ Երաժիշտը՝ «Յաղագս Աստուածաշնչի յիշատակարան է սա, ոգեալ և յարմարեալ ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ» խորագրով։

Տե՛ս ձեռագիր № 1495, էջ 125 ա, բ։

7 (Կոնդակ օրհնութեան Մարտիրոս պատրիարքի)

Սկիզբ՝ «Ի սուրբ եւ փառաւորեալ... սրբոյ քաղաքէն Երուսաղէմայ... օրհնութիւն աստուածային ի վերայ տիրապահ եւ քրիստոսասիրեալ եւ թագաւորանիստ աշխարհին լեհաց» և այլն։

Վերջ՝ Գրեցաւ ՌՃԼԱ (1682) հայոց թուին
Եւ ի յամսեանն օգոստոսի հինգ, յաւուր շաբաթի, ի մայրաքաղաքն Կոստանդինուպօլիս, ի դուռն սուրբ Աստուածածին եկեղեցւոյն»։

Կոնդակը պատկերազարդ է։ Խոսվում է այն մասին, որ լեհահայերի մոտ 15 տարի է Երուսաղեմից պատվիրակ չի գնացել, իսկ հիմա պատրիարքը ուղարկում է Սարգիս վարդապետին, որպեսզի հանուն Երուսաղեմի սուրբ հավաքեն։

Կոնդակի նկարագրությունը տես Տաշյան, Ցուցակ, էջ 1034, Կոնդակը պահվում է Վիեննայի Մատենադարանում, 568 համարի տակ։

8 Օրհնութիւն վասն ժողովրդոց ի ժամ քարոզութեան վարդապետաց: Ասացեալ եւ յարմարեալ ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ:

Այս ընդհանուր վերնագրի տակ մտնում են երեք գործեր.

ա) Սկիզբ՝ Անեղն աստուած և արարիչն ամենայն արարածոց, հայրն երկնաւոր... և այլն։

Վերջ՝ Քահանայապետն ճշմարիտ, որ եմուտ ի ներքին կողմն վարագուրին օրհնեսցէ զքահանայապետս և զքահանայսդ ձեր հանդերձ սարկաւագօք և դպրօք և ամենայն ժողովրդօք հարազատագոյն զաւակօք նորոյս Սիոնի։

Յուրաքանչյուր պարբերություն սկսվում է ըստ այբբենական կարգի, ուստի 36 պարբերություն է։

բ) Սկիզբ՝ Ազատարարն ազգի մարդկան ազատեսցէ զձեզ յամենայն փորձանաց։

Վերջ՝ Քաւիչն մեղաւորաց Քրիստոս, քաւեսցէ զամենայն յանցանս ձեր զկամայն և զակամայն։ Ամէն։

Նույնպես 36 պարբերություն, չափածո։

գ) Սկիզբ՝ Քաղցրն աստուած ի ձեզ սիրով քաղցրասցի,
Փրկիչն ի փրկել զձեզ փութասցի.
Իւրաքանչիւրոցդ պսակ հիւսեսցի,
Ցնծալ ձեզ ի կեանս յետոյն ապառնի։

Վերջ՝ Մեղօք Աղտեղեալ Բալաղ Տրամալի
Ի կարգ Բեռոյրաց Ըզգոս Սուղ բանի.
Վեհիցդ Աղերսեմ Բարունեաց Դասի,
Առանց Գարաւից Երգս Տրամացի։

Գրված է միևնույն կարգով, այբուբենի թվին հավասար, բայց ոչ թե պարբերություններ են, այլ տողեր, և ամբողջ օրհնությունը բաժանված է 10 քառատող տների։ Այբուբենն հոդող սկզբնատառերի հաջորդականությունը, ոչ թե նախորդ երկու օրհնությունների նման Ա-ից Ք է, այլ Ք-ից Ա, իսկ վերջին քառատողը դուրս է մնում տողերի կարգից, որի բառերի սկզբնատառերը հոդում են **Մարտիրոս վարդապետ**:

Մարտիրոս Ղրիմեցու երեք մասից բաղկացած այս օրհնությունը վարդապետների համար ուսուցողական նպատակներով գրված օրհնության օրինակելի ձև է։ Այստեղ որոշ չափով արտահայտված են Ղրիմեցու տրամադրություններն ու իղձերը, այսպես. վերջին օրհնության մեջ Ղրիմեցին գրում է.

Ղամբարամբ լուսոյ շաւիղ ձեզ բացցի
Ձեզ և ձերային ազգաց և զարմի։
. . . .
. . . .
Ընդ Լուսաւորչին ընտրելոց զարմի
Երամս ձեր խմբեալք ի մի գումարի։

Այստեղ արտահայտված է ազգահավաքման, ամբողջացման գաղափարը, որը ծայր էր առել արդեն դեռևս Հովհաննես Սարկավագի օրերից։

Օրհնության ամբողջական բնագիրը՝ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1495, էջ 123բ—124բ։

Վերջին՝ «Քաղցրն աստուած ի ձեզ սիրով քաղցրացի» օրհնության բնագիրն առանձին՝ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 523, էջ 134ա, բ, № 2095, էջ 321, № 607, էջ 149բ։

9 Վասն Սամարեայ

Մեզ հայտնի է Տաշյանի ցուցակից։ Դնում է Մարտիրոս Ղրիմեցու տաղերից անմիջապես հետո և համարում նրանը։

Տե՛ս Տաշյան, Ցուցակ, էջ 894։

10. «Օրհնեալ է բան հայրական» սկիզբով մի ռոտանավոր

Պահպանված է Անկյուրիայի Կարմիր վանքի № 77 ձեռագրում Մարտիրոսի Երուսաղեմի ժողովի չափածո պատմությունից անմիջապես հետո, էջ 463բ—465ա։

Տե՛ս Բ. Կյուլեսերյան, Անկյուրիայի ցուցակ, էջ 383։

11. Գանձս ասացեալ ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ ի մահ տեառն Աստուածատրոյ Սուրբ Երուսաղէմայ հայրապետի

Սկիզբ՝ Մեծական լալեացս ձայնի
Ողբակցեցեք մանկունք Սիոնի.
Բարձեալ զձայն ողորմ ու լալի՝
Յորինեցէք զողբս աղէտալի։

Վերջ՝ Նստի զատել զազգս մարդկային
Ըստ օրանն և այծեացն առակին.
Բարեխօսեա մայր անճառ բանին
Փրկել զմեզ ի հրոյ գեհեննին։
Ողորմեաց մեզ տէր աստուած մեր
ասասցուք ամենեքեան։

Ընդամենը 275 տող ռոտանավոր։ Մարտիրոս Ղրիմեցին ողբում է իր ուսուցչի՝ Աստվածատուր Տարոնացու մահը։ Աստվածատուր Տարոնեցու մասին հաղորդում է կենսագրական որոշ փաստեր։ Գանձը գրված է բավական ջերմ, անմիջական շնչով։

Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1495, էջ 126ա—127բ և № 6517, էջ 30ա-բ։

12 Տաղ

Սկիզբ՝ Արդ սիրեցեալք իմ միւս անգամ
Առ ձեզ դարձցի բանիս պատգամ.
Այսօր եկեալ գուժ մահու տամ,
Ահա եհաս ողբալոյ ժամ։

Վերջ՝ Սրբուհի կոյս, զքեզ անեղին մայր դաւանիմք
Մարտափելի քո պատկերիդ երկիրպագեմք.

Սոսկալի այն յահեղ աւուրն, յորժէ սարսիմք,
Սրբոցն պար դասաւորել ի քեն հայցեմք։

Ընդամենը 286 տող։

Սա նույնպես նվիրված է Երուսաղեմի պատրիարք Աստվածատուր Տարոնեցուն, ողբում է նրա մահը։

Յուրաքանչյուր տան տողերի սկզբնատառերը հոգում են այբուբենը Ա-ից Ք. իսկ վերջնատառերը՝ Մարտիրոս վարդապետի է բանս, աշակերտի սորոյս հետո հակառակ դասավորությամբ։ Սկզբնատառերը՝ Մարտիրոս վարդապետի է բանս, աշակերտի սորոյս վերջնատառերը՝ այբուբենը։

Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 1495, էջ 127բ—128բ։ Գանձից անմիջապես հետո։

13 Գովեստ Սուրբ Աստուածածնայ վանացն յԱնկուրիոյ: Ոգեալ ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ

Սկիզբ՝ Մտի ընդ յարկաւ անդւոյդ սրբութեան
Յերկրպագութիւն օրհնեալ քո անմայն.
Եղէ արժանի քոյին տեսութեան,
Սուրբ Աստուածածին, անեչալի խորան։

Վերջ՝ Է հազար հարիւր մեծս թուական,
Այլև տասն և ութ յարաբարդական,
Յոր եղէ օրհնեալ տեսոյդ քո արժան
Մարտիրոս պիտակ պետս Սաղիմայն։

Ընդամենը 72 տող։

Ոգևորությամբ նկարագրում է Անկյուրիայի Ս. Աստվածածնի վանքը և գովերգում այն։ Ռոտանավորի անագլուխ տառերը հոգում են Մարտիրոս վարդապետի է:

Բնագիրը՝ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1495, էջ 125բ—126, № 7717 էջ 240—242բ։

Տպագրվել է Պոտուրյանի «Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթուածները» ժողովածուի մեջ Կ. Պոլսի Ազգային Մատենադարանի № 186 ձեռագիր օրինակից։ Պոտուրյանը տաղը ձեռք է բերել Բ. Կյուլեսերյանի միջոցով։

14 Աղերսանք առ սուրբ Աստուածածինն, ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ

Սկիզբ՝ Մայր անեղին սուրբ Տալիթայ Աստուածածին կոյս,
ՅԱդամային զարմէ ընծիւղ, զարմանալի բոյս.
Մոլորելոց ես ապաւէն, մեղաւորաց՝ յոյս,
Աղաչեմ բարեխօսել առ տէրն իմ Յիսուս։

Վերջ՝ Ի թուականի մերումս հազար հարիւր և երեսնին
Աղերսալի երգս գրեցի գիմօք լալագին։
Ի քեզ անկեալ երկրպագեմ երեսս ի գետին,
Աղաչեմ խնկուհի կոյս, սուրբ Աստուածածին։

Ընդամենը 68 տող։ Գրված է զգացմունքով։

Բնագիրը՝ Պետ. Մատենադարանի ձեռագիր № 1495, էջ 126, և № 7717, էջ 242բ—245բ։

15 Տաղ և գովասանութիւն վասն այգեաց, ի Ղրիմեցի Մարտիրոս Վարդապետէ.

Սկիզբ՝ Այգի զքեզ գովեմ կերպիւ զանազան,
...Մարգ և բուրաստան։

Վերջ՝ Իւնք դառնաշունչ օդից
քեզ որ մերձենան,
Իւսին ծաղկունքդ ի շար
պտղկանման։
Փայփայելի բանքն ի քեզ
լցցին Նայեայն,
Փոխան փշոց բուսցին
մուրտ և պալասան։
Քեզ փառք զարդարողիդ
զաշխարհս ամենայն.
Քրիստոսի աստուծոյ
Փրկչիդ յաւիտեան։

Միայն այսքանն է պահպանվել Մատենադարանի № 7717 ձեռագրում թուղթ ընկած լինելու պատճառով։ Վերջին տողերից հասկացվում է, որ տաղը գրվել է այբբենական կարգով՝ Ա-ից Ք։ Յուրաքանչյուր տառով երկու տող, որ անում է 72 տող հայոց այբուբենի կրկնակի թվով։

Վերնագիրը և տաղի սկզբնատողը պահպանվել է ձեռագրի ցանկում (էջ 284բ), իսկ բնագրի հատվածը՝ էջ 238ա։

16 Չորս հայատառ թուրքերեն տաղեր.

ա) Ի վերայ Վառնայու բաղանեացն

Սկիզբ՝ Վառնա համամընա կիրտիք, ղազիլէր,
Պոյլէիմիշ պաշըմըզա եաղուլէր,
Պիր երիմից թուլմաղ, կէօվտէմից արզլար,
Տօսալար հալիմիզի սօրմայի օլաիր։

Վերջ՝ Ուղէթմէ սօզումու, պէ. հէյ Քէֆէլի,
Օլանաղըն պիրմէզմիտին յէվվէլի,
Սէպէպ օլան չիքսուն պունուն մայալի,
Տօնիւփ Ըստամպօլա կիթմէլի օլաուր։

Ընդամենը 13 քառատող։ Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 3860, էջ 182բ—183ա։

բ) Ղրմցի Մարտիրոս վարդապետէ ի վերայ Պապատաղի ասացեալ

Սկիզբ՝ Տուվալէր, սէլամլէր տօստայ, եարանէ
Հալմըզ արզ օլսուն պիզի սօրանէ.
Պապատաղը տիտիրլերի վերանէ,
Այնիհի ճէհէննէմ չէօլինէ պէնկզեր։

Վերջ՝ Շիքէյեթիմ չօք սուր, ախտի Քէֆէլի,
Քիմէ արզ էտէիմ պէն պու էհվալի,
Տաղտաղի չօպանլար պիզտեն սէֆալի,
Սէյինմէմիզ չիֆթճի հալինէ պէնկզեր։

Ընդամենը 16 քառատող։ Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր, № 3860, էջ 198ա—199ա։

գ) Ի վերայ Պապատաղու

Սկիզբ՝ Պէ աղալէր, սվալեր օլուրսա՝
Հոշճա սէյրին էթտիք Պապատաղըն,
Պէշ պուչուղայ վիրանէի պէքլէտիք,
Շէնլիկին կեօրմէտիք Պապատաղըն։

Վերջ՝ Ղասապա էթ սօրսան աէրքի՝ սիրում եօք,
Էքմէքճիսի աղլար՝ պէնիմ քեարիմ եօք,
Պօզաճիսի աղլար՝ տաղի տաամ եօք,
Քալըմը պէրէքեթի Պապատաղըն։

Ընդամենը 9 քառատող։ Բնագիրը՝ Պետ. Մատենադարան, ձեռագիր № 3860, էջ 183ա։

դ) Զիլայեցի Երիցուն հաւի գովասանքն է

Սկիզբ՝ Պէն վիլայէթտէն չըքալի,
Վառնասա սաքին օլալի,
Արզում ղալտի՝ տէր զիլէլի,
Նէնէմէտիմ թաւուխ սէնի։

Վերջ՝ Քէֆէլի, ուղաթմա պէյթի,
Պանասա պիր քառը սաթտի,
Էմէկիմ եապանա կիթտի,
Նէյլէմէտիմ թաւուխ սէնի։

Ընդամենը 10 քառատող։

Այս գրված է հայերեն «Զիլայեցի երիցուն հաւի գովասանքն է» ոտանավորից անմիջապես հետո և վերնագրված՝ «Կրկին ի նոյն տաճկերէն»։ Նույնն է թեմայով, բայց բնույթով նույնը չէ։ Այստեղ տեր Սիմեոնը ինքն է առաջին դեմքով պատմում իր փորձությունները, ամեն անգամ ասելով՝ «հավ, քեզ չկարողացա ուտել»։

Բնագիրը՝ տե՛ս Պետ. Մատենադարան, ձեռ. № 3860, էջ 189բ—190ա։

17 Երուսաղեմի № 186 ձեռագրում, որը ԺԷ—ԺԸ դարերի առաջին գործիչների նամականի է, զետեղված են Մարտիրոս Ղրիմեցու մի շարք նամակներ.

ա) Մարտիրոս վարդապետին պատրիարք իրեն (եղած ժամանակ) գրեալ վենին

Սկիզբ՝ Արգոյագահի և վերնագահ բաքունւոյ մեծի... էջ 23 ա, (Տե՛ս Սիոն, 1932, էջ 252)։

բ) Մարտիրոս վարդապետի գիրն է

Սկիզբ՝ Փանտագոյդ մեծի սակս ընթհանուր մերոյ ազգան... էջ 32ա, (Տե՛ս Սիոն, 1930, էջ 384)։

գ) Մարտիրոս վարդապետի գիրն է

Սկիզբ՝ Գերապատիւ և տիեզերաբաղձ, բազմերջանիկ և ամենագով... էջ 32բ։ (Տե՛ս Սիոն, 1932, էջ 252)։

դ) Մարտիրոս վարդապետի գիրն է

Սկիզբ՝ Տրամազգեաց և յոբնաթախիծ սոգտիւ միջակաոր... էջ 33բ։ (Տես Սիոն, 1932, էջ 121)։

ե) Մարտիրոս վարդապետի գիրն է

Սկիզբ՝ բանիւ գերապանծ և արդեամբք աներաղդատ... էջ 34ա։ (Տե՛ս Սիոն, 1930, էջ 385)։

զ) Մարտիրոս վարդապետի գիրն է

Սկիզբը՝ Յանէից էիցս էացուցչէն մաքրազարդեալ և յօրինեալ... էջ 35ա։ (Տե՛ս Սիոն, 1930, էջ 350)։

է) Մարտիրոս վարդապետին գիրն է

Սկիզբ՝ Փարմագունոյդ ի պարս պսակեալս... էջ 36ա։ (Տե՛ս Սիոն, 1931, էջ 146)։

ը) Մարտիրոսի գիրն է, յղեալ ի յԱմիթ առ Կարկուան վաղանալ վասն մատենիոյ զվենն դէսին

Սկիզբ՝ Յիսուս Քրիստոսի ծառայ Մարտիրոս վարդապետ, որ և շնորհօք նորին առաջնորդ և վերատեսուչ մայրաքաղաքին Երուսաղէմայ... էջ 37բ։

թ) Մարտիրոս վարդապետին գրեալ ի Հալապոյ զգիրս Իմիրզային վասն նաշտուբեան խրատոյն:

Սկիզբ՝ դարձեալ զայս գիտասցիք խօճա Իմիրզա և պարոն Յոսրով.... էջ 38ա։ (տե՛ս Սիոն, 1941, էջ 85)։

ժ) Մարտիրոս վարդապետէն ի Սախրգ

Սկիզբ՝ Յաւէտախաղաց շնորհիւ ասլցեալ ամենեբանեան երջանկութեամբ պարգավաճեալ... էջ 37բ։

ժա) Գիր սիրոյ և ձեռագիր ուխտի այս Մարտիրոս վարդապետին է

Սկիզբ՝ բարեաց ամենայնի պատճառ աստուած տեառնի... էջ 40բ։ (Տե՛ս Սիոն, 1941, էջ 127)։

ժբ) Յրուսամպօլու եկած Մարտիրոս վարդապետէ գիր առ Եղիազար կաթողիկոս

Սկիզբ՝ Մեծի և տիեզերաբաղձ հեղինակի սրբոյ տեառն Եղիազարու...

ժգ) էջ 41ա. Յիսուսի Քրիստոսի ծառայ Մարտիրոս վարդապետ և առաջնորդութեամբ նորին աթոռակալս սրբոյ քաղաքին Երուսաղէմայ, էջ 50ա։

ժդ) Մարտիրոս վարդապետի Վառնայու դրկած թուղթն է առ հոգեւոր տէրն.

Սկիզբ՝ Երջանկապատիւ սրբոյ հօրդ իմոյ երկրպագութեամբ հանդերձ լիցի յայտարարութիւն... էջ 55բ։

Այս նամակներն իրենց բովանդակությամբ հետաքրքիր են Մարտիրոս Ղրիմեցու կենսագրության շատ կողմերը, ինչպես նաև՝ ժամանակի հասարակական կյանքի մի քանի հարցեր պարզելու համար։ Հետագայում սրանք և ուրիշ գործիչների կողմից գրված նամակները հրապարակվել են առանձին գրքով «Դիւան սուրբ Յակոբայ» խորագրի տակ։ Որովհետև գիրքը ձեռքի տակ չենք ունեցել, ուստի չենք կարող ասել արդյոք հրապարակված են նաև այն օրինակները, որոնք չեն տպագրվել «Սիոն» ամսագրի մեջ։

Նամակների այս ձեռագիր ժողովածուի նկարագրությունը տես Երուսաղեմի Ձեռագրացուցակ, հատ. Բ. էջ 149—170։

Այս և մեր հրատարակության մեջ ընդգրկված բոլոր գործերը անկասկածելիորեն պատկանում են Մարտիրոս Ղրիմեցուն։ Դրանցից բացի կան հրատարակությունից դուրս մնացած մի շարք նյութեր, որոնց հեղինակի ինքնության հարցն արծարծվել է բանասիրության կողմից։

Պատուրյանը բերում է ութ ոտանավորների մի ցանկ, որոնք նա տեսել է Պարտիզակի մի տաղարանում Մարտիրոսի (անտիպքոս) անվամբ։ Դրանք են.

1. Այրն սաէ առաքեցաք
2. Այրն ասաց այսօր խմենք
3. Այրն սաէ ապրի Թագաւոր
4. Այսօր զքեզ տեսայ և ուրախացայ
5. Աստուած զայս տունս չէն պահէ
6. Աստուած օգնէ Թագաւորին
7. Օրհնեալ է հայրն անծին որդին
8. Օրհնեցէք զհայրն աստուած

«Չեմ կարող ըսել,— գրում է Պատուրյանը,— թէ այս Մարտիրոսը նոյնն է Ղրիմեցու հետ»։

Նույնը չէ։ Դա հաստատ կարելի է ասել հենվելով գեռևս 1903 թվականին Կոստանյանի կողմից արված բանասիրական դիտողությունների վրա, որ նկատի չի առել Պատուրյանը։

Այդ տաղերը պատկանում են Մարտիրոս Խարասարցուն և Մարտիրոս Խարբերդցուն, որոնք ավելի վաղ են ստեղծագործել։ Նրանց տաղերը կան դեռևս 1617 թվականի ձեռագրում, իսկ Ղրիմեցու գրական գործունեությունը ներփակվում է 1652—1683 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանի մեջ[1]։

Բայց մի հարց բանասիրության կողմից մնացել է աննկատ։ Մինչև այժմ Ղրիմեցուն է վերագրվում «Տաղ ի վերայ Կաֆա քաղաքին, առացեալ է վասն ուրախութեան» ոտանավորը։ Ալիշանը հրատարակել է այդ տաղը և ծանոթագրել. «Հեղինակն է Մարտիրոս, ժէ դարու ընիկ կաֆացի»[2]։ Մատենադարանի աշխա-

[1] Տե՛ս Կ. Կոստանեանց, Նոր ժողովածու, Դ պրակ, Վաղարշապատ, 1903, էջ 67—68։

[2] Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 582։

տակիցների կողմից կազմված անտիպ ձեռագրացուցակում ևս այդ տաղը գրված է Մարտիրոս Ղրիմեցու երգաշարի մեջ։

Մեր Մատենադարանում «Տաղ ի վերայ Կաֆա քաղաքին» ոտանավորի վեց գրչագիր արտագրություններ կան[1], որոնցից երեքը գրված են 1611, 1617, 1620 թվականներին։ Պարզ է, որ այդ տաղը չէր կարող Ղրիմեցունը լինել[2]։

Փորձենք պարզել, թե ում է այդ հետաքրքիր ոտանվորը։

Կաֆայի գովքի հինգ տարբերակ (մեկը տպագիր) վերջին տան մեջ հիշատակում են Մարտիրոսի անունը. «Քեզ Մարտիրոս ասացված գթաւ», իսկ երկու տարբերակ՝ «Քեզ Մկրտիչ ասացված գթաւ». իրական հեղինակը Մարտիրոսն է. որովհետև նրա անունը հիշող տարբերակները գրեթե միասեռ են և կուռ, պահպանել են Ա-Ք այբբենական տողակապը առանց շեղման, և ձեռագրերը ավելի վաղ շրջանի են, իսկ մյուս երկուսը անշնորհք արտագրություններ են, ավելի ուշ շրջանի[3] և խաթարված բնագրերով։ Երևում է, որ ոմն Մկրտիչ ջնջել է Մարտիրոս անունը և իրենը դրել գրագողի բարեխղճությամբ։

«Տաղ ի վերայ Կաֆայ քաղաքին» իր ոճով, վերջնատողերի միատեսակ կրկնությամբ, տողակապերի այբբենական միևնույն սկզբունքով և արտահայտչական ձևերի ու միջոցների նմանությամբ համընկնում է Մարտիրոս Խարասարցու «Այսօր զքեզ տեսայ և ուրախացայ» տաղի հետ և առհասարակ նրա ստեղծագործությանը հարազատ է հնչում։ Եթե ուրիշ վիճարկող կռվաններ չկան, ապա մեզ թվում է, որ այդ տաղը պատկանում է Մարտիրոս Խարասարցուն։

---

[1] Ձեռագիր № 7707, էջ 18—19 բ, № 3081, էջ 108 բ—109 բ, № 7709, էջ 90 ա, բ, № 3411, էջ 90—91, № 1636, էջ 189 բ--192 և 2939, էջ 1025—1026։

[2] Իմիրզիայլյոց Ե. Շահազիզը հրատարակելով այդ տաղը № 2939 ձեռագրից, որը նախապես իրեն է պատկանել, կարծում է, որ տաղի հեղինակն է (նույն ձեռագրի գրիչ Բեֆեցի Տէր Մարտիրոս գպիր Ավետիքով քահանան «Ազգագրական հանդէս», 1901, Թիֆլիս, էջ 45)։ Բայց դա պարզ սխալ է, որովհետև այդ Բեֆեցի Մարտիրոսը ապրել է ԺԸ դարի երկրորդ կեսին և ձեռագիրը գրել 1794—1799 թվականներին Նոր-Նախիջևանի Նեսուեթա գյուղում։ Այնպես որ ժամանակով այնքան հեռու ընկած գրիչ Բեֆեցի Մարտիրոսին չի կարելի շփոթել ոչ ԺԷ դարի սկզբի Մարտիրոս տաղերգուների և ոչ էլ մեր պատրիարք բանաստեղծ Բեֆեցի Մարտիրոսի հետ։

[3] Առաջինը՝ ձեռագիր № 7709, գրված է 1620—1660-ական թվականներին, երկրորդը՝ ձեռագիր № 1636, գրված է ԺԸ դարում։

ԲԱՌԱՐԱՆ[1]

ԱՃԱՄ — պարսիկ — 94։
ԱՃԸԶ — հոգնություն, տկարություն, անօգի — տկարանալ, հոգնել — 103։
ԱՄԱՆ — փրկություն — 86։
ԱՇՃԸ — խոհարար — 101։
ԱՓԱԻԱՌ — աղբ, անմաքրություն, կեղտ — 125։
ԴԻՒԱՆ (տիւան) — դատ, դատաստան։ «Դիւան կանէ» — հաշիվ է պահանջում — 84։
ԵԱՂԻ — ըմբոստ, ապստամբ — 93։
ԵԱՆՂՈՒՆ — հրդեհ — 84։
ԵԱՓԱՆ — վայրի, ամայի, անբնակ տեղ — 114։
ԶԱՅ ԱՆԵԼ — ապարդյուն ծախսել, կորցնել, փչացնել — 102։
ԶԻՐԷ — որովհետև — 85։
ԷՏԷՓՍՈՒԶ — անպարկեշտ, սնամոթ, ժպիրհ — 96։
ԷՔՄԷՔՃԻ — հացավաճառ — 114։
ԸՌԶԱԿ — ապրանք, ինչք, ունեցվածք — 86։
ԸՐԱԽՈՒ (արաղ) — օղի — 105, 107։
ԹԱՄՈՒԶ — հուլիս — 133։
ԹԱՌԱ (թէրէ) — կանոն, խավարտ — 99։
ԹԱՌՀՈՒՆ — թարխուն — 99
ԹԱՌՓԱԶ — թառ նվագող (անարգական իմաստով), որոգայթ լարող — 126։
ԹԷԼՓԻՍՈՒԹԻՒՆ — ննդություն, խաբեբայություն, խորամանկություն — 93, 94։
ԹԷՄԻՆ (Թէյմին) — երաշխավորություն — 86, 114։
ԹԷՍԼԻՄ ԱՆԵԼ — հանձնել — 106

---

[1] Բառարանում տեղ են գտել ինչպես օտար, այնպես էլ գրաբարյան հազվադեպ գործածվող և անծանոթ բառերը։ Տրված են միայն բառերի այն նշանակությունները, որ ունեն ժողովածուի մեջ։

ԹՈՒԽՇՈՒ — թթու, աղացր, թթու դրած կաղամբ կամ այլ բանջարեղեն — 113։
ԻՆԱՏ ԱՆԵԼ — խռովել — 91։
ԼՕԽՄԱՅ (Լոգմա) — պատառ — 98։
ԽԱԽՔ ԼԻՆԵԼ — խայտառակվել — 103։
ԽԱՀՎԷԼԱԼԹԻ — նախաճաշ — 100, 101։
ԽԱՆ — իջևանատուն, պանդոկ, օթևան — 108։
ԽԱՊԱՐ — լուր, տեղեկություն. «խապար չէր» — տեղյակ չէր — 106։
ԽԱՐԱՊԱ — ավերակ — 110։
ԽԱՐԱՐ (ղարար) — բուրձ — 115։
ԾԵԹ — մանր — 114։
ԿԱՂՄԱՐ (կաղամար) — թանաքաման — 94։
ԿԱՇՏ — շրջել, պտտել — 136, 141։
ՀԱՁՐ — պատրաստի — 98։
ՀԱՑԻՖ ԱՆԵԼ — անարդար վարվել, ավաղ,, ափսոս — 90։
ՀԱՅՏՈՒՏ — եղուզակ, ավազակ, թափառական, դատարկասուն — 120։
ՀԱՐԱՄԶԱՏԱՅ — պոռնկորդի, անօրեն, անիրավ, խաբեբա — 96։
ՀՈՌՈՄ — հռոմեացի, լատինացի. ասում են հույներին, կաթոլիկներին — 104։
ՁԱՄԱԹ — բուռ, բանսարկու — 126։
ՂԱԹՐՃԻ — ջորեպան — 95։
ՂԱԼԱՅ — պղնձե աման — 107։
ՂԱԼԱՏ — սխալ, արատավոր — 91։
ՂԱԼԽԱՆ-ՊԱԼՉԽԻ — վահանաձուկ — 99։
ՂԱՄԱԶ — բուռ, բանսարկու — 121։
ՂԱՄԱՅ — փորոտի — 120։
ՂԱՄԲԱՐ — լամբար, լապտեր, ջահ — 120։
ՂԱՊԼՈՒ ՓԻԼԱՒ — հատուկ ամանի (ղաբլամայի) մեջ եփած փլավ — 99։
ՂԵՂԱՆ — հանգիստ — 120։
ՂՈՄՈՍ — եղկելի — 129։
ՂՈՇԱԿՔԱՐՇ — անծանոթ բառ — 126։
ՂՈՒՄՂՈՒՄԷ — աման, հատուկ ջրաման — 106։
ՂՈՒՐՊԱ — նվիրատվություն, օգուտ, եկամուտ — 84։
ՂՐՄԶԻ — կարմիր — 129։
ՂՈՒՌՈՒՇ — թուրքական դրամական միավոր — 94։
ՃԱԿԱՃԱՆ — սատրիկ իգասեր, պոռնիկ, վավաշոտ — 120։
ՃԱՄ — հատուկ մետաղից (ճամից) պատրաստած բաժակ — 133, 140։
ՃԵՌՈՏ — ախտավոր — 120։
ՃԷՆԿ — մարտ, կռիվ, պատերազմ — 86։

ՃՃՈՒՂԱԿԱՆ — ճղճղացող, ճչան; չափազանց — 121։
ՃՈՒՂԱՊ — պատասխան, տեղեկություն — 91, 98։
ՄԱԽՍՈՒՏ — (մահսուս) — նախանձոտ — 120։
ՄԱՀԱՆԱՅ — պատրվակ, սուտ պատճառ — 97։
ՄԱՌՕԼ — զամբյուղավորների կարգին պատկանող բույս, գործածում են իբրև համեմունք — 99։
ՄԱՐԵՕԼ — անզգամ, նենգավոր, խաբեբա — 108, 109։
ՄԷՋԱ (մեզէ) — գինու կամ օղու հետ ուտելիք, աղանդեր — 99, 139, 140։
ՄԷՋԷ ԱՆԵԼ — կատակ անել — 139։
ՄԷԽԱՆԱ — սրճարան — 89, 92։
ՄԷԽԱՆԱՃԻ — սրճարանատեր — 114։
ՄԷՀՔԷՄԷ — դատարան — 96։
ՄԷՃԼԻՍ — հավաքույթ, խնջույք — 136։
ՄԷՅԴԱՆ — հրապարակ — 86։
ՄԷՍՏԱՆԱՅ — հարբած, գինեմոլի նման — 133։
ՄԷՏԷԹ — օգնությո՜ւն, հասեք օգնությա՜ն — 98։
ՄԹՆՇԵՇ ԱՆԵԼ — ուրիշից թաքուն մի բան ուտել — 98։
ՄԻԼԼԱԹ — ազգ — 91։
ՄՇԽՈՒԼ — մտազբաղ, ինքնամփոփ — 128։
ՄՈՒՋԻ — վնասակար — 96։
ՄՈՒԼՀՈՒՏ — հերետիկոս — 92։
ՄՈՒՇԹԱԽ — փափագող, տենչող — 98։
ՄՈՒՍԱՖԻՐ (միսաֆիր) — հյուր, օտարական, ճանապարհորդ — 108։
ՄՐԴՈՒՋ — անարգ, անպիտան, ստոր — 121։
ՅՈՒՌԹԱԳՈՐԾ — կախարդ ?—126։
ՆԱԼԼԱԹ — անեծք, նզովք — 91, 96, 108, 109։
ՆԱՍՐԱՆԻ — նեստորական քրիստոնյա — 122։
ՆԻԷԹ — գիտավորություն, ցանկություն — 101։
ՆԻՍԱՖ (հավանաբար. ինսաֆ) — խիղճ, գութ — 99։
ՆՈՏՈՍ — հարավային քամի — 114։
ՇԱԽԱ — կատակ — 99։
ՇԱՂԻՂ — դիակ, լեշ — 122։
ՇԱՂՂԱԿԵՐ — գիշակեր, մսակեր, հում միս ուտող — 122։
ՇԱՂՓԱՂՓ — դատարկախոս, հիմար — 122։
ՇՄԱՍ — սարկավագ — 121։
ՇԱՐԱՊ — բույսերից պատրաստած ըմպելիք, որը գործածվում է որպես դեղ — 132։
ՇԵՇԽԱՆԱ — վեցանկյունի — 133։
ՇՄԱԹ — նեղ պատուհան եկեղեցու գմբեթի վրա, պատուհան — 133։
ՈՒՂՈՒՐ — հաջողություն, բախտ — 95։
ՈՒՄՈՒՏ — հույս — 110։

ՌՈՒՌՈՒԳԱ — զգեստ, հանդերձ — 95
ՉԱՄՈՒՌ — տիղմ, ցեխ — 95։
ՉԱՐՏԱԽ — վերնատուն, պատշգամբ, հովանոց — 139։
ՉԷՕԼ — անապատ, ամայի — 89, 110։
ՉՈՐԳԱ (ՇՕՐԳԱ, ՇՈՐՎԱ) — ապուր — 99։
ՊԱԶԻՐԿԱՆ — վաճառական — 86։
ՊԱԼԸԽ — ձուկ — 99։
ՊԱԼՄՈՒՄԻ — մեղրամոմ — 102։
ՊԱՂՉԱ — պարտեզ — 113։
ՊԷԶԱՐ — հոգնած, ձանձրացած, զզված — 91։
ՊԷԹԸՄԱԼՃԻ (ԲԵՅԹՈՒԼՄԱԼՃԻ) — անժառանգ վախճանվածների գույքը հարքունիս գրավող, պետականացնող, կոնֆիսկացիայի ենթարկող պաշտոնյա — 94։
ՊԷԼԱ — փորձանք, պատիժ — 91։
ՊԷՅԱՆ — հայտնի, ծանոթ — 105։
ՊԼԻԿ — արծաթյա կամ պղնձյա մանր դրամ — 86։
ՊՈՒՃԱԽ — անկյուն — 102։
ՊՕԼ — առատ, շատ — 110։
ՋԱՆՇԱՆԱՅ — դիվապաշտ, դիվանվեր — 123։
ՌԱՀ — ճանապարհ — 123։
ՌԱՀԱԿ — անզգամ — 123։
ՌԱՄՈԹ — տեսնել, տեսողություն — 123։
ՌԱՍԻՄ — գզիր. սուրհանդակ — 123, 127։
ՌԵՄԱԿԱԼ (Ռիմակալ) — ոխակալ — 123։
ՍԱՀԱԹ — ժամ, ժամացույց — 95, 102։
ՍԱՂ — ամբողջական — 86, 100։
ՍԱՉՈՒ — օժիտ, ընծա — 86։
ՍԱՊԶԻ — կանաչեղեն — 99։
ՍԱՎԱՇ — կռիվ, աղմուկ, աղաղակ — 90։
ՍԷՅՐԱՆ ԱՆԵԼ — զբոսնել, զվարճանալ — 138։
ՍԷՕՅԼԷՐ — ասում է, կասի — 115։
ՍՈՒԼՈՒՄԱՅ — ջրած, ջուր խառնած — 98։
ՎԱՏԱՅ ԴՆԵԼ — պայման կապել, պայմանավորվել — 115։
ՏԷՅԻ — իբր։ Ուտեմ տէյի — իբրև թե ուտեմ — 95։
ՏԷՐՏԼՈՒ — վշտահար — 115։
ՏԻՆԱ — առավել — 124։
ՏՕԼԱՊ — պահարան — 106։
ՐԱՄ — ժողով, երամ, խումբ, ջոկ — 124։
ՐԱՍԱՆ — բերող — 124։
ՐԱՍՏԱՆ — մանող, հյուսող, աճեցնող — 127։
ՐՈՏՈՂ — մաքրող, սրբող. այստեղ՝ փոխող իմաստով — 124։
ԻԻԻԹ — հյութ — 124։
ԻԻԻՆ — թույն — 124։

ՓԱԹՈՒՐ — գետ — 125։
ՓԱՂԱՂ (փաղաղել) — ուտել, լափել, գիշատել — 124։
ՓԱՂՓԻՆ — լույս, փայլ — 125։
ՓԱՉԱ — սրունք — 85։
ՓԱՐԱՔ — շուն — 124, 127։
ՓԱՓԱՍ — քահանա — 126։
ՓԷՆՃԻՐԱ — պատուհան — 114։
ՓԻԼԻՃ — հավի մի փոքր մեծացած ճուտ, վառեակ — 103։
ՓԻԾ — պիղծ — 125։
ՓԻՐ — առաջնորդ, հայր, պարագլուխ — 95։
ՔԱՌՔՈՒՏ — անծանոթ բառ — 126։
ՔԷՄԱ — քաակ — 87։
ՕԽԱՅ — ծանրության չափի միավոր (1280 դրամ) — 92, 98, 133։
ՕՉՏՈՂ — բաժանող, քանդող — 125։
ՖՐՏՈՒ — բանակ, ճամբար — 91։

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏ. ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
Отдел
ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
ФОН АН Арм.ССР

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՑԱՆԿ

էջ

Մարտիրոս Ղրիմեցի 5

Բնագրեր . . . .

1 Ցակոբ երիցուն էարնեցուն է 83
2 Սոֆիացի տէր Յունանին վերայ է ասացեալ ոտանաւորս . . 89
3 Դաւիթ երիցու գործեալ չարիքն է 93
4 Տէր Սիմէոն երիցուն է 97
5 Չիլայեցի երիցուն հաւի գովասանքն է 100
6 Սիլիստրեցի Ցակոբ երիցուն պարսաւանքն է 105
7 Ի վերայ Անեօլու տիրացուին 110
8 Ի վերայ Պուրղազու ԹՃԻԳ յունուարի ժէ-ին 111
9 Բանք ծաղրածուք գրեալ ի Մարտիրոս վարդապետէ առ բարեկամս իւր 113
10 Ղրմցի Թաթար Մարտիրոս վարդապետին շինած ոտանաւորն է 116
11 Արքանեակ չարին . . . .
12 Տաղ այրի երիցուն է . . . .
13 Տաղ ի Ղրիմեցի Մարտիրոս վարդապետէ ասացեալ յաղագս քաղաքին Ամասիու 131
14 Նորին Ղրմցի Մարտիրոս վարդապետին ասացեալ տաղ ուրախութեան 135
15 Գինին առնէ զբեզ ուրախ 136
16 (Տաղ բարեկենդանի) 138
17 Եւ գայս ոտանաւորքս է ի վերայ համ թասի գրելոյ 140
18 Պատմութիւն Ղրիմայ յերկրի, արարեալ Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ ոտանաւոր չափով 142
19 (Յիշատակարան) 153
20 Ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ շարադրեալ, որ ընդ Պետրոս վարդապետին Ագուլեցւոյ առարկութիւն արարին յաղագս թուոց 154

Ծանոթագրություններ 159
Բառարան 181

339-1959

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպված է	Պետք է լինի
7	20	ժէ	ժե
25	19—20	կազմեցաւ.	կազմեցաւ.
41	22	մի	ի
44	7	փեռեկտեցեն	փեռեկտիցեն
56	16	Անեալի	Անեօլի
65	3	ալլ	այլև
74	11	Բ-էց	Բ-ից
135	19	Թափօր	Թափուր

էջ 64-ի առաջատակի ծանոթությունը վերաբերում է էջ 61-ի տող 10-ին։

Վերատուգող սրբագրիչ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՎՖ 07940, պատվեր 777, հրատ. 1576, ԽԿԽ № 492

Հանձնված է արտադրության 8/VII 1958 թ.։
Ստորագրված է տպագրության 8/X 1958 թ.,
Թուղթ 60×92 1/16, Տպագր. 11 3/4 մամուլ, հրատ.
8,35 մամուլ, տիրաժ 2000։ Գինը կազմով 7 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան.
Երևան, Աբովյան 124

ՑԱՆԿ

20 Ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ շարադրեալ, որ ընդ Պետրոս վարդապետին Ագուլեցւոյ առարկութիւն արարին յաղագս Թուոց 154
Ծանոթագրություններ 159
Բառարան 181

ԱՐՏԱՇԵՍ ԱՂԱՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑԻ

Գլխ. խմբագիր՝ Հ. ԱՆԱՍՅԱՆ
Հրատ. խմբագիր՝ Տ. ԿԱՐԱԳԵՏՅԱՆ
Նկարչական ձևավորումը՝ Հ. ՍԱՆՈՅԱՆԻ
Տեխն. խմբագիր՝ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. ԶԱՔԱՐՅԱՆ

ՎՖ 07940, պատվեր 771, Հրատ. 1576, [illegible] № 492

Հանձնված է արտադրության 8/VII 1958 թ., ստորագրված է տպագրության 8/X 1958 թ., թուղթ $60 \times 92\,^1/_{16}$, Տպագր. $11\,^1/_4$ մամուլ, Հրատ. 8,25 մամուլ, տիրաժ 2000. Գինը կազմով 7 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան
Երևան, Աբովյան 124